14 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022 ՈՒՐԲԱԹ 37(5725)

Azg Աշխ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Իտալիայի Սենատն էլ ընտրեց աջ Իգնացիո Լա Ռուսային

Բնական է, որ գերմանական ԶԼՄ-ներն գերզգայուն են հետեւում Իտալիայի քաղաքական արդի իրադարձություններին: Երեկ հայտնի դարձավ, որ Սենատի նախագահ է ընտրվել 75-ամյա աջակողմյան Իգնացիո Լա Ռուսսան: Նրա հանդեպ գերմանացիների բացասական վերաբերմունքն արդեն ձեւավորվել էր, երբ քաղաքական գործիչն իր տանը հոյարտությամբ էր ցույց տվել Մուսսոլինիի արձանը, իսկ համավարակի ժամանակ զարմանք պատճառել, որ ձեռքով բարեւելու փոխարեն ունի իր առաջարկը՝ «հռոմեական ողջույնը»՝ Saluto romano-ն: Ուսագլխից թեւն ուղիղ պարզած, ձիգ այս նշանը տեսել ենք հին ֆիլմերում, իսկ 2-րդ աշխարհամարտից հետո՝ ֆաշիզմի մասին ֆիլմերում: Եւ, ավաղ, տեսնելու ենք հիմա: Իտալիայում նախագահի պաշտոնից հետո երկրորդ բարձրաստիճան պաշտոնը ստանձնած Լա Ռուսսան հարում է ծայրահեղ աջ Fratelli d'Italia կուսակցությանը: Նույն կուսակցության ներկայացուցիչ Ջիորջիա Մելոնին մի քանի օրից կստանձնի Իտալիայի վարչապետի պաշտոնը: Այս երկրում մեզ առավել հետաքրքրող դրվագներին դեռ կանդրադառնանք:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ, Գերմանիա

ՕՐԵՐԻ ՀՇԵՏ

Մեկ օրինակ, թե ովքե՞ր սադրեցին պատերազմը մեր դեմ

Թեեւ ուշացումով, սակայն մեր ներկա համարի 3-րդ էջում թարգմանաբար մատուցվող՝ «Սունունու ընտանիքը սատարում է Ադրբեջանին՝ Ղարաբաղում հանքարդյունաբերություն զարգացնելով» վերնագրով հոդվածը չի կորցրել իր այժմեականությունը: Հեղինակը՝ **Արամ Արքունը**, Բոստոնի մեր քույր հրատարակության՝ Armenian Mirror-Spectator անգլերեն շաբաթաթերթի գործադիր խմբագիրն է: Հոդվածը նա հրապարակել է շաբաթաթերթի 2021 թ. հունիսի 4-ի համարում, միաժամանակ հիշեցնելով, որ Mirror-ը դեռեւս նախորդ տարվա նոյեմբերին, այսինքն 44-օրյա պատերազմից անմիջապես հետո, տեղեկությունը քաղելով ամերիկյան բաց աղբյուրներից՝ ահազանգ է հնչեցրել, որ Մ. Նահանգների քաղաքական եւ արդյունաբերական ասպարեզներում քաջ հայտնի Սունունու ընտանիքը, գլխավորությամբ Նյու Հեմփշայրի նախկին նահանգապետ եւ, ուշադրությո՛ւն, նախկին նախագահ Ջորջ Բուշ կրտսերի աշխատակազմի ղեկավար Ջոն Սունունուի (John Henry Sununu), գլխավոր բաժնետերերից է Անգլո-ասիական հանքարդյունաբերական ընկերության (Anglo Asian Mining Company), որը 2008 թ.ից ի վեր հատուկ շահագրգռվածություն ունի Ադրբեջանի իրանամերձ շրջաններում, ընդհուպ՝ այդ ժամանակ եւ մինչեւ պատերազմը հայկական զինուժի վերահսկողության տակ գտնվող Ջանգելանի շրջանում ոսկու, պղնձի ու մոլիբդենի կորզման հանքարդյունաբերական ծրագրերի նկատմամբ:

Ամենաուշագրավն այն է, որ հիշյալ ընկերությունը հորատման աշխատանքներն սկսել է Ջանգելանի շրջանում ռազմական ակտիվ գործողությունների դադարելուց անմիջապես հետո, 2020 թ. նոյեմբերին, ըստ երեւույթին՝ նախապե՛ս մշակված աշխատանքային ծրագրով: Եվ եթե նկատի ունենանք, որ հանքահորեր բացելը մի քանի հարկանի տուն կառուցելու պես գործ չէ, այլ՝ ենթադրում է բազմաստեպ ու ծանր տեխնիկայի կուտակում եւ նախապատրաստական երկարատեւ աշխատանք, նշանակում է, որ ընկերության գործադիր տնօրենը, Ջոն Սունունուն, 44-օրյա պատերազմը դեռեւս չավարտած գիտեր մոտալուտ հրադադարի հաստատման մասին, իսկ եթե դավադրական տեսանկյունից մոտենանք հարցին՝ անտեղի չի լինի ենթադրել, որ ոչ թե ընթացքում, այլ՝ պատերազմի սկսելուց դեռ շատ առաջ էին նա եւ նրա ընկերությունը տեղյակ պատերազմի ելքի մասին եւ, միգուցե, նույնիսկ նոպաստել էին նման ելքին, օրինակ, գործակալական-դավաճանական ցանցի միջոցով խանգարել արեւելյան ճակատի մեր ամրակուռ պաշտպանական գծի 8,5 կիլոմետրանոց պատռվածքը փակելու գործողությունը, որի մասին ռազմական գործի հայ եւ օտարազգի մասնագետները բազմիցս են վկայել:

Էլ ավելի խորանալով նույն տեսության մեջ՝ իրավունք չունե՞նք հարց տալու, թե ամերիկյան գաղտնի ծառայությունները եւ նրանց արտերկրյա գործընկերները, առաջին հերթին՝ իսրայելական Մոսադը, չէի՞ն տիրապետում այդ եւ շատ ավելի կարեւոր տեղեկությունների, ավելին՝ չէի՞ն սադրում մեր, Իրանի եւ Ռուսաստանի դեմ ուղղված դավադրությունը, որտեղ Արցախը Ադրբեջանին թողնված խաղադրույքն էր, իսկ այսպես կոչված միջանցքն ու Արաքսի լայն բացված սահմանային գոտին՝ գլխավոր մրցանակը հակահրանյան ուժերի, որից օգտվում է նաեւ, ինչպես երեւում է Սունունու ընտանիքի նախաձեռնություններից, անգլո-ամերիկյան բիզնեսը: Ահա՛ թե ինչու, մեր թերթի նախորդ համարում Իսրայելի, Թուրքիայի եւ Սաուդական Արաբիայի ռազմական գերատեսչությունների պետերի վերջերս Ադրբեջան կատարած այցը որակել էինք «Բաքու՝ հակահրանյան կոալիցիայի բաստիոն» բնորոշումով:

Իրերի այս կացության մեջ ավելի քան տեղին է կրկին հարց տալ՝ իսկ ի՞նչ է արել եւ անում մեր Ազգային անվտանգության ծառայությունը, հատկապես հետախուզությունն ու հակահետախուզությունը: Ի՞նչ են արել եւ անում տարբեր երկրներում ծառայող մեր դիվանագետները, նաեւ՝ մեր որոշ դեսպանատներում ծառայության կոչված Արցախի՛ ներկայացուցիչները: Պատասխանը լռությունն է, խորհրդապահության շղարշով ծածկած լռությունը:

Վերջերս, ՀՀ հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Էդմոն Մարուքյանը հանդես եկավ Սփյուռքին ուղղված հանձնարարությամբ: Ըստ նրան՝ 136 օտարերկրյա բիզնես կազմակերպություններ ներդրումներ են կատարում Ադրբեջանում եւ հարստացնում մեզ թշնամի այդ երկրի բյուջեն: Նրա թելադրանքը սփյուռքահայ գաղթօջախներին այն էր, որ տեղերում քաղաքացիական ու քարոզչական պայքար մղեն այդ «սեւ ցուցակի» անդամ կազմակերպությունների դեմ, որպեսզի դադարեցնեն իրենց բիզնես գործունեությունը Ադրբեջանում: Ուշացած, բայց ուշագրավ առաջադրանք, որը սակայն իրագործելի չէ: Պատճառները չեմ կարող ներկայացնել այստեղ, տեղի սղության պատճառով: Բայց չեմ կարող մեկ հարց չտալ պրն Մարուքյանին. իսկ ո՞ւր է պետական այն կառույցը, որը պիտի ուղղորդի սփյուռքահայերին, այնպիսին՝ ինչպես Իսրայելն ունի համայն հրեական աշխարհին ծառայող: Առանց նման պետական ծառայության անիմաստ է որեւէ հանձնարարություն տալ որեւէ սփյուռքահայի:

Իսկ ինչ վերաբերում է Սունունու ընտանիքին ու նրա ադրբեջանամետ գործունեությանը, հիշեցնենք, որ երկու տարի առաջ ամերիկահայ որոշ թերթեր, ինչպես Mirror-ը, աղմուկ էին բարձրացրել Ջոն Սունունուի դեմ՝ ամոթանք տալով նրան, որ հայոց արյան գնով բիզնես է անում հակաժողովրդավարական եւ ադրբեջանասեր Ալիեւի հետ: Մինչդեռ Հայաստանի կառավարությունից ոչ մի ծպտուն:

Եվ հարցը հնչում է ինքնաբերաբար՝ ունե՞նք պետություն:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Փաշինյանի հետ հանդիպումը Էրդողանին վարակել է «անկեղծության» ախտանիշով

Նա անկեղծորեն մասնակցել էր 44-օրյա պատերազմին, հիմա էլ Ադրբեջանի հետ հաշտություն է պայմանավորում Թուրքիայի միջնորդությամբ

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Թուրքագետ

Հոկտեմբերի 6-ին Պրահայում Եվրոպական համայնքի գագաթաժողովի շրջանակում հանդիպեցին ՀՀ վարչապետ **Նիկոլ Փաշինյանն** ու Թուրքիայի նախագահ **Ռեջեփ Թայիփ Էրդողանը**: Հանդիպումը լայն արձագանք գտավ Հայաստանում, Թուրքիայում, Ռուսաստանում, ինչու չէ՝ նաեւ արեւմտյան երկրներում, տարբնույթ մեկնաբանություններում: Սակայն մինչ այդ Էրդողանի, Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ **Իլհամ Ալիեւի**, Ֆրանսիայի նախագահ **Էմանուել Մակրոնի** եւ Եվրոպական խորհրդի նախագահ **Շառլ Միշելի** մասնակցությանբ տեղի էր ունեցել քառակողմ հանդիպում, որտեղ քննարկվել էր հայ-ադրբեջանական սահմանին «քաղաքացիական առաքելություն» տեղակայելու Եվրոպական միության առաջարկը:

ԱՄՆ-ը, ի դեմս պետքարտուղար **Էնթոնի Բլինքենի**, եւ անշուշտ ԵՄ-ի երկրները ողջունել են դա, իսկ Ռուսաստանի արտգործնախարարության ներկայացուցիչ **Մարիա Զախարովան**՝ քննադատել, պատճառաբանելով. «Բաքվի ու Երեւանի հաշտեցման, տարածաշրջանում մնայուն խաղաղության եւ երկարաժամկետ կայունության հաստատման միակ բանալին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների եռակողմ հայտարարությունների լիարժեք իրականացումն է»: Թվում է, թե առաջարկին Մոսկվայի առարկությունն Հայաստանի տեսանկյունից ավելի է կարեւորում քառակողմ այդ հանդիպումը, քան Էրդողանի հետ Փաշինյանինն էր:

Երկկողմ հանդիպումից առաջ այդ հարցը մի քանի կցկտուր տեղեկություններով շրջանցող թուրքական լրատվամիջոցները հանդիպման ավարտին այն լայնորեն լուսաբանեցին: Նույնը վերաբերում է ռուսականներին: Գալով հայկական լրատվամիջոցներին, ըստ երեւույթին չսպասելով անհրաժեշտ տեղեկատվություն իշխանություններից, չկարողացան պատշաճ մակարդակով լուսաբանել: Մինչդեռ նախատեսվող հանդիպմանը, բացի մեր լրատվամիջոցներից, ակտիվորեն անդրադառնում էին նաեւ իշխանության բարձրագույն ներկայացուցիչները, այն էլ ամենաբարձր մակարդակով: Ստեղծվել էր այնպիսի տպավորություն, թե Փաշինյան-Էրդողան հանդիպման շահագրգիռ կողմը հենց Հայաստանն է: Հանդիպումից հետո, սակայն, պատկերը փոխվեց:

⇨6

Չի՞ սպառվում ԳԴՀ արտգործնախարար Բերբոքին հայերիս վստահությունը

Ինչո՞ւ ՀՀ ԱԳՆ-ն հարկ չի համարում պատասխանել «Ազգ»ի հարցերին

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

Հոկտեմբերի 11-ին ԳԴՀ արտգործնախարար **Աննալենա Բերբոքը** Գերմանիայի ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդում(ՄԻԽ) վերընտրվելու առիթով հեռեւյալն էր ընդգծել՝ «այն կատարյալ հաստատություն չէ, բայց կարեւոր գործիքներից է, որ մեզ՝ միջազգային հանրության ներկայացուցիչներիս հնարավորություն է տալիս պայքարել մարդու իրավունքների հրատապ խախտումների դեմ: Այն հնարավորություն է տալիս մեզ եւ մեր գործընկերներին ձայն բարձրացնել նրանց համար, որ այդ սեղանի շուրջ նստած չեն: Օրինակ՝ այն համարձակ կանանց ու աղջիկների, որ Իրանում կյանքի գնով պայքարում են իրենց ազատությունների եւ իրավունքների համար: Ժնեւում կարող են աղավինել Գերմանիայի ձայնին: Այն, որ 167 երկիր 3 տարով մեզ վերընտրել է, վստահության ապացույց է, հուսախաբ չենք անի»:

⇨8

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

Պատուհաս

կամ՝ սուրիահայերու վարշակալած տուները՝ ռուսերուն

Ես դեռ չեմ հասկցած, թէ ինչո՞ւ Ռուս-Ուքրաինական պատերազմի ընթացքին ռուսերը Հայաստան թափեցան, իրենց բնակավայրերը անտանո՞վ էին, Հայաստանը աւելի աղահով երկի՞ր էր: Ի՞նչ գիտնամ, կարեւորն այն է, որ եկան, ըսին հարիւրհազարով, մասնաւորաբար անոնց բարեկեցիկ վիճակ ունեցող ընտանիքները, յատկապէս երիտասարդ զոյգեր, ու մորեխներու նման յարձակեցան վարձու բնակարաններուն վրայ ու վճարեցին, որքան որ պահանջեցին այդ բնակարաններուն տէրերը: Հաւանաբար Ռուսաստանի վարձերուն հետ բաղդատած՝ մերինները շատ աւելի մատչելի են, հակառակ որ «պիզնէսի» հոսը առած մեր տանտէրերը, արդէն իւղոց յաձախորդներուն գրպաններուն համեմատ վարձերը բարձրացուցած էին, այնքան մը, որ Երեւանի մէջ վարձու տուն գտնելը անկարելի դարձաւ:

Մտածեցինք՝ այս մարդիկը Երեւանի մէջ ի՞նչ պիտի ափխասին, որ կարենան ապրիլ, թէ՞ բոլորն ալ հարուստ են ու ափխատելու կարիք չունին: Յայտնի դարձաւ, որ եկողներուն մեծամասնութիւնը երիտասարդ զոյգեր են եւ իրենց գործը իրենց հետ են բերած՝ ո՛չ խանութ, ո՛չ գործատեղի, ո՛չ մեքենայ, այլ ընդամէնը համակարգիչ մը, որուն միջոցով ալ կրնան իրենց գործերը կատարել ափխարհի ո՛ր մասն ալ բնակին:

Եկան, Հայաստանցիները ուրախացան, ոչ այնքան ռուսատէր ըլլալնուն, այլ որովհետեւ իրենց հացին քիչ մը իւղ խուեցաւ. ոչ միայն իւղ, այլեւ մեղր, ռուբլի ու տոլար... Սակայն տանտէրերը երբ իրարու նայելով ու իրարու նախանձելով սուրիահայ վարձուորներուն ոտքին տակ օձառ դնելու ելան, որպէսզի անոնց պարպած բնակարանները եռապատիկ, նոյնիսկ քառապատիկ վարձքով ռուսերուն տան, արդէն հարցը լրջօրէն մտահոգիչ դարձաւ եւ շարունակուեցաւ պատուհասի վերածուիլ, երբ մայր հայրենիք տեղափոխուած սուրիահայերը ակամայ իրենց վարձած բնակարանները պարպելով փողոց մնացին, կամ ալ ազգականի մը տան մէջ պատսպարուեցան ժամանակաւորապէս:

Սուրիահայերէն ոմանք սեփական բնակարաններ ունին, սակայն անոնցմէ մեծ տոկոս մը կայ, որ եկած օրէն վարձ կը վճարէ՛ նոյնիսկ բերնէն կտրելով, որպէսզի ամբողջ ամսուան մը կենցաղային ծախսերուն չափ եղող տան վարձը վճարէ:

Գիտենք, որ ամէն մարդ ազատ է իր ունեցածը ուզած գինով վաճառելու կամ վարձով տալու, սակայն երբ հարցը փողոց մնալուն կը հասնի, կառավարութիւնը կամ գոնէ քաղաքապետարանը ձեւով մը չե՞ն կրնար միջամտել, կամ օրէնք մշակել ու սահման դնել այս սանձարձակ սղաձին:

Հասկցանք, որ ամերիկեան տոլարը բաւական կորսնցուց իր արժէքէն, իսկ վարձերը, նոյնիսկ եթէ տեղական դրամով կը վճարեն, տանտէրերը տոլարով կը հաշուեն ու աւելին կը պահանջեն: Այսքանը գուցէ արդարանալի է, վարձին վրայ 20% մը կ՚աւելցնես, եւ հարցը կը փակուի: Ո՛չ, երանի այդպիսով փակուէր, ի՞նչ 20 %, ատոր խօսքը չ ըլլար, ռուսերը պահանջուածը կը վճարեն, եւ վարձերը կը մագլցին, մինչեւ 300%... Ես անձնապէս գիտեմ բնակարան մը, որուն վարձքը ամսական 500 տոլար էր, բայց ռուս ընտանիքի մը 2000-ով տրուեցաւ: Ճիշդ է որ այդ եկուորները մնայուն չեն, շրջան մը եօթ պիտի վերադառնան, երբ վերջ գտնէ պատերազմը (որ կարծես թէ վերջանալիք չունի)... Այն ատեն ի՞նչ պիտի ընեն պարպուած տուներուն տէրերը, իրենց նախկին վարձակալները ե՞տ պիտի կանչեն: Հարկ կա՞յ յիշեցնելու, թէ խաւարի տարիներուն հալէպահայերը ինչպէս իրենց դռները բացին հայաստանցիներուն առջեւ: Շահադիտական մօտեցումէն զատ, կայ մարդկայնութիւնը, խիղճը, բարութիւնը:

Երեւանի մէջ իմ ապրած ութը տարիներուս ընթացքին նկատեցի, որ այստեղացիները «կարձատես» են, գործարքի պարագային միայն ներկան կը մտածեն, հեռուն չեն տեսներ, ապագայի մասին չեն մտահոգուիր. այսինքն՝ չեն փորձեր այնպէս մը գործել, որ երկար տարիներ «ծորակը բաց մնայ». այսինքն յաձախորդին հետ այնպէս վարուիլ, որ կարելի ըլլայ տարիներով օգտուիլ անկէ: Դժբախտաբար շատերու մօտ հետեւալն է կեցուածքը, «Այսօր շահագործեմ, շահիմ, վաղը ինչ ուզէ թող ըլլայ»:

Այս պակերը շատ յստակ է խանութ, վաճառատուներու պարագային: Կը տեսնես սնունդի կէս մը բացուեցաւ, նոր յարդարումով, նոր կահաւորումով ու ... ամիս մը, կամ երկու ամիս եօթ կը փակուի ու դարձեալ կը փակցուի «Տրվում է վարձով» ազդագիրը: Կը հարցնես թէ ինչո՞ւ փակուեցաւ, պատասխանը պարզ է՝ վարձքը շատ բարձր է: Ու ամիսներով պարապ կը մնայ, քանի անոր տէրը անզիջող կերպով վարձքը չի պակսեցներ: Հիմա, ո՞րն է շահաւորը, տարին մի քանի ամիս բարձր վարձքո՞վ տալ տարածքը, թէ՞ նուազ վարձքով ամբողջ տարին վարձակալ ունենալ:

Հայաստանցին կ՚ըսէ՝ «Ի՞նչ ես կորցրել, ի՞նչ ես մանգալիս»:

Կինն ու կյանքը, մազափնջի արգելանքը

Բողոքի ցույցե՞ր, թե՞ խռովություններ Իրանում

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագէտ

22-ամյա քրդուհի Մահսա Ամինիի մահով պայմանավորված «Կին, Կյանք, Ազատություն» նշանաբանով 2022 թվականի սեպտեմբերի 16-ից Իրանի տարբեր նահանգներում անցկացվող բողոքի ակցիաները, կամ ԻԻՀ իշխանությունների բնորոշմամբ՝ դրսից հրահրվող խռովությունները, 2009 թվականի Իրանի խնդրահարույց նախագահական ընտրություններ-ի հետեւանքը համարվող իրադարձություններից տարբերվում են իրենց ընդգրկվածությամբ ու միջազգային հնչեղությամբ: Ըստ միջազգային լրատվամիջոցների, ի համերաշխություն Իրանում անցկացվող բողոքի ակցիաների, աշխարհի ավելի քան 150 քաղաքներում տեղի ունեցած հանրահավաքների ու այլ կարգի քաղաքական միջոցառումների ժամանակ կանայք ցուցադրաբար կտրում էին սեփական մազափնջերն ու դրանով արտահայտում իրենց միաբանությունը Իրանում ապրող կանանց նկատմամբ:

Որոշ եվրոպական երկրների մայրաքաղաքներում հավատարմագրված Իրանի դեսպաններ հրավիրվեցին դեսպանընկալ պետությունների արտաքին գործերի նախարարություններ՝ Իրանում մարդու իրավունքների խախտման դեպքերի կապակցությամբ պարզաբանումներ տալու համար: Մի քանի երկրներից իրենց քաղաքացիներին ուղղված կոչեր հնչեցին՝ չճամփորդել Իրան, կամ Իրանում գտնվելու պարագայում, անհապաղ լքել երկիրը:

Մի շարք երկրների ու միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, քաղաքական ու հանրային դեմքեր ԻԻՀ իշխանություններին ուղղված կոչերով պահանջեցին վերջ դնել ցուցարարների նկատմամբ գործադրվող ճնշումներին...

Իրանում սովորական առօրյայի վերածված այս օրերի բողոքի ցույցերը «Կանաչների շարժում» անվանումն ստացած 2009 թվականի քաղաքական անցքերից տարբերվում են նաեւ շարժման լիդերների բացակայությամբ: Եթե «Կանաչների շարժման» դեպքում, ի դեմս 2009 թ. նախագահական ընտրություններում պարտություն կրած **Քառուբիի** ու **Միր-Հոսեյն Մուսավիի**, իշխանությունները գործ ունեին խոցելի, հետեւաբար նաեւ մեկուսացման ենթակա լիդերների հետ, ապա 2022 թվականի բողոքի զանգվածային ցույցերի կազմակերպումը թույլ չտալու համար իշխանությունների տեսադաշտում չկան կոնկրետ անձիք:

Կանանց ազատության համար սկիզբ առած այս շարժումը նախորդ ներքաղաքական խմորումներից տարբերվում է նաեւ ժողովրդի ու իշխանությունների միջեւ գոյացած անվստահության վիհով, որն ահագնանում ու խորանում է: Որքան էլ որ Իրանի իշխանությունները ներկայիս իրադարձությունների մեղքը բարդելու լինեն օտար ուժերի վրա, միեւնույն է, նրանք չեն կարող չընդունել այն իրողությունը, որ ժողովրդի դժգոհությամբ պայմանավորված ներկայիս խառնակ իրավիճակը օժտված է երկրի առօրյան քաոսի վերածելու բոլոր նախադրյալներով: Հարկ է նշել, որ ժողովրդի դժգոհության նախանշաններն իրենց զգացնել էին տալիս դեռեւս նախորդ ժամանակահատվածներում, որոնց մասին պատկան գերատեսչությունների կողմից նույնիսկ ներկայացվել են նախազգուշացնող համապատասխան զեկույցներ:

Առայժմ բավարար չեն կարող համարվել իսլամական հանդերձանքին վերաբերող նորմերը կարգավորելու նպատակով «Բարի արարքների քաջալերում եւ չարիքի մերժում» կոչվող Իրանի իսլամական հեղափոխությունից հետո ձեւավորված կառույցի միջոցառումները: Օրինակ, այդ կառույցի ղեկավար **Գոլփայեգանիի** օրերս արտահայտած կարծիքով, եթե իսլամական հանդերձանքին չհամապատասխանող կանանց տեղափոխելու համար տախտակներ նշանակվեն, ապա 50 տոկոսով կնվազի հիջաբը մերժող կանանց թիվը: Հիջաբը մերժող կանանց դեմ պայքարելու մեթոդներից մեկն էլ, ըստ նշված կառույցի, հիջաբի համար օգտագործվող որակյալ սեւ կտորի գների սուբսիդավորումն է:

Հստակ է, որ տախտակներին տուգանելով, կամ բողոքավոր կանանց անվճար սեւ կտոր տրամադրելով, ավելի արմատական թվացող քայլերով անգամ հնարավոր չէ սաստել այլեւս բռնությունների վախը թոթափած քաղաքացիներին:

Անորոշ է սակայն, թե ներկայիս աշխարհաքաղաքական վեկտորների ճշգրտման ու միջբեւեռային հավասարակշռությունների հաստատման բարդ ժամանակաշրջանում Իրանում տեղի ունեցող ցնցումների պատկերը որքանո՞վ կարող է համեմատվել որոշակի արժեքների ու նորմերի վերանայմանը հանգեցրած 1979 թվականի Իրանի հեղափոխական շարժման տրամաբանության հետ:

Անկախ նրանից, թե ԻԻՀ իշխանությունները իսլամական հեղափոխության սահմանած արժեքների պահպանման պայմանով երկրի ներքաղաքական կյանքին սովորական ընթացք հաղորդելու համար ինչպիսի կանխարգելիչ քայլերի կդիմեն, կամ սահմանած սեփական չափորոշիչներից հարկադրաբար ինչպիսի նահանջ կարձանագրեն, միեւնույն է՝ Իրանի պատմության մեջ 2022 թվականի սեպտեմբերի 16-ը նշագրվելու է որպես շրջադարձային օր:

«Պատմական» հանդիպման արդյունքը՝ մեկ ասուլիս, մեկ հարցազրույց ու ոչ ավելին

Հանրապետության առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը թեեւ վստահ է, որ ՀՀ նախկին նախագահներն ու կաթողիկոսը կամ զույգ կաթողիկոսները նորից նույն սեղանի շուրջը նստելու որեւէ շանս չունեն (գոնե այս փուլում), բայցեւ շտապում է շեշտել՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի ջանքերով ու նախաձեռնությամբ Հայաստանի ու Արցախի նախկին նախագահների վեցակողմ հանդիպումը պատմական կարելի է որակել: Բացատրում է՝ հանդիպումը կարեւորվեց նրանով, որ երկար տարիների ընդմիջումից հետո Հայաստանում քաղաքական բանավեճ ծավալվեց, քաղաքական գործիչները միմյանց հետ երկխոսեցին քաղաքական տրամաբանության կոնտեքստում:

«Պատմական» հանդիպմանը կամ քաղաքական երկխոսությանը, ցավոք, միմյանց թիրախավորելու գործընթացը հաջորդեց: Հայաստանի ու Արցախի ճակատագրով մտահոգ մարդիկ, որ մի սեղանի շուրջ էին հավաքվել իրենց իսկ փոխանցմամբ՝ երկրի օրհասական վիճակից ելնելով, հանդիպումից հետո սկսեցին քննարկել, թե ով ինչ է խոսել, ինչ է առաջարկել հանդիպման ժամանակ եւ այլն, եւ այլն: Ավելին՝ փակ հանդիպման բաց դրվագները ենթադրելու տեղիք տվեցին, որ անգամ նախկին նախագահների ասածները որոշ կետերում միմյանց հետ չեն հատվում: Իհարկե, անգամ չենք էլ ուզում մտածել, որ իսկապես Հայաստանի համար ճակատագրական այս պահին նրանցից ամեն մեկը փրկչական դափնին հենց իր գլխին դնելու խնդիր ունի, բայց համադրելով ու իրար կողքի դնելով նախագահների հայտարարություններն ու միմյանց նկատմամբ ցուցաբերած ոչ սոլիդար կեցվածքը, այնուամենայնիվ, կարող ենք նման եզրահանգման գալ: Իհարկե, թող ներողամիտ գտնվեն պարոնայք նախկինները, բայց քանի՞ գրոշ արժեր «պատմական» այդ հանդիպումը, եթե դրանից հետո ՀՀ փաստացի ղեկավար **Նիկոլ Փաշինյանն** էլ ավելի ուժգին խանդավառությամբ է խոսում այն մասին, որ թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի ճակատագրերի խեղման ու մեր այսօրվա համար պատասխանատու ու մեղավոր են «նախկինները» միմիայն: Իսկ նրա այդ մտքերին նախագահներից եւ որեւէ մեկը խիստ ու վերջակետ դնող պատասխան չի տալիս՝ հասարակության մոտ էլ ավելի ամրապնդելով տեսակետը, թե «նախկիններն են մեղավոր»:

Հետմանայնդեպս, արձանագրենք՝ կաթողիկոսի եւ նախագահների հանդիպումից անցել է 2 շաբաթ, իսկ դրա արդյունքը սոսկ մեկ հարցազրույցն ու մեկ ասուլիսն է:

ՄԵՂՍԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Սունունու ընտանիքը սատարում է Ադրբեջանին Ղարաբաղում հանքարդյունաբերություն զարգացնելով

ԱՐԱՄ ԱՐՔՈՒՆ

Քոստոն

Ինչպես «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր»ն էր հաղորդել անցյալ տարվա նոյեմբերին, Անգլո-ասիական հանքարդյունաբերության ընկերությունը (Anglo Asian Mining Company, Նյու Հեմփշայր, ԱՄՆ), որտեղ Հանրապետական խաղաքաղաքական **Ջոն Հենրի Սունունուն**, Նյու Հեմփշայրի կառավարիչ **Քրիս Սունունու** հայրը, երկրորդ մեծագույն բաժնետերն է, մտադիր է շարունակել ոսկու հանքարդյունաբերման աշխատանքները նախկինում հայկական զորքերի վերահսկողության տակ գտնվող Զանգելանի շրջանում եւ երկու այլ տարածքներում:

Նախկինում՝ նախագահ Ջորջ Բուշ ավագի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Ջոն Սունունուն այդ ընկերությունում ուներ 9,.8 տոկոսի չափով բաժնետոմսեր: 2020-ի Արցախյան պատերազմի ավարտին նրա ընտանիքը ավելացրեց ներգրավվածությունը այդ ընկերությունում, երբ այդ տարվա դեկտեմբերին որպես ոչ գործադիր տնօրեն **Մայքլ Սունունուն**, Ջոնի որդին, ընդունվեց ընկերության վարչության անդամ: Մայքլը հիմնադիր կառավարիչն է «Sununu Enterprises» եւ «Sununu Holdings» մասնաճյուղերի:

Անգլո-ասիական հանքարդյունաբերությանը նախորդող ընկերությունը, որի ժամանակավոր գործադիր տնօրենն էր **Ռեզա Վազիրին**, ժամանակին, 1997-ին, Ադրբեջանի հետ 6 հանքերի շահագործման իրավունք ձեռք բերելու համաձայնագիր էր կնքել: Վեց հանքերից 3-ը գտնվում էին Հայաստանի վերահսկողության տակ: Որպես հետեւանք Արցախյան վերջին պատերազմի՝ երկուսն այժմ ամբողջովին անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ: Երրորդը՝ Սոթքը (Սոյուդլուն), գտնվում է Հայաստանի եւ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Քելբաջարի սահմանում:

Ընկերության 2021-ի ապրիլի 13-ի զեկույցում Վազիրին նշում է. «Զանգելանի շրջանում, Վեջնալի [Կովսական] պայմանագրի տեղամաս կատարած մեր այցելության ժամանակ հայտնաբերեցինք բարձրորակ հանքանյութերի պաշարներ եւ այժմ քննարկում ենք դրանք Գեսաբեկ տեղափոխելու եւ մշակելու հնարավորությունները»: Նույն տարվա մայիսի 20-ին գրված մեկ այլ զեկույցում կարդում ենք. «Սակայն, հաշվի առնելով ապահովության եւ անվտանգության մտահոգությունները առայժմ Վեջնալի եւ այլ տարածքներ հասնելու հնարավորությունները մեզ՝ ընկերության անձնակազմի համար մնում են անհասանելի: Դրանց վերջնական կարգավիճակի հարցը շարունակում է քննարկվել Ադրբեջանի կառավարության կողմից»:

Ջոն Սունունուն եւ Իլհամ Ալիեւը Վաշինգտոնում, 2016 թ. մարտին: (Լուսանկարը՝ trend.az-ի)

Անգլո-ասիական հանքարդյունաբերական ընկերությունը աչք ունի նաեւ Քաշենի մոլիբդենի եւ պղնձի պաշարների (Հյուսիսային Մարտակերտ) վրա: Այդ տարածքը այժմ գտնվում է ռուսական խաղաղապահ զորքերի վերահսկողության ներքո: Ընկերության կայքէջում նշվում է. «Մեր Քիզլբուլագ (Մարտակերտ) հասնելը կախված է, թե ինչ վերջնական կարգավիճակ կստանա Լեռնային Ղարաբաղը»:

Մայիսի 20-ին գրված զեկույցում ընկերության ոչ գործադիր տնօրեն **Խուրով Զամանին** եզրակացնում է. «Նախկինում Ղարաբաղում եւ գրավյալ տարածքներում գտնվող երեք պայմանագրային տարածքների վերականգնումը ընկերության առջեւ լայն հնարավորություններ է բացում: Այդ պայմանագրային տարածքները զբաղեցնում են ընդհանուր առմամբ 900 քառ.կմ եւ հարուստ են հանքանյութերով, որոնք ունեն հետազոտության բացառիկ հնարավորություններ: Արդյունաբերությունը բաշխելու մեր պայմանագիրը լավ հիմքերի վրա է դրված եւ հենց որ տարածքները մեզ համար հասանելի դառնան, մենք «զրո տարվանից» կսկսենք յուրաքանչյուր տարածքի շահագործման աշխատանքները: Քաղաքական զարգացումները դեռ ընթացքի մեջ են, եւ ընկերությունը ուշի ուշով հետեւում է իրադարձություններին: Ադրբեջանի կառավարությունը սկսել է ենթակառուցվածքների (ճանապարհների, երկաթգծերի եւ օդանավակայանների) շինարարությունը այդ վայրերում: Տեղանքի զարգացումը կսկսվի անմիջապես որ ընկերությունը, համաձայն իր արդյունաբերության բաշխման պայմանագրի (ԱԲՊ), համապատասխան ազդանշան ստանա ԵԱՀԿ-ից (կամ միջազգային այլ կազմակերպությունից, որ նախկինում գրավվյալ տարածքները ազատագրված են ճանաչված եւ անվտանգ են ընկերության համար»:

Ադրբեջանի կառավարությունը փաստորեն, վերոնշյալ ԱԲՊ-ի դրույթներով զգալի գումարներ է ստանալու Անգլո-ասիական ընկերության շահաբաժնից: Սունունու ընտանիքի հետ տնտեսական կապերն էլ բնականորեն առաջնորդելու են քաղաքական նորանոր հեռանկարների: Ջոն Սունունուն «Միացյալ Նահանգներ-Ադրբեջան Առեւտրի պալատի» խորհրդատուների վարչության պատվավոր անդամն է եւ 2017-ին այդ պալատից մրցանակ է ստացել առ ի գնահատանք իր ներդրումներին ամերիկա-ադրբեջանական դիվանագիտական հարաբերությունների զարգացման գործում:

Անգլո-ասիական ընկերության կայքը փորձում է դական լույսի ներքո ներկայացնել Ադրբեջանին, կոծկելով այդ երկրի բռնատիրական կառավարության արարքներն ու անժողովրդավարական քայլերը: Կարդում ենք, օրինակ, այսպիսի տողեր. «Ադրբեջանը բազմակուսակցական, ժողովրդավարական եւ նախագահական հանրապետություն է, որտեղ գործում են գործադիր եւ օրենսդիր առանձին մարմիններ: Ադրբեջանը տարածաշրջանի ամենակայուն երկրներից մեկն է»:

Սունունուների հետ Ադրբեջանի կապերը բնավ էլ միակողմանի չեն. «BGR Government Affairs» լոբբիստական միջազգային ընկերությունը, որ ժամանակին քարոզչություն էր տարել հօգուտ Ադրբեջանի հանրապետության, 1000 ամերիկյան դոլար էր նվիրաբերել 2017-ին կառավարիչ դառնալու Քրիս Սունունու մրցարշավին՝ կազմակերպելով դրամահավաքի շքեղ ընդունելություն:

Ամերիկայի Հայ Դատի կոմիտեն (ANCA) կառավարիչ Քրիս Սունունուն կոչ է արել հրաժարվել ընկերությունում ընտանիքի բաժնետոմսերից, որոնց «արյունոտ ներդրումներ» է բնութագրել: Ցարդ ընկերությունից ոչ մի պատասխան չի ստացվել: Մայքլ եւ Քրիս Սունունուների հետ կապ հաստատելու «Միրոր-Սփեքթեյթրի» ջանքերը նույնպես արդյունավետ չեն եղել: Կառավարիչ Սունունուն Արցախյան պատերազմի մասին հրապարակային մեկնաբանությամբ ընդհանրապես հանդես չի եկել:

Անգլ. բնագրից թարգմանեց ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

44-օրյա պատերազմը՝ ֆրանսիական վեպի թեմա

Անցյալ ամիս լույս է տեսել ֆրանսիացի գրող, լրագրող Անտուան Բորդյեի «Արթուրը՝ Հայաստանի փոքրիկ իշխանը. ֆրանսիացի երիտասարդ լրագրողի արկածները Հայաստանում» վեպը: Թեեւ Անտուան Բորդյեն գրում է վաղ տարիից (բանաստեղծություններ, հոդվածներ, փիլիսոփայական ակնարկներ), սա նրա առաջին վեպն է: Բորդյեն մոտ 30 տարի գործել է բիզնեսի եւ ֆինանսների աշխարհում, զբաղեցրել առաջատարի եւ տարբեր ղեկավար պաշտոններ, այնուհետեւ զբաղվել ձեռներեցությամբ եւ հիմնել խորհրդատվական ու հաղորդակցական ընկերություն՝ նախքան գրական աշխատանքին վերադառնալը:

Երեք մասից բաղկացած «Արթուրը՝ Հայաստանի փոքրիկ իշխանը» վեպի գլխավոր հերոս Արթուր դը լա Մադրիերը



20-ամյա որբ է, որը նոր է կորցրել ծնողներին ծանր ավտոքարի հետեւանքով: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին նա հայտնվում է Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում, որը ռմբակոծվում է ազերի հրթռիռների կողմից: Որոշ ժամանակ անց նա անցնում է զուգահեռ մի աշխարհ, որտեղ դառնում է կյանքեր փրկող անտեսանելի մի հերոս, իսկ որպես լրագրող իր առաջին խոշոր ռեպորտաժն ունենում է 44-օրյա պատերազմից անմիջապես հետո:

Անտուան Բորդյեն երեք անգամ եղել է Հայաստանում եւ ինչպես խոստովանել է՝ «կարծես սիրահարվել եմ այս քաղաքակրթությանը, այս երկրին, նրա ժողովրդին ու պատմությանը»: «Սալոն բեժ» բլոգին տված հարցազրույցում նա ասել է. «Ինձ հատկապես ցնցեց այն փաստը, որ այս փոքրիկ երկիրը, որին ես անվանում եմ կոնֆետտի, ելավ Ադրբեջանի դեմ 44-օրյա պատերազմի, որը նա պարտվեց ողջ միջազգային հանրության լուռ հայացքի ներքո: Արցախն այս պատերազմի խաղադրույքն էր: Աշխարհագրորեն այս ինքնահռչակ հանրապետությունը գտնվում է Ադրբեջանում: Բայց դրանք պարենական հայկական հողեր են, որոնք, ի դեպ, թալանվել են Ստալինի կողմից: 1921 թվականին նա դրանք տվել է Ադրբեջանին՝ «բաժանիր եւ տիրիր» սկզբունքով: Այսօր տագնապալի է դարձել հայկական քաղաքակրթությունը սեփական հողերից անհետանալու վտանգը»: Իսկ զրուցավարի՝ «Ի՞նչ գրական ժանրին է պատկանում ձեր գիրքը» հարցին Բորդյեն պատասխանել է. «Թերեւս՝ լրագրողական վեպ է: Բայց ավելի շուտ գրական եռերգություն է: Առաջին մասը քիչ թե շատ գեղարվեստականացված լրագրողական շարադրանք է, որտեղ Արթուր դը լա Մադրիերը ներկայացնում է բազմաթիվ ռեպորտաժներ: Երկրորդն այլաբանական պատկեր է, որտեղ Արթուրը հանդիպում է Նոյին եւ Աբրահամին, իսկ երրորդ պատկերը ֆանտաստիկ է»:

Ա. Բ.

Ինչի հաջողվեց եւ ինչի չհաջողվեց հասնել Պրահայի գագաթաժողովում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Դետրոյթ, ԱՄՆ

Հոկտեմբերի 6-ին Ֆրանսիայի նախաձեռնությամբ Պրահայում տեղի ունեցավ եվրոպական խաղաղական համայնքի գագաթաժողովը, որին եվրամիության երկրների առաջնորդներից բացի մասնակցում էին մի շարք այլ երկրների՝ ներառյալ Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի ներկայացուցիչները: Ռուսաստանն ու Բելառուսը գագաթաժողովից ցուցադրաբար դուրս էին թողնվել: Այս հանդիպումն ակնհայտորեն Արեւմուտքի կողմից Ռուսաստանի մեկուսացումը եւս մեկ անգամ շեշտելու միտում ուներ:

Գագաթաժողովն ինչ-որ առումով խաղաղական տոնավաճառ էր հիշեցնում, որտեղ երկրների մեծ մասը փորձում էին առաջ տանել իրենց խաղաղական շահերը:

Գագաթաժողովի շրջանակներում Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի ղեկավարների հանդիպումը բավականին լուրջ ուշադրության արժանացավ եւ ներգրավվածություն ապահովեց: Նախ տեղի ունեցավ խառակողմ հանդիպում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, Ֆրանսիայի նախագահ Էմմանուիլ Մակրոնի եւ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի մասնակցությամբ: Այնուհետեւ կարճատեւ հանդիպում կայացավ նաեւ Փաշինյանի եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի միջեւ:

Պրահայի հանդիպումները Հայաստանում եւ Արցախում տարատեսակ շահարկումներով ուղեկցվող խաղաղական պտտահողմ բարձրացրին:

Սակայն փոթորկի հանդարտվելու եւ օդի պարզվելու հետ միաժամանակ ակնհայտ դարձավ, որ գագաթաժողովի ընթացքում համարյա շոշափելի որեւէ արդյունք ձեռք չի բերվել, բացառությամբ սկզբունքների շուրջ գագաթաժողովից հետո հրապարակված համաձայնության մտադրության հայտարարության: Հայտարարության մեջ ասվում է. «Հայաստանն ու Ադրբեջանը վերահաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991թ. Ալմա-Աթայի Հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերը ճանաչում են միմյանց տարածային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»: Սրան հետեւում է համոզմունքը, որ դա հիմք կհանդիսանա սահմանազատման հարցերով հանձնաժողովների աշխատանքների համար, և որ այդ հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա Բրյուսելում, մինչև հոկտեմբերի վերջը:

Ռուսաստանի մեկուսացման պայմաններում ՌԴ արտգործնախարարության պաշտոնական խոսնակ **Մարիա Զախարովան** զայրալից հայտարարեց, որ Կրեմլի առաջարկած խաղաղության համաձայնագիրը շատ ավելի համապարփակ եւ հավասարակշռված էր, սակայն ակնհայտ է, որ այն որեւէ մեկին պետք չէ:

Նախագահ **Ալիեւը** հույս հայտնեց, որ մինչեւ տարեվերջ խաղաղության համաձայնագիրը կարող է ստորագրվել, մինչդեռ **Փաշինյանը**, շեշտելով, որ Հայաստանն ու Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածային ամբողջականությունը, որեւէ կերպ չանդրադարձավ Լեռնային Ղարաբաղին:

Սակայն անմիջապես հանդիպում հետո հանրապետությունից տված մամլո ասուլիսում Ալիեւի հնչեցրած հայտարարությունները կարծես հերքում էին այն, ինչին, ըստ նրա, հաջողվել էր հասնել խառակողմ հանդիպման ընթացքում՝ մասնավորապես միմյանց տարածային ամբողջականությունը հարգելու վերաբերյալ: «Պարզ չէ, թե ինչու նրանք չեն ցանկանում մեզ անցք տրամադրել դեպի Նախիջևան: Սա, իհարկե, սանձնած պարտավորությունների խախտում է, բայց մենք առայժմ համբերատար ենք և զսպվածություն ենք ցուցաբերում: Համոզված եմ, որ դրան եւս կհաջողվի հասնել, եւ որքան շուտ, այնքան լավ»: Ինչպես կարելի է նկատել, սա ուղղակի սպառնալիք է Հայաստանի տարածային ամբողջականության նկատմամբ, եւ Ադրբեջանը չի պատրաստվում դուրս գալ տարածքներից, ուր ներխուժել է:

Ալիեւը շատ լավ տեղյակ է, որ Հայաստանը երբք այլընտրանքային անցում է առաջարկել Հայաստանի տարածքով դեպի Նախիջեւան, սակայն նույն Ալիեւն անտեսում է այդ առաջարկները՝ պնդելով Հայաստանի սուվերեն տարածքով միջանցք ստանալու իր պահանջները:

Հանդիպման եւս մեկ արդյունքը հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով ԵՄ խաղաղապահական առաքելության տեղակայման վերաբերյալ համաձայնության ձեռքբերումն էր: Հայաստանը համաձայնություն էր տվել աջակցել առաքելության անդամներին, մինչդեռ Ադրբեջանը հայտարարել է, որ կհամագործակցի նշյալ առաքելության հետ այնքանով, որքանով առնչություն կունենա:

Փաշինյան-Էրդողան հանդիպման միակ արդյունքը Թուրքիայի նախագահի մեղմ պնդումն էր, որ Թուրքիան պատրաստ է Հայաստանի հետ բացել սահմանը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատել միայն այն բանից հետո, երբ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կստորագրվի համապարփակ խաղաղության համաձայնագիր:

Էրդողանին ներկայումս այնքան էլ ձեռնտու չէ հակասական հայտարարություններ անել. նա տրամադրված է լավ պահվածքի համար միջազգային հարգությունից բարձր միավորներ ստանալ, ինչն անհրաժեշտ է հատկապես 2023թ ընտրություններից առաջ Թուրքիայի տնտեսության աղետալի փլուզման եւ անհեւանգալիորեն ահագնացող գնաճի ֆոնին սեփական վարկանիշը շտկելու համար: Հնարավոր է, որ նա նույնիսկ բանակցությունների շարք սկսի քրդական ընդդիմության առաջնորդների հետ, ինչպես սովոր է անել հերթական ամեն ընտրությունից առաջ, իսկ ընտրություններից հետո այդ նույն առաջնորդներին ուղարկել բանտ:

Այս պահին Արցախի ղեկավարներն ուղեւորվում են Հայաստան պարզելու, թե Փաշինյանը ի՞նչ է բանակցել իրենց հետագա ճակատագրի վերաբերյալ, քանի որ համառ լուրեր են շրջանառվում, որ Փաշինյանն Արցախը վաճառել է Ադրբեջանին: Մինչդեռ Փաշինյանը փորձում է սեփական կաշին փրկել՝ համոզելով Բաքվին ուղղակի բանակցություններ սկսել Արցախի իշխանությունների հետ՝ իրենց ինքնավարության հետագա ճակատագրի վերաբերյալ:

Ալիեւը սակայն հրապարակավ հայտարարել է, որ Արցախի խաղաղապահներին վերաբերվելու է զուտ որպես Ադրբեջանի խաղաղապահների եւ ո՛չ որեւէ այլ կերպ: Նրանց, ով համաձայն չեն այդպիսի վերաբերմունքի, նա առաջարկել է հեռանալ: Ալիեւին չի անհանգստացնում անգամ այն փաստը, որ Արցախի բնակիչները Հայաստանի կամ Ռուսաստանի անձնագրեր ունեն:

Այս պահի դրությամբ Ալիեւը դեռեւս տեղի չի տալիս Արեւմուտքի ճնշումներին՝ դուրս բերելու զորքերը Հայաստանի գրավյալ տարածքներից, ոչ էլ համաձայնում է ազատ արձակել հայ ռազմագերիներին: Նա հարբած է ոչ միայն Հայաստանի նկատմամբ տարած իր հաղթանակից, այլեւ տարածաշրջանային խաղաղական զարգացումների արդյունքում ձեռք բերած սեփական կշռից: Նախ եւ առաջ ադրբեջանական էներգակիրները, որքան էլ սահմանափակ լինեն դրանք, Ադրբեջանի համար ապահովեցին եվրոպացիների ջերմ վերաբերմունքը. աչք փակվեց անգամ լայնորեն տարածվող եւ դատապարտվող բազմաթիվ տեսանյութերի վրա, որտեղ պարզ երեւում էր, թե ինչպես են ադրբեջանցի զինվորականները սպանում հայ զինվորներին եւ գերիներին, տանջահար անում, սպանում եւ անդամահատում նույնիսկ կին զինվորականներին:

Չնայած այս ամենին, տարածաշրջանային խոշոր խաղացողների հավակնությունների արդյունքում Ադրբեջանն այս պահին դարձել է խաղաղական անգնահատելի գործոն:

Նախ՝ Թուրքիայի՝ Մեծքուրանական նկրտումներում կարեւոր դեր է վերապահված Ադրբեջանին՝ առաջ մղելու միջանցի գաղափարը՝ Թուրքիայի առջեւ բացելով տարածաշրջանի դարպասները: Բայց այս ամենից առավել Ադրբեջանին կենտրոնական դեր է վերապահված հատկապես իրանա-իսրայելական հակամարտության մեջ, նրան անգամ հույսեր են ներշնչվում, որ եթե Իրանը տարանջատվի, նրա տարածքի մի մասը կարող է միակցվել Ադրբեջանին: Անկարայում արդեն ձեւավորվել է այսպես կոչված Հարավային Ադրբեջանի ազգային ժողով կոչվող կազմակերպությունը, որը ծրագրում է ղեկավարել իրանական Ատրպատականը այն բանից հետո, երբ այդ տարածքն անջատվի Իրանից:

44-օրյա պատերազմի շահառուներն, այսպիսով, ոչ միայն Թուրքիան ու Ադրբեջանն էին, այլ նաեւ Իսրայելը, որն ավելի մեծ հասանելիություն ստացավ Իրանի տարածքի նկատմամբ: Մինչեւ պատերազմը Հայաստան- Իրան սահմանը կազմում էր 140 կմ: Պատերազմից հետո այն կրճատվեց մինչեւ 35 կմ: Այսօր Իսրայելը Ադրբեջանի «ազատագրված տարածքներում» հսկայական ներդրումներ է իրականացնում, նույնիսկ ռազմական օդանավակայան է կառուցում:

Այս ամենին դժվար է զուտ որպես խաղաղական շահարկումների վերաբերվել, հատկապես եթե ավելանում են որոշ խաղաղական փաստեր. հենց վերջերս Իսրայելի պաշտպանության նախարար Բեննի Գանցը իր թուրք գործընկերոջ՝ Հուլուսի Ակարի հետ Բաքվում էր, երբ «պատահաբար» խաղաք այցելեց Սաուդյան Արաբիայի արտգործնախարար Ադել ալ-Ջուբեյրը: Այս բոլոր զուգադիպությունները վկայում են մի բանի մասին՝ եթե հակահրանյան ուժերը հավաքվում են քննարկումների, նշանակում է Իրանի գլխին սեւ ամպեր են կուտակվում:

Այսօր, երբ Իրանի իբր-դաշնակից Ռուսաստանը սեփական խնդիրներն է լուծում Ուկրաինայում, Իրանում կարող է ինչ-որ սցենար բեմադրվել, ինչի արդյունքում, տարածաշրջանում բռնկված ավելի խոշոր հրդեհների ֆոնին Հայաստանն ու Արցախը կարող են երկրորդ պլան մղվել:

Անգլ. թարգմանեց՝
ՌՈՒԶԱՆ ԱՋԻՋՅԱՆԸ
(Armenian Mirror-Spectator)

«Ստեփանակերտն, այո, պետք է ուղիղ բանակցի Բաքվի հետ, բայց միմիայն միջազգային ձեւաչափում»

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Քաղաքագետ **Ալեքսանդր Մանասյանը** ցավով է արձանագրում՝ մենք փաստաթուղթ կարդալ չենք սիրում, չենք սիրում խորանալ ամեն բառի մեջ, բառ առ բառ տնտղել, ուսումնասիրել, ինքության առնել դրանք: Իսկ թուրքերը տառ առ տառ են կարդում ու զգուշանում: Իր փորձից է օրինակ բերում. «Ադրբեջանի արտաքին գործերի նախկին նախարար Թոֆիկ Զուլֆուգարովն իր թիմակիցներին հրահանգում էր՝ «Ղարաբաղյան կոնֆլիկտը» փոքրատառով գրեք: Այդպիսով նա փոքրացնում էր հարցը: Նրանք մեծատառին ու փոքրատառին են ուշադրություն դարձնում, մենք բանաձեւի տեղը չգիտենք: Ցավում եմ՝ արդեն 30 տարի այս մասին բղավում եմ, հիմա էլ եմ բղավում, հերիք եղավ, որ չկարդանք այդ փաստաթղթերն ու չտիրապետենք դրանցում գրված ամեն բառին»:

Մանրակրկտորեն է հակադարձում ադրբեջանցի քաղաքագետների այն փաստարկներին, «Հիմա գանք Արցախի մասով ռուսական եթերները հեղեղող ադրբեջանցի քաղաքագետների այն փաստարկներին, թե Լեռնային Ղարաբաղը եղել է Ադրբեջանական հանրապետության պատմական, վաղնջական տարածք, ու Կովբյուրոն (Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական կուսակցության Կովկասյան բյուրո) որոշել է՝ Ղարաբաղը թողնել Խորհրդային Ադրբեջանի կազմում: Իսկ թողնել կարելի է այն, ասում է, ինչ եղել է: «Ադրբեջանցիներն իհարկե գիտեն, որ իրենց ասածի մեջ տրամաբանություն չկա, բայց գիտեն նաեւ, որ մենք չենք հասկանում չեղած այդ տրամաբանությունը: Չնայած ինչ-որ տեղ հասկանալի է՝ ինչու Ռուսաստանը չի տալիս հարցի պատասխանը, քանի որ խորհրդային Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանին է տվել, ու ռուսների համար անհարմար է խոստովանել, որ դա աղօրինի գործարք է եղել: Բայց հայ փորձագետը պարտավոր է ասել՝ Կովբյուրոն, որ ոչ թե սահմանադրական, այլ կուսակցական մարմին է, իրավասություն չի ունեցել երրորդ պետության տարածքների մասին որոշում կայացնելու: Երկրորդ՝ Կովբյուրոն նման որոշում չի կայացրել, դա էլ է սխալ, սուտ, ինչո՞ւ, որովհետեւ ի տարբերություն 1921-ի հուլիսի 4-ի որոշման, որտեղ հարցը որոշվել է հօգուտ Հայաստանի, հուլիսի 5-ին **Սալինը** մտել է պլենումի դահլիճ, կարդացել ու ընդունել է որոշումը՝ առանց քննարկման ու քվեարկության: Ուրեմն՝ նման փաստաթուղթ չի ընդունվել, Կովբյուրոն իրավասու չի եղել այն վավերացնելու, «Ղարաբաղը թողնել Խորհրդային Ադրբեջանի ահմաններում» բովանդակությամբ որոշում ունենալ չէր կարելի, քանի որ այդ ժամանակ Ղարաբաղը հռչակված է եղել Խորհրդային Հայաստանի մաս»,- «**Ազգ**»ի հետ զրույցում ասում է Մանասյանը:

Զրուցելով 1994-ին կնքված հրադադարի պայմանագրի մասին, նորից ռուսական կողմին է հղում անում: Հիշեցնում է՝ այն կազմել էր ռուսական կողմը՝ ԵԱՀԿ համանախագահ **Վլադիմիր Կազմիմիրովի** գլխավորությամբ ու նախատեսված է միայն Բաքվի ու Ստեփանակերտի համար: Ավելին՝ մինչեւ այդ փաստաթղթի ստորագրումը Ռուսաստանի միջնորդությամբ տարբեր ձեւաչափերով Ստեփանակերտը բանակցել է Բաքվի հետ, ու իր նամակներից մեկն անգամ Ադրբեջանի նախկին նախագահ **Հեյդար Ալիեւն** մակագրել է Լեռնային Ղարաբաղի նախագահին ու պաշտպանության նախարարին: Այսինքն՝ մինչեւ 1994-ի մայիսը հայտնի է եղել, որ կոնֆլիկտի կողմերը Ստեփանակերտն ու Բաքուն են:

«Բայց երբ հրադադարի փաստաթուղթը Կազիմիրովը տարել է ու ցույց տվել Հեյդար Ալիեւին՝ ճշգրտումներ անելու համար, թե բանակցությունները երբ ու որտեղ պետք է կայանան, այդ ժամանակ Ալիեւը հետաքրքրվել է՝ իսկ ո՞ւր է Երեւանի ստորագրությունը: Կազիմիրովը պատասխանել է, որ Երեւանը վաղուց է հայտարարել՝ ինքը հակամարտության կողմ չէ, ու դա անգամ միջազգային հանրությունն է ընդունում: Ավելին՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 1993-ին Արցախի հարցով բանաձեւեր է ընդունել, որտեղ Քարվաճառի դեմքերի առնչությամբ գրել է, որ այնտեղ ծավալված գործողություններին Լեռնային Ղարաբաղի տեղական ուժերն են մասնակցել, Հայաստանը դրան չի մասնակցել: Այսինքն՝ ՄԱԿ Անվտանգության խորհուրդը կոնֆլիկտի կողմ Հայաստանին չի ճանաչել: Այս բոլորը Կազիմիրովը ներկայացրել է Հայր Ալիեւին, ինչին ի պատասխան նա խնդրել է՝ փոխանցել իր խնդրանքը **Լեւոն Հակոբովիչին**, որ ինքն էլ ստորագրի այդ փաստաթղթի ներքո: Կազիմիրովն Ալիեւի խնդրանքը փոխանցում է Լեւոն Տեր-Պետրոսյանին, ու ինչպես նաեւ վերջերս՝ հաղորդումներից մեկի ժամանակ նշեց, ի զարմանս իրեն մեկ-երկու ժամ հետո Տեր-Պետրոսյանից դրական պատասխան է ստանում առ այն, որ Երեւանը պատրաստ է ստորագրել այդ փաստաթուղթը: Իսկ դա նշանակում է, որ դրանով Հայաստանը կոնֆլիկտի կողմ է դարձել, իսկ միջազգային նորմերը սահմանում են, որ կոնֆլիկտի կողմերը նրանք են, որ ստորագրել են հրադադարի արձանագրությունը: Եթե անգամ ստորագրում էինք, ապա պետք է արձանգրվեր, որ Հայաստանը ոչ թե որպես կոնֆլիկտի կողմ, այլ որպես Արցախի անվտանգության երաշխավոր կամ միջնորդ է ստորագրում: Այսպես՝ Հայաստանը դարձել է կոնֆլիկտի կողմ, ու տարիներով քաղել ենք դրանից բխող վատ հետեւանքները»,- ընդգծում է քաղաքագետը:

Ի՞նչ կլիներ, եթե Հայաստանն Արցախյան հակամարտության կողմ չլիներ: Ըստ Մանասյանի՝ ամբողջ պատկերը կփոխվեր, ու հետագա բոլոր բանակցությունները Բաքվի ու Ստեփանակերտի միջեւ տեղի կունենային: Բայց օգտվելով հանգամանքից, որ հրադադարի փաստաթղթի տակ Երեւանի ստորագրությունը կա, հետագայում արդեն Ալիեւն սկսեց պնդել, թե ինքը Լեռնային Ղարաբաղի հետ չի երկխոսի: Ու եթե մինչեւ այդ, ասում է մեր զրուցակիցը, պաշտոնական Բաքուն պարզապես խնդրում էր բանակցությունների սեղանի շուրջը նստել, ապա երկրորդ նախագահի օրոք Ադրբեջանն առհասարակ հրաժարվեց բանակցել Ստեփանակերտի հետ: Այդտեղից էլ, ըստ Ալեքսանդր Մանասյանի, առաջ եկավ թույլ այն կարծիքը, թե **Քոչարյանի** ժամանակ է Ստեփանակերտը դուրս մղվել բանակցային գործընթացից: Վստահ է՝ առաջին նախագահի թույլ տված սխալը Քոչարյանն ինչ-որ ձեւով կարող էր ուղղել, եթե անընդհատ շեշտեր, թե բանակցություններին ոչ թե որպես կոնֆլիկտի կողմ է մասնակցում, այլ ներկայացնում է Ստեփանակերտի առաջարկները կամ պարզապես փոստատարի դեր է կատարում:

«3-րդ նախագահ **Սերժ Սարգսյանը** փորձեց ուղղել այդ սխալը՝ 2018-ին (ավելի քան 14 տարի անց) իսպանական գործակալությանը հարցազրույց տալով ու ասելով, որ բանակցությունների սեղանի շուրջը Հայաստանը նստում է Արցախի փոխարեն: Ուշ էր սակայն, գնացին արդեն գնացել էր վաղուց, ու տասնամյակներ անց ու արդեն 20 տարի անց միջազգային հանրության մոտ արմատավորվել էր տեսակետը, որ Երեւանը բանակցության կողմ է: Իսկ եթե հակամարտության կողմը Երեւանն է, ապա կարելի է Երեւանի վրա էլ հարձակվել»,- ներկայացնում է զրուցակիցը:

Թեեւ աժմ, պարզ է, Արցախի կարգավիճակը նույնը չէ, բայց օրվա իշխանությունը, ի դեմս վարչապետ **Նիկոլ Փաշինյանի** հայտարարում է՝ Ստեփանակերտն ուղիղ պետք է բանակցի Բաքվի հետ: Այս մասով Մանասյանի դիրքորոշումը հետեւյալն է՝ ակնհայտ է, ու Բաքուն չի՛ ուզում Մինսկի խմբի շրջանակներում խոսել Ստեփանակերտի հետ: Ասում է՝ կկանչեմ ինձ մոտ, կխոսեմ, այնպես, ինչպես իր շրջաններից մեկի ղեկավարի հետ: Ըստ նրա՝ դիվանագիտության մեջ մեր ամբողջ պայքարն այն բանի համար պետք է լինի, որ բանակցային գործընթացը վերականգնվի միջազգային ձեւաչափում:

Ինչպե՞ս դիմակայել հզոր պայթյունին

Երեւանի օդում ոչ թե վաղվա, այլ արդեն այսօրվա ծանր ու սպասողական անորոշությունն է կախված: Մարդիկ թքվածնի փոխարեն ասես երկաթ են շնչում, որ ամեն պահի ինչ-որ մի արկի տեսքով կարող է իրենց գլխին ընկնել: Անկախության սերունդը, որ Արցախյան առաջին պատերազմի հաղթանակի մասին պատումներով էր մեծացել, երկու տարի շարունակ մահվան աչքերին ուղիղ նայելով՝ վառոդի հոտ է շնչում ու սպասում՝ երկինքն իր գլխին ե՞րբ է փլվելու: Վստահորեն կարելի է հայտարարել, որ Հայաստանում չկա գեթ մեկ ընտանիք, որ այս կամ այն կերպ չառնչվի մահաբեր պատերազմի կամ հետպատերազմական իրավիճակի հետ, բայց դրան զուգահեռ հայաստանցիներս դեռ շարունակում ենք կարծել, թե մեզ անտեսանելի ինչ-որ մի ուժ է օգնության հասնելու:

Մարդկանց մի հատված, որ դեռ տարված է 2018-ի «հեղափոխական» էյֆորիայով ու հավատում է «ամենազոր» Նիկոլ Փաշինյանին, շարունակում է կարծել, թե Ադրբեջանին նախկիններն են փող տալիս, որ հարձակվի Հայաստանի վրա: ՀՀ նախկին նախագահներ Լեւոն Տեր-Պետրոսյանի, Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի համակիրներն էլ վստահ են, որ հենց իրենց ուրտի առաջնորդը կարող է Հայաստանը հանել ծանրագույն այս իրավիճակից ու բանակցել թե՛ Ադրբեջանի, թե՛ աշխարհի հետ: Վերջիններս սակայն մի պարզ բան չեն գիտակցում, որ նախկին բոլոր նախագահներն ինչ-որ ժամանակ բանակցել ու հարաբերակցվել են աշխարհի հետ, ու ինչ-որ բան անելու համար բավարար թե՛ ժամանակ, թե՛ ռեսուրսներ ունեցել են:

Մեկ այլ զանգված հույսը Ռուսաստանի ու բացառապես Վլադիմիր Պուտինի, մեկ այլ հատված՝ Եվրոպայի հետ է կապում: Ու մինչեւ մենք շարունակում ենք ինչ-որ հրաշքի ակնկալիքով ապրել ու հուսալ, թե բարեգութ մարդկությունը կկանխի հերթական ողբերգությունը, աշխարհի լիդերների աչքի առջեւ ադրբեջանցիները շարունակում են մարդ մորթել, ծվատել ու տանջամահ անել:

Այն, որ օրվա իշխանությունը «7 մորից ծիծ ուտող գառան» քաղաքականություն է վարում, անհերքելի է, ու նրանց արդար մղումներին վաղուց թե՛ մենք, թե՛ մեր հարեւանները չեն հավատում: Վստահաբար կարող ենք ասել, որ այսօր ավելի միայնակ, անհուսալի եւ անհույս պետություն եւ հասարակություն ենք, քան 2020-ի սեպտեմբեր 27-ին էինք:

Ի՞նչ անել. այսօր այս հարցն իրեն ՀՀ գրեթե ամեն մի քաղաքացի է տալիս, որ վաղուց հասկացել է՝ իր ընտրած իշխանությունն էլ, ընդդիմությունն էլ որեւէ բան անել կա՛մ չի կարող, կա՛մ ունակ չէ, կա՛մ պարզապես չի ուզում: Ազգադավության ու աշխարհաքաղաքական անորոշության ժամանակներում համայն հայության միակ նպատակը պետք է անհմաստ կործանարար տարանջատումներից՝ սեւեր-սպիտակներ, զերծ մնալը, Հայաստանն օտարների պատերազմական թատերաբեմ չդարձնելը լինի: Ինչպես նաեւ՝ ի մի բերել մտավորական ու գիտական ներուժն ու փորձել հասկանալ՝ ինչպե՞ս դիմակայել հզոր պայթյունին:

ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Ռուսաստանի տնտեսական ապտակները Հայաստանի համար թանկ կարժենան

*Վերջին ժամանակաշրջանում ՀՀ ամեն երկրորդ քաղաքացի խոսում ու կարծիք է հայտնում Ռուսաստանից, այսպես ասած, երես թեքելու ու հայացքը դեպի Եվրոպա ուղղելու մասին: Հայաստանցիները, որ գուցե նման տեսակետ-մեկնաբանություն են գրում ու ինտերնետ հասանելիություն ունեն, որովհետեւ Ռուսաստանի Դաշնությունում բնակվող հարազատի ուղարկած գումարով կարողանում են ինտերնետի սպասարկման գումարը վճարել, քնել-արթնացել ու որոշել են հակառուս դառնալ: Եվ դա այն դեպքում, երբ ո՛չ Արեւմուտքի երկրները, ո՛չ էլ ԱՄՆ-ն, ձեռքները լայն բացած, որեւէ մեկիս չեն սպասում: Գրեթե ամենօրյա ռեժիմով թե՛ մարդկային, թե՛ ռազմական, թե՛ տարածքային կորուստներ գրանցող հասարակությունը, պարզ է, ցասման պահերին մեղավորներ է փնտրում: Այս պահի մեղավորը, ըստ, օրինակ, Հարավկովկասյան երկաթուղում աշխատող բանվորի, Ռուսաստանն է, որ պետք է ոտքը քաշի Հայաստանից ու տեղն, օրինակ, Գերմանիային զիջի: Հարավկովկասյան երկաթուղու աշխատակիցը սակայն չի գիտակցում՝ Ռուսաստանի հեռանալն իր համար աշխատատեղի կորուստ, հետեւաբար նաեւ՝ գումար չունենալ ու սոված մնալ է նշանակելու: Տնտեսագետ **Սուրեն Պարսյանի** հետ «**Ազգ**»ը զրուցել է Հայաստան-Ռուսաստան տնտեսական կապի ու հավանական այն ոչ ցանկալի սցենարի մասին, թե ինչ կարող է լինել, եթե հանկարծ պաշտոնական Մոսկվան որոշի ապտակներ հասցնել Հայաստանին:*

- Պարոն Պարսյան, Հայաստանը Ռուսաստանի հետ ոչ միայն ռազմական ու քաղաքական, այլ նաեւ տնտեսական սերտ կապեր ունի, ու այսօր, երբ անգամ իշխանավորների շուրթերից է խոսվում, թե Հայաստանը պետք է վերանայի իր հարաբերությունները Ռուսաստանի հետ, ապա դա մեզ համար ի՞նչ կարող է արժենալ ու նշանակել:

- ՀՀ-ն 2014-ից ԵԱՏՄ անդամ երկիր է, իսկ մինչեւ այդ մենք մի շարք տնտեսական բնույթի պայմանագրեր ենք կնքել Ռուսաստանի հետ՝ տնտեսական ազատ առեւտրի, տնտեսական ու մաքսային համագործակցության եւ այլ բնույթի, ու դա իր արդյունքն է թողել Հայաստանի արտաքին առեւտրաշրջանառության վրա: Ռուսաստանը մեր թիվ մեկ առեւտրային գործընկերն է, ու նշեմ, որ միայն այս տարվա 7 ամիսների հաշվարկով, արտահանումը դեպի Ռուսաստան 762 մլն դոլար է կազմել, ինչը նախորդ տարվա համեմատ ավելի է 70 տոկոսով: Բացի այդ՝ Ռուսաստանն արտաքին տրանսֆերտների կարեւոր երկիր է, Հայաստան մտնող գումարների զգալի մասը հենց Ռուսաստանից է գալիս: Այս տարի, օրինակ, ՌԴ-ից Հայաստան է եկել 1.5 մլրդ դոլարի չափով գումար, ինչը նախորդ տարվա համեմատ մոտ երեակի անգամ ավելի է: Հետեւաբար, այո, կարող ենք ընդել, որ մեր բնակչության մի սվար զանգված ուղղակի կախվածություն ունի Ռուսաստանից եկող փոխանցումներից: Ու եթե դրանք չլինեն, ապա մեր թե՛ բնակիչները, թե՛ երկրի տնտեսությունը բավական լուրջ խնդիրների առաջ կկանգնի:

Հայաստանը, լինելով ԵԱՏՄ անդամ երկիր, «GSP», «GSP+» ու ազատ առեւտրի համաձայնագրեր ունի նաեւ Եվրոմիության, Ամերիկայի, Ճապոնիայի ու այլ երկրների հետ: Ի դեպ, ԵԱՏՄ երկրներից Հայաստանը միակն է, որ նման համաձայնագրեր ունի, ինչն էլ թույլ է տալիս, որ Հայաստանը տնտեսական առումով ավելի ամուր լինի, այսինքն՝ Հայաստանից արտահանություններ կարող ենք իրացվել եւ՛ ԵՄ, եւ՛ Ռուսաստան: Ինչ վերաբերում է Ռուսաստանից գազ գնելուն, ապա Հայաստանը սահմանին 1000 խմ գազը գնում է 178 դոլարով, այնինչ այս պահին Եվրոմիության երկրները նույն քանակի գազի համար վճարում են 2000 եվրո ու ավելին: Այսինքն՝ եվրոպացիները 15 անգամ ավելի թանկ են գազ գնում: Հայաստանը Ռուսաստանից նաեւ բենզին, դիզելային վառելիքներ ու այլ էներգակիրներ է ստանում: Սրանք Հայաստանի համար կարեւոր ու ռազմավարական նշանակության արտահանություններ են: Բացի այդ՝ ոչ միայն հացահատիկի, այլ նաեւ պարենի մեծ մասը՝ ավելի քան 60 տոկոսը, Հայաստանը ներկրում է Ռուսաստանից: ՀՀ-ն տարեկան 350 տոննա հացահատիկ է սպառում, ինչի 99 տոկոսը անցած տարի ներկրվել է Ռուսաստանից: Այս տարի, կարծում եմ, նույն կերպ է լինելու, եւ դա այն պարզ պատճառով, որ այլընտրանքային մատակարար չունենք: Եթե անգամ փորձենք գտնել, ապա դա շատ ավելի թանկ է նստելու:

Ռուսաստանը Հայաստանի համար նաեւ թիվ մեկ ներդրողն է, վերջին 40 տարում մեր երկրում հիմնական ներդրումները ռուսական ընկերություններն են հենց արել՝ էներգետիկ, գազամատակարարման, հանքարդյունաբերության ու այլ ոլորտներում, ինչը ոչ միայն պետք է կարեւորել, այլ նաեւ գնահատել: Ռուսաստանի հետ առեւտրատնտեսական հարաբերությունների հիմնական խնդիրը լոգիստիկն է: Մենք Ռուսաստանի հետ հաղորդակցվելու միակ ճանապարհ ունենք, խոսքը Վերին Լարսի մասին է, որ տարվա որոշակի ժամանակահատվածում փակվում ու հատկապես արտահանման մասով լրջագույն խնդիրներ է առաջացնում: Արտահանման տեսանկյունից նոր ճանապարհներ պետք է փորձենք գտնել, ինչը թույլ կտա ուժեղացնել երկու երկրների միջեւ առկա առեւտրաշրջանառությունը:

- Այսինքն, եթե Ռուսաստանը ցանկանա տնտեսական ապտակներ հասցնել Հայաստանին, ապա դա կարող է անել մի քանի բոլորների ընթացքում ու բավական ուժգնորեն:

- Արդեն ասացի, որ Հայաստանն արտահանումները հիմնականում Ռուսաստան է կատարում, բացի այդ՝ դրսի փոխանցումների մեծ մասը Հայաստանը Ռուսաստանից է ստանում: Եթե այդ եկամուտները չլինեն, ապա լրջագույն խնդիրներ ենք ունենալու. աշխատատեղեր են փակվելու, մարդկանց ապրելակերպն է դեպի վատը փոխվելու, ապրանքների դեֆիցիտ է գրանցվելու: Հայաստանն, անշուշտ, լուրջ քայլեր պետք է իրականացնի ներկրումը դիվերսիֆիկացնելու ուղղությամբ, ու լավ օրից չէ, որ այդ վիճակում ենք հայտնվել: Պետք է քայլեր իրականացնել ներկրումը դիվերսիֆիկացնելու, կախվածությունը թուլացնելու ուղղությամբ: Բայց պատերազմական այս իրավիճակում, ինչպես նաեւ՝ պատերազմական պատժամիջոցների պայմաններում քիչ է հավանականությունը, որ մեր երկիրը կարող է գտնել այլընտրանքային մատակարարներ:

- Բայց կարո՞ղ է կարճ ժամանակում այլընտրանքներ գտնել, կամ մինչեւ կգտնի, դա մեզ համար ի՞նչ կարժենա:

- Բոլոր ապրանքների մասով՝ միանշանակ չի կարող այլընտրանք գտնել: Հիշեցնեմ, որ նախորդ տարի, երբ թուրքական ապրանքների ներկրումն արգելվեց, ու մենք թուրքական ապրանքներից այդքան մեծ կախում չունենք, ամեն դեպքում թե՛ հասարակության մեջ, թե՛ շուկայում տագնապային իրավիճակ ստեղծվեց: Բայց ի՞նչ տեղի ունեցավ իրականում՝ թուրքական ապրանքներն ամեն դեպքում մտան Հայաստան՝ ռուսական ու իրանական ապրանքների անվան տակ, քանի որ այլընտրանքը չկար: Նույնը նաեւ Ռուսաստանի դեպքում է, մենք այս պահին այլընտրանքը չունենք, ու խոսել Ռուսաստանին վերջնագիր ներկայացնելու կամ հարաբերությունների հնարավոր սրացման մասին, տեղին չէ բնավ:

Հարցազրույցը՝
ՄԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ

Փաշինյանի հետ հանդիպումը Էրդողանին վարակել է «անկեղծության» ախտանիշով

⇨1 Ինչո՞վ բացատրել դա: Ըստ երեւույթին հանդիպման ոչ հայանպաստ ընթացքով եւ օրակարգի հարցերի՝ մեր հանրապետության համար ավելի քան անբարենպաստ բնույթով: Ինչո՞ւ, մինչ հարցին պատասխանելը նշենք, որ տողերիս հեղինակը «**Ազգ**»ի նախորդ համարում առանձին հոդվածով արձագանքել է հանդիպմանը: Թեեւ հոդվածը գրի էի առել հանդիպումից առաջ, սակայն ելնելով էրդողանի հակահայասանյան նկրտումներից, որոնք մշտապես արտացոլվում են նրա հայտարարություններում, նշել էի, թե ինչ հարցեր են ընդգրկվելու հանդիպման օրակարգում: Ցավոք չեմ սխալվել:

Համենայնդեպս թուրքական «Միլլիյեթ»-ի մեջբերմամբ հանդիպումից հետո Էրդողանն ասել է. «Հայաստանի վարչապետ մեծարգո Փաշինյանի հետ հանդիպում ենք ունեցել: Ես անկեղծորեն հավատում եմ, որ տարածաշրջանում բարիդրացիական հարաբերությունների սկզբունքով հասնելու ենք հարաբերությունների լիարժեք նորմալացման մեր նպատակին: Հատուկ ներկայացուցիչների միջոցով փոխադարձաբար շարունակվում են բանակցությունները: Մենք էլ մեր այսօրվա հանդիպումն անցկացրել ենք ջերմ մթնոլորտում: Համդիպման ընթացքում խնդրո առարկա դարձան որոշ պահանջներ: Դրանց առնչությամբ հանձնարարականներ ենք տվել ինչպես հատուկ ներկայացուցչին, այնպես էլ մեր արտգործնախարարին»: Timeturk -ը պահանջների առնչությամբ հավելում է «Միլլիյեթ»-ին, թե բանակցությունների ավարտին (հավանաբար նկատի է ունեցել հատուկ բանագնացներինը) թուրքական կողմը կկատարի անհրաժեշտ քայլերը, իսկ INTERFAX.RU-ն հաստատում, նշելով հանդիպման ավարտին ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինի** հետ Էրդողանի ունեցած հեռախոսազրույցի մասին:

Փաշինյան-Էրդողան հանդիպմանն անդրադարձել է նաեւ «Աֆամ» թերթը, որի փոխանցմամբ Էրդողանը մատնանշել է. «Մենք (Հայաստանի առջեւ) որեւէ պայման չենք դնում, եթե հաշտության պայմանագիրն ստորագրեն Ադրբեջանի հետ, ապա ինքնըստինքյան կվերանան բոլոր խնդիրները»: CNN Turk -ը, նշելով Ալիեւի մասնակցությամբ տեղի ունեցած ոչ պաշտոնական եռակողմ հանդիպման մասին, ընդգծում է Հայաստան-Ադրբեջան, այսպես կոչված, հաշտության պայմանագրի ստորագրման վերաբերյալ Էրդողանի հետեւյալ դիրքորոշումը. «Հաշտության պայմանագիրն ստորագրվելու է Թուրքիայի միջնորդությամբ»:

Որքան է հավատի թուրքական հեռուստատեսության այս տեղեկությունը, դժվար է ասել: Բայց որ Փաշինյանի հետ հանդիպումը Էրդողանին վարակել է անկեղծության ախտանիշով, ակնհայտ է: Նա անկեղծորեն մասնակցեց արցախյան 44-օրյա պատերազմին, դրանում անկեղծությամբ ներգրավեց սիրիացի վարձկան ահաբեկիչներին, Հայաստանի եւ հայ ժողովրդի դեմ բոլոր չարագործություններում անկեղծորեն խրախուսեց եւ շարունակում է խրախուսել ադրբեջանցի հրոսակին, հիմա էլ ամենայն անկեղծությամբ միջնորդի դեր ստանձնում, որ Հայաստանը հաշտության պայմանագիր ստորագրի Ադրբեջանի հետ, քանի դեռ նրա ազգերի եղբայրները ռազմական շարունակական ներխուժումներով ոչ միայն մշտական սպառնալիքի տակ են պահում հայ ժողովրդին, այլեւ շարունակում յուրացնել նրա պատմական տարածքները, խախտելով երկրի ինքնիշխանության հետ նաեւ տարածքային ամբողջականությունը:

ԱԳ ՀԱՅԿԵԼԿԱՅ ԱՇԽԱՐՀ

Թիվ 37(5725)
14 ՀՈԿՏԵՄԲԵՐ
2022

Արեւմտահայ բանաստեղծները՝ Պերճ Թյուրաբյանի երգերում

«Թեֆեյան Կենտրոն» հիմադրամը հոկտեմբերի 6-ին պատիվ ունեցավ հյուրընկալելու ճանաչված երգահան **Պերճ Թյուրաբյանին** եւ երգչուհի **Նաիրի Գասպարյանին**, որոնք հանդես եկան «Հայու հոգին. արեւմտահայ բանաստեղծները երգերում» խորագրով երաժշտական ձեռնարկով: Երեկոյի ընթացքում հնչեցին արեւմտահայ մեծանուն դասականներ Վահան Թեֆեյանի, Դանիել Վարուժանի, Միսաք Մեծարենցի, Ռուբեն Սեւակի, Պետրոս Դուրյանի, պոլսահայ բանաստեղծներ Զահրատի, Զարեհ Խրախունու եւ Իգնա Սարըասլանի ստեղծագործությունների հիման վրա Պերճ Թյուրաբյանի ստեղծած բարձրարվեստ երգերը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ԹԿ հիմնադրամի տնօրեն **Արմեն Ծուլիկյանը** եւ ներկայացրեց Պերճ Թյուրաբյանին՝ որպես երգահանի, երգչի եւ թարգմանչի, որը հայտնի է նաեւ Շառլ Ազնավուրի երգերի սքանչելի հայերեն կատարումներով՝ իր իսկ թարգմանությամբ: Անդրադառնալով Հայաստանի եւ հայ ժողովրդի համար այսչափ տագնապալի եւ ծանր օրերին՝ Ա. Ծուլիկյանը հատկանշեց օրերս թողարկված Պերճ Թյուրաբյանի նոր տեսահոլովակը, այն է՝ Շառլ Ազնավուրի «Պատերազմի մանուկները» երգի հայերեն տարբերակը:

Ձերմ միջավայրում հեղինակի կողմից հնչեցին հուշեր եւ պատմություններ, կենսագրական դրվագներ, որոնք հիմք էին հանդիսացել հայ հանճարների բանաստեղծությունները երգի վերածելու համար: Յուրահատուկ մեկնաբանությամբ Նաիրի Գասպարյանի հետ զուգերգով հնչեցին «Ես սիրեցի», «Իրիկունը», «Կանձրեւէ տղաս», «Կաղանդի ծառ», «Կաթիլներ» եւ այլ երգեր: Համերգի ավարտին ներկաները մեծ ոգեւորությամբ լսեցին նաեւ Շ.Ազնավուրի «La Boheme», «La Mamman», «Էխ, ռազ, յեշչո ռազ» երգերը հայերենով՝ Պ.Թյուրաբյանի կատարմամբ:

Պերճ Թյուրաբյանը ծնվել է Եգիպտոսում 1950թ.: Նախնական կրթությունն ստացել է Կահիրեի Մխիթարյան վարժարանում, այնուհետեւ՝ սովորել Ֆրանսիական քոլեջում: Վաղ հասակից անտարբեր չէր երաժշտության հանդեպ, երգում էր ոչ միայն ընտանեկան հավաքույթներին, այլեւ հայկական գաղութային ձեռնարկներին: 15 տարեկանում ներգաղթում է Հայաստան, ավարտում ԵՊՀ բանասիրական բաժինը, որտեղ հետագայում դասավանդում է ֆրանսերեն լեզու եւ գրականություն: Սկսում է իր երգերը ստեղծել եւ դառնում 1960-ականներին Հայաստանում սկիզբ առած հեղինակային երգի սակավ ներկայացուցիչներից մեկը: 1980-ականներին արտագաղթում է ԱՄՆ եւ Նյու Յորքի Կոլումբիա համալսարանում շարունակում ուսումն ու աշխատանքը:

Հեղինակային համերգներ է ունեցել Երեւանում, Փարիզում, ԱՄՆ եւ Կանադայի մի շարք քաղաքներում: Շառլ Ազնավուրի 85 եւ 95-ամյակների առթիվ Երեւանում թողարկվել են «Ազնավուրը՝ հայերեն» երկու ձայներիզ, որոնց մեջ ընդգրկված են Շառլ Ազնավուրի երգերի հայերեն տարբերակները Պ.Թյուրաբյանի թարգմանությամբ եւ կատարմամբ: Թարգմանել ու կատարել է նաեւ ֆրանսիացի հայտնի շանսոնյեների՝ Ժակ Բրելի, Լեո Ֆերեի, Ժորժ Բրասենսի երգերը: Գիրք-ձայնաթղթակներից են՝ «Ինչ-որ տեղ եւ մի օր» (իր խոսքերով եւ երաժշտությամբ), «Զարենցը երգերում», «Հայերեն», «Անունդ» (Վահան Թեֆեյանի բանաստեղծություններով), «Թռչնահոգի» (պոլսահայ բանաստեղծներ Զարեհ Խրախունու եւ Զահրատի խոսքերով):

«Գույների հետ խոսող նկարիչը». Գագիկ Ղազարյան

Հոկտեմբերի 1-ին Հայաստանի նկարիչների միությունում տեղի ունեցավ **Գագիկ Ղազարյանի** անհատական ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին քանդակ եւ գրաֆիկական աշխատանքներ:

Գագիկ Հովհաննեսի Ղազարյանը 1965-ին ավարտել է Երեւանի Գեղարվեստի ուսումնարանը, 1972 թվականին՝ Լենինգրադի գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտը: 1977 թվականից դասավանդում է Երեւանի գեղարվեստի ակադեմիայում: Ստեղծել է դեկորատիվ-մոնումենտալ գործեր:

Մինչեւ ցուցահանդեսի բացվելը՝ Նկարիչների միության նախագահ **Սուրեն Սաֆարյանը** ներկայացրեց նկարչին:

- Գագիկ Ղազարյանն իր կյանքը նվիրել է արվեստին: Մարդ, որը սովորելով դրսում, ունենալով լայն հնարավորություններ, վերադարձել է իր հայրենիք՝ ստեղծագործելու եւ ապրեցնելու իր ժողովրդին: Մարդ՝ որի հետ կարող ես շփվել եվ վերցնել միայն դրականը,- ասաց Սուրեն Սաֆարյանը:

Միջոցառմանն ներկա էր նաեւ ՀՀ Ժողովրդական նկարիչ, քանդակագործ **Էդիկ Բաղդասարյանը**:

- Գագիկ Ղազարյանի գործերը մնալու են պատմության մեջ: Ունի բարձարժեք , մեծաքավալ գործեր, որոնք պետք է գնահատել իմանալ,- ասաց քանդակագործը:

Գույների լեզվով խոսող այս նկարիչը, հիմնականում նկարում է գեր կանանց, ինչո՞ւ: Այդ հարցին պատասխանելով նկարիչն ասաց, որ նրանք, իրոք, գեղեցկուհիներ են, եւ ինքը նկարել է «կյանքն ինչպես որ է» սկզբունքով:

Նկարիչի խոսքերով՝ պատերազմից հետո շատ բարդ է դարձել նկարելը, մտքերը կտավին հանձնելը:

Գագիկ Ղազարյանի գործերը տեղադրված են նաեւ Մոսկվայում, Յալթայում, Իջեւանում, Արցախում, Փոթիում: Սա իր առաջին ցուցահանդեսն է Նկարիչների տանը:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍՈՓՅԱ
ՀՊՄՀ, Լրագրության 2-րդ կուրս

Բուն հայկական կյանքի համայնապատկերներ՝ «Հայկական խաչանկարներ» երաժշտական շարահյուսքերում

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի 2022-ի սեպտեմբերյան համերգին Սեդրակ Երկանյանի հեղինակած բազմաձյուղ ստեղծագործության հինգերորդ մասի պրեմիերան էր: Այն կազմված էր երկու տասնյակ երգ ու նվագներից:

Սփոփիչ, ապրեցնող երեւույթների կարիքն հիմա մեր ազգն առավել ունի, քան երբեւէ: Սպեղանի դնում են ոչ միայն մարմնին, այլեւ հոգուն, իսկ պատերազմի բերած կորուստների հետեւանքները մեղմելու, ցավին դիմանալու եւ ապրելու լիցք տանալու համար անհրաժեշտ են ճիշտ ասված խոսքը, ճիշտ ընտրված երաժշտությունը: Այդ երաժշտության փնտրումը, այդ հոգեւոր սպեղանու արարումը եղավ մաեստրո Սեդրակ Երկանյանի՝ նախորդած վերջին երկուսուկես տարիների գործը: Իր դարակներում եւ սեղանին ուներ երաժշտական բանահավաքչության ծո՞ղ նյութ, որը սպասում էր վերակենդանացման, մշակման, մեղեդիական նոր երանգախաղով ներկայացնելուն: Ժամը հասունացել էր այդ նյութին անդրադառնալու, եւ իրարու հաջորդելով՝ ստեղծվեցին երգաշարերի վեց ծավալուն տեսրեր, յուրաքանչյուրը՝ իրենում համահավասար կերպով ներառելով երգերի, նվագների եւ պարեղանակների շարաններ՝ որոշակի ներքին տրամաբանությամբ մեկմեկու լրացնող, սկիզբ եւ շարունակություն կազմող, տրամադրությունից տրամադրություն անցում կատարող: Բոլոր ստեղծագործությունների «հումքը» Ս. Երկանյանը քաղել է ազգային երաժշտարվեստի ակունքներից՝ դրանք հեղինակային մեկնությունների, մեղեդիական կառույցի կատարեգործման եւ գործիքավորման երանգանախշման ենթարկելով:

Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի՝ 2022 թ. սեպտեմբերի 29-ի համերգում ներկայացվեց այդ շարքերից հինգերորդը: Բոլոր շարքերն ամփոփված են «Հայկական խաչանկար» խորագրի ներքո, իսկ համերգը կրում էր «Ես ու առաջ» անվանումը՝ պայմանավորված տվյալ շարքում համահավասար պարեղանակների եւ երգերի հերթականությամբ: Իրարով ներդաշնակված, մեկմեկու ներհյուսված երգ ու նվագներն ամբողջական եւ ավարտուն ստեղծագործություն էին կազմում: Այնտեղ հեղինակը մտովի շրջելով պատմական Հայաստանի հյուսիսից հարավ, արեւմուտքից արեւելք՝ իրար է կապել - շաղախել երգերն ու պարեղանակները, որոնք աշխատանքի, սիրո, կարոտի, մխաբման մասին են պատմում, եւ դա՝ ոչ միայն բարբառային բազմատեսակ խոսքով, այլեւ՝ հունչ ու ոգով, իրենց զտարյուն հայկականությամբ:

«Հայկական խաչանկարը» հայոց կյանքի, ստեղծարար աշխատանքի, սիրո, կարոտների, ձգտումների, մտահայեցողության երաժշտական մի ուրույն համայնապատկեր է՝ գույն առ գույն հավաքված մեր լեռնաշխարհի բազում երկրամասերից, մեղեդի առ մեղեդի փնջած մի քանի տասնյակից ավելի նահանգներից, գավառակներից եւ գյուղերից, որոնցում մի ժամանակ շրջել են բանահավաքները, ձայնագրել գեղջկական երգ ու պարեղանակների հյուսվածքները եւ որպես թանկարժեք «հումք» պահպանել, որպեսզի մի օր նոր սերունդներն անդրադառնան դրանց՝ մեկնության մի այլ տեսլականով, բայց միշտ հարազատ «ակնաղբյուրից», ասել է, թե՝ ազգային ռիթմն ու կառուցվածքը կրող մեղեդիներից առնված նյութին: Որքա՞ն պրակներ կան մշակելու, որչա՞փ հարուստ եւ անսպառ է անհիշելի ժամանակներից մեզ հասած նյութը՝ քանիցս իր հիացումն է արտահայտել մաեստրո Ս. Երկանյանը՝ շարունակաբար անդրադառնալով բանահավաքչական հարստությանը: Եվ ահա նախորդած մի քանի տասնամյակներին իր արարումներին՝ հարսանեկան երգերի շարքերին, անզուգական հորովելներին, «Կարոտ խաչ» ասքաղատումին, հարյուրավոր մշակումներին գումարվել են «Հայկական խաչանկար» ընդհանուր խորագրով վեց շարանները, յուրաքանչյուրը՝ մի-մի անթերի ձեռագրահյուսք: Հեղինակային մտահղացմամբ՝ դրանք միահյուս են, մեկի ավարտը հաջորդի սկիզբն է, անցումները սահուն են՝ ազգային նվագարանների հունչը լիարժեքորեն ներկայացնելու հնարավորությամբ: Ունկնդրում ես երկանյանական ձեռագրի երաժշտահյուսքով արված այս ամբողջական երկը, եւ մտովի հայտնվում հայկական անպիղծ բնաշխարհում, որտեղ երկինք ու երկիր խոսում են բլուլականչի հովվերգով, որտեղ սիրո հունչն ունի ուղի լարերից հոսող թախծությունը, որտեղ բաս-սանթուրը բնության եւ պարեղանակի շարժերի տարածականությունն է հաղորդում, որտեղ դուդուկը հայ շինականի հոգեխորով հոգոցն է, որ կարտահայտի:

Գործիքային անսամբլի կատարած պարեղանակները՝ մի քանի «Ես ու առաջ»-ները, «Աստվածազնա պար»-ը եւ «Հարսանեկան պար»-ը, «Գորանի»-ն, «Արտաշատի պար»-ը, «Դիբազի խաղ»-ը, «Թամքր աղա»-ն եւ «Լե, լե թամզարա»-ն, այլ նվագներ անծանոթ էին հանդիսականին, իսկ եթե անգամ մի քանի անվանումներ ծանոթ էին, ապա մեղեդիական կառույցով դրանք այլազան եղանակներ էին: Նույնը կարելի է ասել սիրո եւ աշխատանքային երգերի, բլուլի, սանթուրի, դուդուկի, ուդի, քանոնի մենանվագներով կամ զուգանվագներով կատարվող մեղեդիների մասին: Գործիքային նուրբ հյուսվածքով գործեր են դրանք՝ մեկը մյուսից սահուն անցումներով, որ վարպետորեն կատարվեցին **Հասմիկ Մուրադյան-Հարությունյանի** զուլալ-հովվականչ բլուլով, **Լուսինե Դավոյանի** կարոտազեղ-տխրալար ուդով, Արտակ Ասատրյանի դուդուկի հոգեհույզով, **Քրիստինե Մնացականյանի** զվարթուն-հնչեղ բաս-սանթուրով, **Մարիաննա Գեւորգյանի** քանոնով: Դրանց հնչմանը միանում էր՝ մարդկային ձայնի տարածայնությամբ **Հովիկ Օգանեզովի** թավջութակի հնչումը:

Սիրո եւ աշխատանքի երգերը պարեղանակներին մեկընդմեջ կատարեցին «Տաղարանի» մենակատարներ **Լուսինե Մարկոսյանը, Հովսեփ Նշանյանը, Գալինա Ցոլակյանը, Ֆերդինանդ Մուրադյանը, Գայանե Ղամբարյանը**: Հարուստ, լեցուն, զգացմունքային, յուրաքանչյուր տոնայնությամբ այս ձայները համույթի հարստությունն են: Խորը, շքեղորեն հասուն եւ գեղեցիկ է Լուսինեի մեցցո-սոպրանոն, Գալինան վաղորդյան թռչնանց անխառն զուլալ ձայնն ունի, Ֆերդինանդը՝ բասի հզորություն, Հովսեփը՝ բարիտոնի փափկությունն ու կատարողի առանձնահատուկ մեղմության գրավչությունը, Գայանեի կատարումներն աչքի են ընկնում իր ձայնի հաղորդած ընդգծված դրամատիկությամբ:

«Սարեն իջավ ջուխտըմ շող», «Ձրի դըգի ուդիլը», «Լուսի լուսնակը ես իմ», «Այ, բըլբուլ ախպեր», «Ելիր», «Ախ, երնեկ եմ ձեզի»,- սրանք երգերի անվանումներ են, որոնք մեկ հարյուրամյակ եւ գուցե ավելի մոռացության տրվելուց հետո նորեն կենդանացան Հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի համերգին՝ նոր, անսպասելի փայլով, մեղեդահյուսքերի եւ ձայնարձակման «գունապնակի» ողջ հարստությամբ:

Համերգն ամփոփվեց համույթի ողջ երգչական կազմի խմբերգով: Ի դեպ, «Հայկական խաչանկարների» բոլոր պրակներն ավարտվում են «Թագվորի մեր» երգի զանազան տարբերակներով՝ մեկը մյուսից տարբեր՝ հնչմամբ, երաժշտական կառույցով եւ գործիքավորման լուծումներով:

Մի համերգային երեկոյի մեջ ամփոփված էին ազգային հնագույն երաժշտարվեստի քանկ նմուշներ, որոնք իրենց բերած տրամադրությամբ, հնչման տոնայնությամբ ունկնդրին հրավանք եւ հոգեապահինում բաշխելու առաքելությունն ունեին:

«Ամեն մեկս կոչված ենք հայրենիքի մի կտոր պահել»,- ասում է Ս. Երկանյանը: Նա դա անում է իր ստեղծագործությամբ՝ հայ հնագույն երաժշտական մշակույթի գանձերը փրկելով մոռացությունից եւ ներկայացնելով հեղինակային անկրկնելի ձեռագրով: «Հայկական խաչանկարներ»-ը շարունակելի է՝ հավաստիացնում է մաեստրոն, քանի որ երաժշտական արխիվներ պահոցներում եւ գրականությունում բանահավաքչական նյութերը՝ ձայնագրություններն ու նոտագրումներն անհատնելի են:

Մելյուզինը, Անդրե Բրետոնը եւ Հայաստանը ըստ Ստեֆան Սերմակյանի



Ֆրանսալեզու միջազգային «Ալֆեմի» (Ալքիմիա) գրական-փիլիսոփայական ամսագրի այս տարվա երկրորդ հատորում լույս է տեսել ֆրանսահայ հետազոտող **Ստեֆան Սերմակյանի** «Շրջված ալտեր էգոյից մինչև ինքնաքիմերա. Մելյուզինը, Անդրե Բրետոնը եւ Հայաստանը» ուսումնասիրությունը: Քննության է առնված Բրետոնի «Արկանում 17» արձակ բանաստեղծությունը, որի հերոսուհին եվրոպական միջնադարյան գրականությունից հայտնի կես կին, կես օձ փերի Մելյուզինն է (Մելիսենդ), որը համարվել է Լյուզինյան արքայատոհմի հիմնադիրը: Սերմակյանը ներկայացրել է Մելյուզինի կերպարի հայկական առնչությունները: Բացի Կիլիկյան Հայաստանին վերաբերող իրողություններից, օձի վերածված կնոջ մասին առասպելն ունի նաեւ հայկական տարբերակներ:

Սերմակյանը Մարսելի Էքսի համալսարանի միջինարեւելյան բաժնի դասախոս է, հայ հին եւ նոր գրականության մասնագետ: Հայոց լեզու եւ գրականություն է դասավանդել Մարսելի հայկական դպրոցներում: Անցյալ տարի Փարիզում լույս է տեսել նրա «Աֆոորի պոետիկան. Ֆրիդրիխ Հյոլդեռլին, Արթյուր Ռեմբո եւ Նիկողոս Սարաֆյան» աշխատությունը: Ֆրանսիական գիտական մամուլում հանդես է եկել հոդվածներով՝ նվիրված հայ-ֆրանսիական գրական կապերին եւ ֆրանսիացի ու հայ գրողներին (այդ թվում՝ Արմեն Լյուբեն-Շահան Շահնուրին, Ռուբեն Որբերյանին, Զմյուռնիայի հայ թարգմանական դպրոցին): Ստեֆան Սերմակյանը 2021 թվականից հիմնադիրը եւ վարողն է Մարսելի ռադիոյով հեռարձակվող «Նոյյան տաղան» ամենշաբաթյա հաղորդաշարի, որը նվիրված է հայ եւ համաշխարհային գրականությանը:

Ա. Բ.

Գիյոմ Թումանյան. Զարգացնելով ֆրանս-հայկական գեղարվեստական կաղերը

ԱՐՇՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

Գիյոմ Թումանյանը *(ծնված 1974 թ. Մարսելում) ուսանել է պլաստիկ արվեստներ եւ արվեստաբանություն Բորդոյի Միշել Մոնտեն համալսարանում՝ զուգահեռաբար հաճախելով Բորդոյի Գեղարվեստի դպրոցի դասընթացներին: 1997 թվականին ստացել է պլաստիկ արվեստների մագիստրոսի կոչում, այնուհետեւ սկսել է դասախոսական կարիերան Թուլուզում: Այստեղ նա հանդիպել է պատկերասրահի տնօրեն Ֆաբրիս Գալվանիին, որը կազմակերպել է նրա առաջին անհատական ցուցահանդեսը 1999 թվականին: Վերջին քսան տարիների ընթացքում Գիյոմն ամբողջությամբ նվիրվել է նկարչությանը: Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Ֆրանսիայի խոշոր քաղաքներում (Փարիզ, Լիոն, Մոնպելյե, Բորդո, Անգուլեմ, Թուլուզ, Մարսել), ինչպես նաեւ Չինաստանում, ԱՄՆ-ում եւ Հայաստանում:*

«Գիյոմ Թումանյանը նկարում է համոզմունքով, այդ նախնական ժեստում եւ գրեթե առանց տարիքի կարծես կրկնվում է տեսանելիի վաղեմի կերպարը, դրա բռնությունը կամ ներխուժումը, դրա նորացված հրաբը» ***(Դոմինիկ Ռաբաստե,*** *2019):*

-Գիյո՛մ, հնարավո՞ր է այսօրվա Ֆրանսիայում ապրել միայն նկարչությամբ:

-Այո՛, ֆրանսիական արվեստի շուկան ակտիվ է, եւ Փարիզը վերտին աշխարհի կարեւորագույն քաղաքներից մեկն է հատկապես գեղանկարչության ասպարեզում: Գոյություն ունեն նաեւ արվեստի գործեր գնելու մասնավոր եւ պետական ֆինանսավորման համակարգեր: Սակայն նկարչությամբ ապրելը դժվար է, քանի որ Ֆրանսիայում կան բազմաթիվ նկարիչներ, որոնք աշխարհի տարբեր ծայրերից գալիս են Փարիզ: Ես ապրում եմ իմ նկարչությամբ, քանի որ հինգ տարի առաջ դադարեցի արվեստ դասավանդել՝ Չինաստանում արտիստական կեցավայրում ապրելուց հետո:

-Արդյո՞ք մարդիկ հետաքրքրված են դասական նկարներ ձեռք բերելով:

-Հետաքրքրված են, կան նաեւ բազմաթիվ հավաքորդներ, եւ ֆիգուրատիվ գեղանկարչությունը շատ լավ է ներկայացված Ֆրանսիայում: Բայց ամեն ինչ կախված է այն բանից, թե ինչ նկատի ունեք դասական նկարչություն ասելով: Եթե հաշվի առնենք, որ դասական բառը նշանակում է ռեալիստական կամ հիպերռեալիստական, ապա այն այժմ թրենդային է Փարիզում:

-20-րդ դարի երկրորդ կեսին Ֆրանսիայում բազմաթիվ հայ եւ հայազգի կերպարվեստագետներ կային: Իսկ հիմա՞:

-Ֆրանսիայում միշտ էլ բազմաթիվ են հայ եւ հայազգի արվեստագետները: Ես ճանաչում եմ նրանցից շատերին եւ վերջերս կազմակերպել էի մի ցուցահանդես, որտեղ ի մի էի բերել մի շարք հայազգի նկարիչների: Սա հայանուն «ՄԵՆՔ» նախագիծն է, որը ես շարունակում եմ զարգացնել Ֆրանսիայում եւ Հայաստանում: Կարեւոր է պահպանել նկարչական կապերը մեր երկու երկրների միջեւ:

-Դու համագործակցել ես ֆրանսահայ լավագույն նկարիչներից Ժանսեմի (Ժան Սեմերջյան) հետ Թուլուզում կայացած «Հայաստան՝ հիշողության գործողություն» ցուցահանդեսում: Ինչպե՞ս ես գնահատում համագործակցությունդ այդ վարպետի հետ:

-Իմ բախտը բերեց, եւ 2003 թվականին ինձ ընտրեցին Ժանսեմի հետ ցուցադրվելու Թուլուզի Դիմադրության թանգարանում: Դոկտոր **Ֆեռնան Թորոսյանը**, որին ես շատ բարձր եմ գնահատում, շատ ջանք է թափել Միջին Պիրենեյան մարզում կազմակերպված այս ցուցահանդեսի համար: Դա հայ սփյուռքի նախագիծ չէր, բայց ցանկություն կար Ցեղասպանության մասին խոսել առաջին սերնդի մեծ նկարիչ Ժանսեմի եւ երրորդ սերնդի որեւէ երիտասարդ նկարչի հետ: Ես շատ տպավորված էի այդ գաղափարով, եւ այն ժամանակ իմ աշխատանքը շատ էքսպրեսիոնիստական էր, ցուցադրել էի կարմիր կտավներ, մի շարք «մարմիններ» եւ «գլուխներ»: Ցավոք ստի, ես չհանդիպեցի վարպետ Ժանսեմին, որը Թուլուզի ցուցահանդեսի ժամանակ արդեն շատ ծեր ու հիվանդ էր: Ինձ համար պատիվ էր կազմակերպել այդ ցուցահանդեսը եւ իրազեկել մեր մասին հանրության մի մեծ հատվածի, որն անտեղյակ էր հայոց պատմությանը:

-Դու կրում ես պատվավոր հայկական ազգանուն: Նաեւ առանձնահատուկ կապ ունես Հայաստանի հյուսիսում գտնվող Լոռու մարզի հետ: Ընտանեկան առնչություն կա՞ «Մեծ Լոռեցու»՝ Հովհաննես Թումանյանի հետ:

-Իմ տատիկն ու պապիկը Էրզրումից էին ու Սվազից, երկուսն էլ Ցեղասպանության վերապրողներ էին: Ցավոք ստի, շատ բան չգիտենք մեր ընտանիքի մասին, քանի որ իմ պապը՝ **Հմայակ Թումանյանը**, որը է եղել: Նրանք Մարսել են ժամանել 1924 թվականին: Այժմ ես պրպտումներ եմ կատարում իմ ընտանիքի վերաբերյալ: Ենթադրում եմ, որ մենք կապ չունենք Լոռու մարզի եւ հայ մեծ բանաստեղծի հետ:

-Քո կենսագրությունն ասում է, որ 2016-ին Հայաստան կատարած ուղեւորությունդ շրջադարձային է եղել քո նկարչության համար: Ինչպե՞ս:

-2016 թվականին ես Հայաստան վերադարձա իմ առաջին այցից գրեթե տասը տարի անց: Ուզում էի միայնակ ճանապարհորդել երկրում՝ հանդիպելու մարդկանց եւ բացահայտելու չքնաղ բնապատկերները, նաեւ Երեւանում ուսումնասիրելու 19-րդ դարի վերջի արեւելահայ բնանկարչությունը: Գեղարվեստի աշխարհում լավ գիտելիքների շնորհիվ հնարավորություն ունեցա պարբերաբար այցելել Հայաստանի ազգային պատկերասրահ եւ մոտիկից տեսնել հայ վարպետների աշխատանքները: Ես հիացած էի «գիշերային բնանկարներով», եւ դա ազդեց իմ ստեղծագործության վրա վերադարձիցս հետո: Ես բազմաթիվ նշումներ կատարեցի եւ խորասուզվեցի հատկապես երկու հայ ականավոր գեղանկարիչների կարեւոր աշխատանքների մթնոլորտում՝ Գեւորգ Բաշինջաղյանի «գիշերային բնանկարների» եւ Իվան (Հովհաննես) Այվազովսկու փոթորիկների մեջ:



-Արվեստաբաններն ու դիտողները երբեւէ տեսե՞լ են որեւէ կապ քո գեղարվեստական ոճի եւ քո հայկական ծագման միջեւ:

-Երբեմն լրագրողներն ու արվեստաբաններն ինձ հարցնում են, թե ի՞նչ կարծիք ունեմ իմ արվեստի վրա հայկական ծագմանս ազդեցության մասին: Ես միշտ պատասխանում եմ, որ իմ արվեստում անպայման կա մի բան, որը «մատնում է» ինչպես իմ հայրական, այնպես էլ մայրական ծագումը (մայրս Լանդերից է՝ Ֆրանսիայի հարավ-արեւմուտքից) եւ հատկապես՝ ծառերի եւ անտառների առկայությունը: Ես նկարում եմ այն, ինչ զգում եմ եւ այն, ինչ որ կամ, ուստիեւ իմ ծագման հետ կապն առկա է, եւ մարդիկ, որոնք գիտեն ինձ եւ հետաքրքրված են իմ ստեղծագործությամբ, որոշակի ձեւով տեսնում են այդ կապը:

-2018 թվականին ցուցահանդես ունեցար Երեւանում՝ ՆՓԱԿ-ում կայացած տպագրարվեստի առաջին միջազգային բիենալեում: Նորից Հայաստան գալու ծրագրեր ունե՞ս:

-Ինձ հրավիրել էր «Կուլտուր Դիալոգ Արմենիեն» կազմակերպությունը, որը նախաձեռնել էր այս բիենալեն: Ես միայն մի շարք փոքր մոնոտիպ ձեւաչափերով եմ մասնակցել, բայց դրանից առաջ գեղարվեստական փոխանակման աշխատանք էի սկսել կազմակերպել հայ նկարիչ **Տիգրան Սահակյանի** հետ, որը 2015-ին Բորդոյում արտիստական կեցավայրում էր: Դրանից հետո մենք կրկին հանդիպել ենք Շվեյցարիայում եւ Գերմանիայում եւ միշտ կապի մեջ ենք եղել: Այս տարի Տիգրանը եւ մեկ այլ հայ նկարիչ՝ **Արման Վահանյանը**, կրկին Ֆրանսիայում էին՝ «ՄԵՆՔ» նախագծի շրջանակներում, կեցության եւ ցուցահանդեսի համար: Այդ նախագիծը զարգացման փուլում է, եւ եթե հետաքրքրված եք, անպայման նորից կզրուցենք այդ մասին...



Գույն ու գիր

Հոկտեմբերի 9-ին «Նիկոլայ Նիկողոսյան մշակութային հիմնադրամում» Եղիշե Չարենցի 125-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում տեղի ունեցավ «Գույն ու գիր» ամառային դպրոցի աշակերտների աշխատանքների ցուցահանդեսը:

Այս ամռանը «Նիկոլայ Նիկողոսյան մշակութային հիմնադրամը» եւ Եղիշե Չարենցի տուն-թանգարանը համատեղ իրականացրել էին «Գույն ու գիր» ամառային դպրոցը: Մասնակիցներն ինտերակտիվ կրթական ծրագրերի միջոցով ծանոթացան անիմացիայի հիմունքներին, տեխնիկաներին, մասնակցեցին քանդակի եւ լինոփորագրության վարպետության դասերի: Ցուցադրության ընթացքում ներկայացվեցին երեխաների կատարած փորագրությունները, որոնց հիմք հանդիսացավ Սարյանի վրձնած Չարենցի դիմանկարը, ինչպես նաեւ ցուցադրվեց երեխաների ու նկարիչ Գոհար Սարգսյանի ստեղծած անիմացիոն ֆիլմը, որտեղ երեխաները պլաստիլինի միջոցով Նիկողոսյանի քանդակներին էմոցիաներ եւ շարժ են տվել:

Դպրոցի աշխատանքը կրում է շարունակական բնույթ: Այն համագործակցում է տարբեր թանգարանների եւ պատկերասրահների հետ, հանդես է գալիս նոր խորագրերով եւ ավարտական ցուցահանդեսներով:

ՀՐԱՉՅԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ռուբեն Ֆիլյանի չուշացած վեպը

«ԱՐԻ գրականության հիմնադրամը» լույս է ընծայել արձակագիր Ռուբեն Ֆիլյանի «Քո երկրի դեսպանը» վեպի ամբողջական տարբերակը (խմբագիր՝ Արամ Պաչյան), որի շնորհանդեսը կայացավ Գրքի երեւանյան 5-րդ փառատոնի շրջանակներում:



Ռուբեն Ֆիլյանը 1970-ականների Հայաստանի ամենաառաստղելական գրական դեմքերից է (այստեղ արժե հիշել նաեւ **Սլավիկ Չիլոյանի** անունը): Ծնվել է 1952 թ., Երեւանում, հայրենադարձների ընտանիքում: Ավարտել է Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետը: Տպագրվել է «Գարունում», զբաղվել է արեւելյան մարտարվեստներով ու յոգայով, վարել ազատ, բոհեմական կյանք: 1981-ին կարողացել է մեկնել արտասահման, եղել է Ֆրանսիայում, Եգիպտոսում, Հորդանանում եւ ի վերջո հանգրվանել հեթիաթային Գոայում (Հնդկաստան), որտեղ էլ սպանվել է 1984 թվականին:

Կյանքի օրոք հրատարակվել է Ֆիլյանի միայն մեկ՝ «Անծանոթ ինքնակենսագրություն» ժողովածուն: «Քո երկրի դեսպանը» վեպը գրվել է 1975-1978 թթ., սակայն խորհրդային ժամանակներում այն հրատարակել չի հաջողվել, ինչը զարմանալի չէ. գրքի հիմքում մեր պատմության դեկոնստրուկցիայի (կազմաքանդման) քննական վերարժեւորման նորովի ընթերցման փորձն է: Որպես տիպիկ պոստմոդեռն, իր տեսակով կատարյալ վեպ (այստեղ փոխված է տեքստի բուն հասկացությունը, իսկ լեզուն սոսկական գործիքից վերածվել է գրեթե անկախ դերակատարի)՝ այն հեշտությամբ ավելի աբսուրդիստական եւ ֆանտաստագորիկ բնույթ է ստանում: Այսպես սկսվում է ոդիսեւյան մի ծանր, դժվարին ճանապարհորդություն, որ պիտի հաղթությամբ ավարտվի: Գործածվող հասկացություններն առավելագույնս վերացական են՝ Մենք, Ուրիշը, Ջեղած տեղը, Բանը, Այնտեղը: Գիրքն այնպես է գրված, ասես Խորհրդային Միությունն այլեւս գոյություն չունի. բացակայում են սովետիզմները (ուրախալի է, որ գրքի շապիկին մեկ այլ ազատ մտածող արվեստագետի՝ **Կամո Նիգարյանի** «Homo Ludens» (1976) աշխատանքն է):

Շատ բաներ գրքում հաջողությամբ կողավորված են. Հայաստանը, Երեւանը, մենք՝ հայերս, Արարատը, Սեւանա (թերա)կղզին, այն այցելած պոետ **Մանդելշտամը.** «*...եւ միայն օտար պոետներն էին երբեմն լողալով գալիս-հասնում Այնտեղ՝ անծանոթ լեզվով հարազատ բանաստեղծություններ ընթերցելու...*»:

Օգտվելով «բան» բառի՝ հայերենում ցանկացած իմաստ կրելու հատկությունից՝ Ֆիլյանը բառախաղերի միջոցով ձկունորեն բազմիմաստ նախադասություններ է կազմում:

Պատումի ընթացքում մի պահ Մեծ Բանաստեղծն է դառնում Մեր (պատումը շարադրված է այս դերանունով) արտացոլանքը՝ մեկ Նարեկացի, մեկ Արշակ 2-րդ, մեկ Հայոց վերնախավ: Ամենայն կաթողիկոսն էլ է կողավորված, հավատական ու հավերժական կերպար՝ ե՛ւ Ներսես Ե Աշտարակեցի, ե՛ւ Պետրոս Ա Գետադարձ, ե՛ւ Գեւորգ Զ Չորեքչյան: Տարբեր տեսակետներ կան, թե ով կարող է մարմնավորել Ողբի երգչին, սակայն, կարծում եմ, սա հենց այն կերպարն է, որ ոչ մի որոշակի մարմնավորում չունի, այլ սոսկ տառապանքի երաժշտությունն է, մեկ անգամ հայտնված ու այլեւս երբեք չանհետացող ողբը:

Ինչպես գլուխգործոց երկերին է հատուկ՝ վեպը բազում, թեկուզ եւ դեռեւս հանրությանը քիչ ծանոթ աֆորիզմային բանաձեւումներ է պարունակում (հատկապես մեջբերումները «գրքից», որից մերթընդմերթ օգտվում է գլխավոր գործող անձը).

«Ընդհանրապես բոլորն էլ շատ նման են իրար, բայց եւ ամեն մեկն այնքան տարբեր է հենց ինքն իրենից: Եվ միեւնույն է՝ աշխարհի որ ծայրում էլ լինի՝ մի Բանը զգացնել կտա, որ նա՝ Նա է, ինքն է, իր երեւույթն է, Մերերկրացի է»;

«Իր վիճակը հուսացողի վիճակն է, ոչ թե հույսերի իրականացման»;

«Մեր Հարցում վերջին ու միակ խոսքը Ուրիշինն էր»;

«Նույն մարդն ունի բազմաթիվ գերեզմաններ»:

Զարմանալի եզրահանգումներ կան վեպում, ասենք այն, որ մեր պատմությունը ես է ընթանում, Մեր Վերածնունդն էլ *«պիտի լինի հետո, վաղ անցյալում՝ ուր մենք դեռ գնալու ենք...»*: Ժամանակը կարծես առաջ ու ետ է գնում, ինչպես մեր անսկիզբուվերջ պատմությունը, սակայն գրքի կառուցվածքի հիմքում արարման վեց օրերն են. *«Եվ իրիկուն ու առավոտ լինելով՝ երկրորդ օրը եղավ...»*:

Ֆիլյանը նկատում է, որ ճակատագրական պահերին Մենք կարողանում ենք լինել միա-Բան ու կռվել Ուրիշի բանակի դեմ, որն իր ճանապարհին ամեն ինչ ոչնչացնում է ու պատերազմելու համար «մի հաս» է: Գիրքն ընթերցելով՝ վերստին համոզվում ենք՝ մեր պատմության հարցադրումներն ամենեւին չեն փոխվում.

«Սիրտները ճաքում է այն պահերին, երբ նկատում են, որ սկսել է մեր տեսակն աճել, բազմանալ, հզորանալ, ոչ որ չի նեղացնում այլեւս, դրացիները հավասարի պես հաշվի են նստում: Եվ անմիջապես Մեր մեծանուն ներկայացուցիչների շնորհիվ գտնում են մի տարբերակ, մի հնար, մի Բան՝ ձեւն ինքնաոչնչացման. հենց այդպես էլ Մերը հաստատելու եւ վերագտնելու համար» (մեջբերում «գրքից»):

Բանի հետեւից բարձրանում են ամենաբարձր լյառը՝ ճանապարհին հանդիպելով չվերադարձած պոետի (Աբովյան) հիշատակներին: Վերջիվերջո նրանց առջեւ բացվում է ահռելի Նոյյան տապանը. *«այնքան էինք ուզում տապանը լինի, որ եթե չլիներ էլ՝ մեր ձեռքերով կշինեինք. այդքան ուզում էինք»*:

Ու որպես պատմության եզրահանգում՝ գլխավոր հերոսը գնում է, որպեսզի մնա, դեպի աստվածային «Քո երկիրը», որտեղ լույսն է ու կենարար գարունը: Եվ ո՞վ կարող է լինել այդ երկրի դեսպանը, եթե ոչ հենց առաջին քրիստոնյա ժողովուրդը...

«Քո երկրի դեսպանը» սկսվում է որպես վեպ-պոեմ եւ վերջում էլ կրկին հանդիպում ենք բանաստեղծական, նարեկացիական մի սիրո բացատրության դեպի լույսը: Ակնառու է գործածվող լեզվի ճկունությունը՝ գրաբարից մինչեւ նորաբանություններ: Գրքում կետադրական նշանների իսկական հրավառություն է. մինչ իսպառ բացակայում են փակագծերը (որ գրաբարի շրջանում գոյություն չեն ունեցել), սակայն երբեմն կետադրական նշանները մի ամբողջ անթարգմանելի պարբերություն են կազմում.

«Մահը, որ ի սկզբանե էր՝ :-: »:

Փաստորեն, դեռ 1970-ականներին գոյություն է ունեցել «ճիշտը գնալն է» արտահայտությունը, այն էլ նման մեկնաբանությամբ.

«Աշխարհի որ ծայրում էլ լինի՝ նրա համար ճիշտը գնալն է, բայց քոչվորության եւ ոչ մի նշույլ...»:

Վեպը խորապես ինտերտեքստուալ (միջտեքստային) է. այսպես, ակնառու են իմաստային եւ կառուցվածքային հղումներն Աստվածաշնչին (գրքում Քրիստոսին էլ ենք հանդիպում):

Նկատելի է Չարենցի «Երկիր Նաիրի» հետ ոչ միայն ժանրային (պոեմանման վեպ) եւ թեմատիկ (հայոց պատմություն, բնավորություն եւ ճակատագիր), այլեւ վերացական ընդհանրացման (նաիրցիներ-Մենք, եւ այլն) նմանությունները:

Գրքում հանդիպում ենք պոստմոդեռնին հատուկ մեկ այլ լուծման եւս. Ֆիլյանի գլխավոր հերոսը, ինչպես եւ մարկեսյան Աուրելիանո Բաբիլոնիան «Հարյուր տարվա մենությունում», աստիճանաբար հասու է դառնում մի սկզբնաղբյուրի (գիրք գրքի մեջ)՝ բացահայտելով փնտրված ճշմարտություններ:

Իհարկե արդարացի կլիներ, եթե վեպը հրատարակվեր անմիջապես գրվելուց հետո, ոչ թե մեկուկես տասնամյակ անց, այն էլ՝ կրճատումներով եւ ընթերցողական լայն շրջանակների համար գրեթե աննկատ՝ մութուցուրս 1990-ականներին: Բայց այսօր էլ այն ուշացած չէ, հատկապես այն պատճառով, որ անդրադառնում է հայության եւ, ինչո՞ւ չէ, մարդկության ամեն տեսակ գոյութենական խնդիրներին...

ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆ

Ամփոփվեց կոմպոզիտորների մրցույթի եզրափակիչ փուլը

Արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ

Հոկտեմբերի 9-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացավ ՀՀ Կոմպոզիտորների Միության 90-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի ունեցած կոմպոզիտորական մրցույթի եզրափակիչ փուլը:

Այս տարի կոմպոզիտորների կողմից մրցույթին ներկայացված էին լարային նվագախմբի համար գրված նոր ստեղծագործություններ: Մրցույթի փուլերը հաղթահարել եւ եզրափակիչ փուլում ընդգրկվել էին կոմպոզիտորներ **Արսեն Բաբաջանյանի, Գոռ Իսպիրյանի, Կարեն Անանյանի, Ժիրայր Շահրիմանյանի, Էդուարդ Հայրապետյանի** ստեղծագործությունները:

Ժյուրիի կազմում էին ՀՀ Կոմպոզիտորների միության նախագահ **Արամ Սաթյանը**, կոմպոզիտորներ **Աշոտ Զրոհրաբյանը, Աշոտ Ղազարյանը, Վաչե Շարաֆյանը, Արամ Հովհաննիսյանը, Էդմոն Մակարյանը** եւ դաշնակահար, երաժշտագետ **Լիլիթ Արտեմյանը**:

Ստեղծագործությունները հնչեցին ՀՀ պետական կամերային նվագախմբի կատարմամբ՝ դիրիժոր **Ռուբեն Ասատրյանի** ղեկավարությամբ:

Եզրափակիչ փուլի անցկացման համար ընտրված էր հետաքրքիր ձեւաչափ: Գնահատումը պետք է իրականացվեր ժյուրիի, նվագախմբի եւ հանդիսատեսի քվեարկությամբ: Ստեղծագործությունների կատարման հերթականությունն ընտրվեց վիճակահանությամբ:

Համերգը սկսվեց Գոռ Իսպիրյանի հուզական, թախծալի հնչողությամբ «Սինֆոնիետա» ստեղծագործությամբ:

Հաջորդիվ հնչեց Արսեն Բաբաջանյանի «Orientalishe Ornamente» ստեղծագործությունը՝ ունկնդրին փոխանցելով սոնորիստական, մշուշաթաց

հնչողություններ:

Ժիրայր Շահրիմանյանի «Պարտիտան» հնչեց որպես լարային նվագախմբի հնչողության կուռ միաձուլում՝ վարպետորեն օգտագործելով միջնադարյան շարականի մոտիվները:

Ունկնդրին բոլորովին այլ հնչողական միջավայր տեղափոխեց Կարեն Անանյանի «Փարիզյան հուշեր» ստեղծագործությունը: Հանրահայտ եւ սիրված մեղեդիները մշակված էին նրբագեղորեն եւ նույնիսկ որոշակի հումորով՝ ի ցույց դնելով կոմպոզիտորի ոճական բարձր ճաշակը եւ զգացողությունը:

Համերգը եզրափակվեց ավելի ավագ սերնդի ներկայացուցիչ, կոմպոզիտոր Էդուարդ Հայրապետյանի «Մեծարենց-Տեսիլ» ստեղծագործությամբ: Ունկնդիրն ականջալուր եղավ կոմպոզիտորի զգացմունքային աշխարհի եւ նրա ստեղծագործական վարպետության ներդաշնակ համաձուլմանը՝ կարծես առնչվելով Մեծարենցի գրական ժառանգության հնչողական ոլորտին:

Ժյուրիի, նվագախմբի եւ հանդիսատեսի քվեարկությամբ մրցանակները բաշխվեցին հետեւյալ կերպ. 1. Կարեն Անանյան, «Փարիզյան հուշեր», 2. Էդուարդ Հայրապետյան, «Մեծարենց-Տեսիլ», 3. Ժիրայր Շահրիմանյան, «Պարտիտա», 4. Գոռ Իսպիրյան, «Սինֆոնիետա», 5. Արսեն Բաբաջանյան, «Orientalishe Ornamente»:

Դե ինչ, մաղթենք արդի հայ կոմպոզիտորներին նորանոր ստեղծագործական գաղափարների իրականացում եւ հանրահռչակում:

Ռոմեն Կոզմոյանի անձնական արխիվը հանգրվանեց Արվեստի եւ գրականության թանգարանում

Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացման վերջին 60 տարիների գլխավոր ճարտարապետներից Ռոմեն Կոզմոյանի անձնական արխիվը հոկտեմբերի 11-ին համեստ, բայց սրտառուչ արարողությամբ հանձնվեց Ե. Չարենցի անվան արվեստի եւ գրականության թանգարանին: Արարողությանը ներկա էին հանգուցյալ գործչի դուստրը, որդին, քույրը, թոռը, օգնականը, մտերիմ ընկերներ եւ, անշուշտ, թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանը:

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում նախագահ Վարդգես Համազասպյանի տեղակալի պաշտոնում, այնուհետեւ Լիբանանում Խ. Միության դեսպանատանը դիվանագիտական գործուղման տարիներին եւ, ավելի ուշ, մինչեւ իր անսպասելի մահը, Երեւանի անձնական իր գրասենյակում աշխատած 60 եւ գուցե ավելի տարիների ընթացքում Ռոմեն Կոզմոյանը հազարավոր մարդկանց հետ պաշտոնական, կիսապաշտոնական եւ ընկերական շփումներ ու հանդիպումներ է ունեցել, ոմանց հետ, հատկապես մտավորականների հետ, նամակագրական տեւական կապ պահպանել, գրել է հոդվածներ ու կարճ ակնարկներ, դրանք հրատարակել մամուլում՝ ի մասնավորի «Զարթօնք» եւ «Ազգ» թերթերում՝ երբեմն Ս. Ղազարյան կեղծանունով, գրել է բազմաթիվ զեկուցագրեր, արել օրագրային գրառումներ եւ այլ գրություններ, որոնք, հետմահու, օգնականուհու՝ Ռուզան Պետրոսյանի խնամքոտ հոգածությամբ ցուցակագրվել եւ ամփոփվել են 6 արկղերում եւ հանձնվել թանգարանին:

Թանգարանի տնօրեն Վահագն Սարգսյանը, որն արդեն առիթ էր ունեցել ծանոթանալու դրանց մի մասին, հաձնման արարողության ընթացքում հայտնեց իր գոհունակությունը արժեքավոր այդ նյութերի ստանձնման համար, շնորհակալություն հայտնեց կտակատարներին, որոնց հանձնեց համապատասխան վկայագրերը, ապա խոսքացավ թանգարանային մշակման ենթարկելուց եւ պատձենահանելուց հետո ի սպաս դնել հետազոտողներին:

Եղան նաեւ այլ ելույթներ՝ Ռոմեն Կոզմոյան գործչի, մտավորականի եւ ընկերոջ, վերջապես՝ ազգային օգտավետ եւ արդյունավոր կյանք ապրած մարդու մասին: Ընդգծվեց, որ Ռոմեն Կոզմոյանը շարունակելու է ապրել ոչ միայն մտերիմների հուշերում, այլեւ իր արխիվով, որը, վստահաբար, հարստանալու է իր հետ նամակագրական կապ ունեցած բազմաթիվ մարդկանց կամ նրանց ժառանգների ուղարկելիք կամ հանձնելիք նյութերով, լուսանկարներով եւ հուշագրություններով:

«Հայաստանը պատրաստվում է հաջորդ էկալացիային»

Վերնագիրը նույնը թողնելով հպանցիկ հաղորդեմ, որ ավստրիական «Դեր Շտանդարտ»-ը հոկտեմբերի 13-ին ռեպորտաժ է հրապարակել հայկական ՈՄԱ-յի (Ողջ մնալու արվեստը) մասին, զրուցել այնտեղ մարզվող 24-ամյա ուսուցչուհի **Մարիամի** հետ: «Երբ սեպտեմբերի կեսերին դրացի Ադրբեջանը Հայաստանի հարավային շրջանների վրա հարձակվեց, 100-ավոր կամավոր սկսեց ՈՄԱ-յին դիմել: Հետագա հարձակումներից երկյուղում են»: **Դանիելա Պրուգգերի** եւ լուսանկարիչ **Աստղիկ Հակոբյանի** (բնագրում՝Astrig Agopian) Ձերմուկից եւ Երեւանից ուղարկված ռեպորտաժը զերծ է նախորդ տարիներին գերմանալեզու մեդիայում ՈՄԱ-յի մասին ադրբեջանաթուրքական կեղծ մեկնաբանությամբ փորձերից, շարադրանքում գերակայում է իրականությունը՝ կին թե տղամարդ պիտի ինքնապաշտպանվեն, քանի որ գոյաբանական խնդրի առջեւ են: Լրատուն նշում է, որ Ադրբեջանը ՈՄԱ-ն ահաբեկչական կազմակերպություն է դասակարգում, իսկ Հայաստանում նկատել տալիս, որ սա հայկական սփյուռքի միջոցներով անվճար ծառայություն է բոլորի համար, լուրջ ինքնապաշտպանվելու պատրաստություն, որ լրացնում է պետության պաշտպանական կառույցին՝ հյուծված բանակը:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

Լիբանանը խստօրէն կը դատապարտէ ատրպէյճանցիներուն գործած պատերազմական ոճիրները

Լիբանանը խստօրէն դատապարտած է Ազրպէյճանը, համացանցերու վրայ տարածուած տեսանիւթերու մէջ հայ զինուորականներու նկատմամբ ատրպէյճանական կողմի անմարդկային վերաբերմունքին համար: Պատերազմական գերիներու հանդէպ ի գործ դրուածը 1949 թուականին Ժընեւի մէջ որդեգրուած բանաձեւին կոպտագոյն խախտումներն են:

Այս մասին յայտարարած է Լիբանանի արտգործնախարարութիւնը:

«Կ՚ողջունենք Ատրպէյճանի դատախազութեան որոշումը տեսագրութեան առթիւ հետաքննութիւն կայացնելու վերաբերեալ: Միաժամանակ՝ Լիբանանը կը վերահաստատէ Ատրպէյճանի իշխանութիւններուն ուղղուած իր պահանջը՝ անյապաղ ազատ արձակելու բոլոր հայ ռազմագերիները, մասնաւորապէս Լիբանանի քաղաքացի, ազգութեամբ հայ Վիգէն Էօլչեթճանը», - նշած է երկրի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը:

Նշենք, որ թուականես մօտ ամիս մը առաջ, Լիբանանի մէջ Ազրպէյճանի դեսպան **Աղա Սալիմ Շոֆորով** կանչուած էր արտաքին գործոց նախարարութիւն եւ ընդունուած նախարարութեան քաղաքական եւ հիւպատոսական հարցերու տնօրէն **Ղասի Խուրիի** կողմէ:

Ազրպէյճանի դեսպանին փոխանցուած էր արտաքին գործոց նախարարութեան դժգոհութիւնը Պաքուի մէջ գերեվարուած լիբանանահպատակ Վիգէն Իւլճեթեանի հարցին գծով Ազրպէյճանի պետութեան ձգձգումներուն եւ Լիբանանի դիմումները անպատասխան ձգելու պատճառով:

«Զարթօնք», Բէյրութ

Իմաստաբանական բառարան

Օրը ականջի՞ն, թե՞ քթին

Հայերը հետաքրքրական սովորույթ ունեն. ձախ ձեռքի ցուցամատին գրիչով խաչ են «դաջում», որ անելիքը հիշեն: Հետո, որոշ ժամանակ անց, տեսնելով հուշարար խաչը, սկսում են մտածել, թե ինչի համար են նշում արել:

Ժամանակին հիշողությունը թարմ պահելու համար մատին նաեւ թել էին փաթաթում:

Ժամանակակից հայերը մի քիչ տարբերվում են. անելիքները հիշելու համար թուղթ ու գրիչ են վերցնում ու մետրոպատառ հայերենով նշումներ կատարում: Իսկ ավելի ժամանակակիցները վերցնում են հեռախոսը (համակարգիչը) եւ իրենց համար հասկանալի տառատեսակներով գրում անելիքների մասին:

Բայց վաղ անցյալում, երբ համակարգիչ, առավել եւս՝ (Գալուստի ականջը կանչի) թուղթ ու գրիչ գոյություն չունեին, հիշողությունը թարմ պահելու համար հայերն օգտագործում էին այլ միջոցներ: Այդ միջոցներից ամենազորեղը ծեծն էր: Մեր նախնիների հին ասույթը դրա մասին է. «Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս լսել տան նմա» («Ծառան որ ականջով չի լսում՝ մեջքով լսել կտան նրան». այսինքն՝ կծեծեն): Տերթոդիկյան դպրոցներում էլ ականջ ոլորելը հիշողությունն արթնացնելու ամենամեղմ միջոցներից էր:

Բայց անհիշելի վաղ ժամանակներում, որպես հիշողության խթանիչ, կար նաեւ ԱԿԱՆՋԻՆ ՕՂ ԱՆԵԼՈՒ միջոցը:

Ականջին օղ անելու սովորույթը գոյություն է ունեցել մարդկության պատմության վաղնջական ժամանակներից: Ընդ որում, օղակներ էին հագցվում ոչ միայն մարդկանց, այլ նաեւ կենդանիների ականջներին: Ականջին հագցված օղակները ցույց էին տալիս մարդկանց դիրքը հասարակությունում: Ականջօղերի օգնությամբ նաեւ ստրուկների հիշողությունը մշտապես թարմ էին պահում իրենց սոցիալական ծագման մասին: Սակայն Ժամանակի ընթացքում ԱԿԱՆՋԻՆ ՕՂ ԱՆԵԼ բառակապակցությունը տարբեր ժողովուրդների, այդ թվում հայերի մոտ ձեռք է բերել փոխաբերական իմաստ: Հայ հեղինակների մոտ հաճախ կարելի է հանդիպել նման դարձվածքների: Բազմաթիվ օրինակներից հիշենք միայն **Վանո Սիրադեղյանի** «Ձեռքդ ես տար ցավի վրայից» պատմվածքում օգտագործված «...Գործիդ մնա, հետն էլ ԱԿԱՆՋԻԴ ՕՂ ԱՐԱ, տղա, կյանքդ քո կամքով չի եղել, որ կարճելն ու երկարելը քո կամքով լինի... »

«ԱԿԱՆՋԻՆ ՕՂ ԱՆԵԼ» արտահայտությունը նույնքիսի կիրառություն ունի նաեւ պարսկերենում: Բազմաթիվ օրինակներից միայն մեջբերում եմ իրանցի անվանի բանաստեղծներ **Նիզամու** եւ **Մոլանայի** ստեղծագործություններից փոքրիկ պատառիկներ՝

Խոսքով եւ Շիրին պոետում հայազգի թագուհի Մեհին Բանուի՝ եղբոր դստեր Անուշին (Շիրին) ուղղված խրատական խոսքերի առիթով Նիզամին ասում է.

Հենց որ Շիրինը խորհուրդը լսեց,
Այն իր ականջին օղակ դարձրեց:

Իսկ Մոլանան իր ընթերցողին ուղղած խրատական խոսքում ասում է.

Խոսքս թող լինի օղակ ականջիդ,
Իբրեւ ուղենիշ մտորումներիդ:

Որոշ ժողովուրդների մոտ տարածված է եղել նաեւ ՔԹԻՆ ՕՂ ԱՆԵԼՈՒ սովորույթը, ինչի մասին է վկայում ԱԿԱՆՋԻԴ ՕՂ ԱՐԱ նշանակությամբ ռուսերեն «зарубки себе на носу» արտահայտությունը: Ուշագրավն այն է, որ ռուսերեն нос (քիթ) բառը հին ռուսերենում շնչառական ու հոտառական օրգանից բացի ունեցել է նաեւ «հուշատախտակ» փոխաբերական իմաստը, որի վրա մարդիկ հիշելու նպատակով փորագրում էին իրենց մտքինը:

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Չի՞ սպառվում ԳԴՀ արտգործնախարար Բերբոֆին հայերիս վստահությունը

⇨1 Հայաստանի, Արցախի ժողովրդի, այնտեղ ապրող տղամարդկանց, երեխաների, ծերերի, կանանց կյանքի իրավունքի եւ սպանդի ենթարկվելուց հետո արժանապատիվ հողին հանձնելու իրավունքի մասին որեւէ հիշատակում չարեց Գերմանիայի արտգործնախարարը, այն բանից հետո, երբ ադրբեջանցի զինվորների՝ հայ ռազմագերիներին մահապատժի ենթարկելու գործողության տեսանյութը եզակի չմնաց, իսկ հայ զինվոր կանանց դիակների մասնատումները, խոշտանգումները տարածվեցին սոցցանցերի գերմանագիր տիրույթներում: Եւ ոչ միայն: Գերմանահայկական իրավաբանների միությունը բոլոր դեպքերը ներկայացրել է հանրային հարթակում, մասնագիտական գնահատական կցել, եւ դժվար է լուռ մնալ, եթե բարոյականության շաղիկը դեռ չի քայքայվել՝ մտավորի եւ հոգեւորի պահապան թաղանթ որպես:

Բերբոֆի տեքստի ուշադիր ընթերցողը կարող է հակադարձել՝ ինչո՞ւ ենք նրանից պահանջում, երբ Ժնեւում երկու տարի է, ինչ նույն սեղանի շուրջ նստելու արտոնությունն ունենք (ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում 2019-ի հոկտեմբերի 17-ին կայացած ընտրությամբ ՀՀ ընտրվեց Մարդու իրավունքների խորհրդի (ՄԻԽ) անդամ 2020-2022 թթ. ժամանակահատվածի համար- Ան. Հ.):

Միգուցե այս անգամ չանդրադառնայի ԳԴՀ արտգործնախարարի ճառին եւ դրանում արտահայտածի երկակի ստանդարտներին, եթե մեկ օր առաջ նախորդած չլիներ նրա խոսնակի՝ խայտառակ, ամոթալի, երկյուղած վարքը, որ ստույգ ներկայացնում եմ ստորեւ:

Հոկտեմբերի 10-ին ԳԴՀ կառավարության մամլո ասուլիսի ժամանակ արտգործնախարարության խոսնակ **Վագներին** գերմանացի լրագրողը հարց ուղղեց՝ «Ադրբեջան-Հայաստան հակամարտությանը կամ պատերազմին է վերաբերում հարցս. ԵՄ-ն առաքելություն է ուղարկելու սահման: Գերմանիան մասնակցելո՞ւ է այդ առաքելությանը: Եթե՝ այո, ի՞նչ ձեւով»:

Խոսնակը նախ փորձեց վերաբերմունք արտահայտել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայացած հանդիպման առիթով՝ «Մենք այսպես ասած ողջունում ենք այն: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առաքելություն տեղակայելու սկզբունքային համաձայնությունը փոքր առաջընթաց է եւ հաջողություն ԵՄ դիվանագիտության համար: Հիմա, իհարկե, նախ պետք է մանրամասները ճշտվեն ԵՄ-ի շրջանակներում: Մեր տեսանկյունից, սակայն, կարեւոր է, որ այդ առաքելությունն այնուհետեւ արագ գործի»:

Լրացուցիչ հարց տրվեց՝ «առաքելությունն ակներեւաբար պիտի տեղակայվի միայն Հայյաստանի սահմանին: Ինչո՞ւ Ադրբեջանում էլ չի տեղակայվելու: Արդյոք ԱԳՆ կասկածո՞ւմ է, որ այս դեպքում ադրբեջանական զորքերը մտել են հայկական տարածք, այն է՝ ներկա հակամարտության, պատերազմի նախաձեռնողն են»:

ԳԴՀ ԱԳՆ խոսնակը շեղվեց հարցի ուղիղ պատասխանից, հիշեցրեց, թե առաքելության մանրամասները դեռ պիտի հստակեցվեն, եւ դրանք հստակ լինելու պարագայում կանդրադառնան:

Հաջորդ հարցը, որ տեխնիկական խնդիրների պատճառով խոսնակին տրվեց երկրորդ անգամ, այսինքն՝ սրահի պատերն արդեն որերո՛րդ անգամ «անգիր արեցին», հետեւյալն էր՝ «ԱԳՆ կասկածնե՞ր ունի, որ այս անգամ հակամարտությունը սրվել է ադրբեջանական զորքի Հայաստան ներխուժմամբ: Կասկածո՞ւմ եք, թե՞ դա ձեր այս պահի իմացությունն է»:

Պատասխանն այս անգամ էլ խուսանավելու ոչ հաջող օրինակ էր՝ «Հրադադարին նախորդած հակամարտության, մարտական գործողությունների վերաբերյալ վաղուց արտահայտվել ենք, ավելացնելու որեւէ բան չունենք»:

Լրագրությունը համառություն է սիրում, հստակ պատասխան ակնկալում, իսկ գերմաներեն լեզուն այդ ճշգրտումը միշտ առաջնային պահանջ է դարձնում, ուստի՝ հետեւեց լրագրողի հստակ հարցը՝ «Առայժմ չգիտեք, թե Հայաստանը որ երկրից է հարձակման ենթարկվել: Միանշանակ՝ Ադրբեջանն է ներխուժել Հայաստանի տարածք: Հիմա սա ընդունո՞ւմ եք, թե՞ դեռեւս ձեւացնում, որ երկու կողմի միջեւ փոխհրաձգություն է եղել»:

ԱԳՆ խոսնակ Վագները փորձեց փարատել՝ «Այնքան էլ ճիշտ չէ: Մենք հակամարտությանն անդրադարձել ենք, չեմ կարող հստակ հիշել՝ երբ էր դա, բայց անցյալ շաբաթ էր»: Վագները հիշատակեց, որ անտարբեր չեն մնացել, արձագանքել են «սոցիալական ցանցերում առկա ադրբեջանցի զինվորների՝ հայ զինվորների վրա հարձակմանը եւ դատապարտել այն», եւ համաձայն չէ լրագրողի այն դիտարկմանը, թե վերաբերմունք, գնահատական չեն արտահայտել: Հիշեցնենք, որ «**Ազգ**»ի նախորդ համարում ծանուցել ենք, թե ԳԴՀ ԱԳՆ պատասխանելով Haypress-ի հարցմանը, դատապարտել էր ադրբեջանցի զինվորների՝ հայ ռազմագերիներին մահապատժի ենթարկելու տեսանյութում առկա բռնությունը, բայց ԱԳՆ կայքէջում չի հրապարակում նույն պատասխանը, ինչը շարունակում է ցայսօր, իսկ Վագները վերոբերյալ բանավոր պատասխանի մեջ մի նուրբ դրվագ անտեսում է՝ նրա «ադրբեջանցի զինվորների հայ զինվորների վրա հարձակումը» ձեւակերպումը ճիշտ է իհարկե, բայց ո՞ւմ է խնայում, երբ մոռանում է «հայ ռազմագերիների մահապատիժ» բառակապակցությունը:

Ուշադրություն, նորից գերմանացի լրագրողը լրացուցիչ հարց տվեց՝ «Խիստ ցնցադավում է ձեր այն գնահատականը, որ չեք ընդունում, թե ագրեսորն Ադրբեջանն է: Դուք շարունակում եք դա չընդունել: Ճի՞շտ է»:

Վագներն այսպես պատասխանեց՝ «Դուք ցնցադատում եք իմ գնահատականները: Բայց ես հակամարտության մասին այլեւս ասելիք չունեմ: Համենայնդեպս անդրադառնում եմ նրան, ինչ արդեն ասել ենք»:

Ի՞նչ պահանջենք այսպիսի խոսնակից, որին հրամայված է կա՛մ՝ հրահանգված, կա՛մ՝ պատվիրված, որ Ադրբեջանին ագրեսոր ճանաչելու, Հայաստանի տարածքային ամբողջականությունը խախտելու ձեւակերպում հանկարծ չանի:

Այս հատատությունից մեր գրավոր հարցերի պատասխանը չստացանք: Թեպետ այդ լռությանն առաջին անգամ էինք հանդիպում, այդուհանդերձ շատ չվիրավորվեցինք, քանզի արդեն տեսանելի է, թե ինչո՛ւ դրանք պատասխան չգան: Մեզ չզարմացրեց, բայց հիասթափվելու նոր առիթ դարձավ այն հանգամանքը, որ ՀՀ արտգործնախարարությունն էլ, ենթադրաբար, խոչընդոտեց, որ Բեռլինում ՀՀ դեսպանը գրավոր պատասխանի մեր մի քանի հարցի: Ուրախ ենք, որ Բեռլինում Հայաստանի դեսպանը սեպտեմբեր-հոկտեմբերին երկու հարցազրույց է տվել գերմանացի մեր գործընկերներին, բայց նրանց զրույցի թեման, մեղմ ասած, չի սպառում մեր հարցերի շրջանակը: Հոկտեմբերի 6-ին դեսպան **Վիկտոր Ենգիբարյանին** հղել էինք հետեւյալ հարցերը:

-Պարոն Ենգիբարյան, գերմանացիների `ինձ ուղղված հարցին չեմ կարողանում պատասխան գտնել: Դուք մեզ լուսավորեք: Ի՞նչ է ուզում Հայաստանն արտաքին աշխարհից:

-Սեպտեմբերի 16-ին RND-ին տված հարցազրույցում դուք ահազանգել էիք, թե Հայաստանին սպառնում է Ադրբեջանի նոր ագրեսիան: Նշել էիք, որ մեր երկիրը նաեւ Գերմանիայի դիվանագիտական սատարման կարիքն ունի, ակնարկել Ադրբեջանի դեմ պատժամիջոցների մասին: Սակայն Գերմանիայի ԱԳՆ իր երդվյալ լռությունը խախտեց միայն հոկտեմբերի 4-ի երեկոյան՝ դատապարտելով ադրբեջանցի զինծառայողների՝ հայ ռազմագերիներին մահապատժի ենթարկելու փաստը՝ շեշտելով, որ այն ոտնահարում է միջազգային մարդասիրական իրավունքը: Բայց դեռեւս որեւէ գնահատական չի հնչել, թե ո՛վ է ագրեսորը, թե Ադրբեջանը խախտել է Հայաստանի տարածքային ամբողջականությունը: Փոխարենը առավոտից գիշեր դատապարտում է Ռուսաստանի ագրեսիան Ուկրաինայի հանդեպ: Հարցազրույցում առկա ձեր մտահոգությունների հրապարակային պատասխանը չենք տեսնում, գերմանացի պաշտոնատարները բանավոր ի՞նչ բացատրություն են տալիս:

-Գերմանիայի ԱԳՆ խոսնակի այն պատճառաբանությանը, թե իրենք հստակ գնահատական չեն կարող հնչեցնել, թե ագրեսորն ով է, քանի որ անկախ դիտորդներ չկան, փորձեց «օգնել» Ադրբեջանը: Բեռլինում իր դեսպանության պարիսպներից ի շարս տարբեր ատելավառ գրությունների ցուցադրեց, թե «Հայաստանը ահաբեկչական պետություն է»: Այդու փաստեց, որ իր ագրեսիան Հայաստանի սահմաններից դուրս էլ կարող է իրականացնել: ԱԳՆ խոսնակի, գերմանացի որեւէ պաշտոնյայի գնահատական չլսեցինք: Բայց զարմանալի է, որ ՀՀ իշխանավորի, պետության ներկայացուցչի պատասխանն էլ մեզ հասու չդարձավ: Պիտի լռե՞նք:

-Պարոն դեսպան, միգուցե դաժան է հնչում, բայց այն տրավորությունն է ստեղծվում, որ ժողովրդավար Հայաստանն այլեւս չի խոսում Արցախի ինքնորոշման մասին, այնինչ գերմանական մեդիան անընդհատ շրջանառում է ԼՂ-ի խնդիրը, նույնիսկ Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակման առիթ դա դիտարկում: Վերոհիշյալ հարցազրույցում դուք չէիք անդրադարձել Արցախի հարցին: Գերմանացի լրագրողը ձեզ հետ զրույցում հարց չե՞ր տվել, թե՞ Հայաստանն այլեւս չի արձագանքում, երբ Ադրբեջանի դեսպանությունը պատասխան գրում է «Ղարաբաղն Ադրբեջան է»:

Պրահա մեկնելու նախօրեին Հայաստանի վարչապետը գոհունակություն հայտնեց միջազգային արձագանքի վերաբերյալ, նույնը կրկնեցին եւ կրկնում են նրա բարձրաստիճան պաշտոնյաները, իսկ ՀՀ ԱԳՆ-ից չհնչեց որեւէ հրապարակային քննադատություն, երբ Ադրբեջանը պաշտոնական Բեռլինում իր սադրանքը, Հայաստանի եւ Արցախի հանդեպ իր ատելությունը ցուցադրեց, երբ Հուբերտուսալե 43 հասցեում գտնվող իր դեսպանության պարիսպներից կախ տվեց՝ «Հայաստանը ահաբեկչական պետություն է», «Ղարաբաղն Ադրբեջան է», «Դադարեցրե՛ք Հայաստանի հարձակումը Ադրբեջանի վրա» եւ այլ պատասխաններ: Բեռլինում Ադրբեջանի դեսպանությունն առաջին անգամ չէ, որ իր տարածքը թունավորում է ատելությամբ, բայց առաջին անգամ էր, որ Հայաստանի, հայության հանդեպ իր ագրեսիան, իր ոճրագործության շարունակականությունը մատուցում էր պարիսպների արտաքին մակերեսին ցուցադրելով, այդու չթաքցնելով, որ անպատիժ կարող է գործել ամենուր: Եթե Հայաստանը լուռ է կամ՝ առավել հստակ՝ հրապարակավ չի դատապարտում Բեռլինի լռությունը, բավարար համարելով այն հանգամանքը, որ ցուցադրատարներն այնուամենայնիվ հեռացվել են պարիսպներից, գերմանացիներին բնավ չի ազատում բարոյական պարտքից: Մի օր ահաբեկիչ այդ երկրի՝ Ադրբեջանի եւ նրա եղբայր կամ հայր Թուրքիայի ախորժակը կբացվի, եւ թուրքական գետնոներով բազմացող տարբեր քաղաքներ՝ Քյոլնի, Բեռլինի ընդարձակ թաղամասերը «անկախանալու» հայտ կներկայացնեն՝ զանց առնելով Գերմանիայի սահմանադրությունը...ցնծիծաղի առիթ չկա՝ նրանց քանակական եւ ագրեսիայի աճը տխուր վիճակագրություն է:

Բեռլինում Ադրբեջանի դեսպանությունը այս նկարն է նախընտրել ցուցադրել Պրահայում կայացած քառակողմ հանդիպումից:

Սա էլ կարենք. «Հավերժական Հայաստանը»՝ վկա

ՆԱԻՐ ՅԱՆ

Հայաստանը նրա համար Հայրենիք է, որովհետեւ երբեք օտար երկրում ծնված-ադրածի կենսագրությունը չի խանգարել նրան սեփական սրտի զարկով զգալ Հայրենիքի սրտի զարկը:

Թեհեյան մշակութային միության անդամ, ՀԲԸՄ վարչության անդամ, Բուենոս Այրեսի «Սարդարապատ» դարբերականի գլխավոր խմբագիր, արգենտինահայ Սյուզաննա Տեր-Կարապետյան-Նահապետյանն այս օրերին Հայաստանում է՝ մասնակցելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 92-րդ վեհաժողովին: Վերջին անգամ 3 տարի առաջ է եղել Հայաստանում, թեեւ 2020-ին որդու հետ Հայաստան գալու ինքնաթիռի տոմսերն արդեն ձեռքին էին. համավարակն ամեն ինչ տակնուվրա արեց, խափանեց:

«Ազգ»-ի հարցազրույցը Սյուզաննա Տեր-Կարապետյան-Նահապետյանի հետ ոչ միայն նրա հայաստանյան այցի առիթով է, այլեւ այն հայանպաստ մեծածավալ գործունեության, որ տասնամյակներ շարունակ արվել ու արվում է արգենտինահայ ու առհասարակ Սփյուռքի տարբեր գաղթօջախներ-ի, Թեհեյան միության համար:

-Տիկին Սյուզաննա, լսել ենք, որ Արգենտինայում Թեհեյան մշակութային միության շենքը վերանորոգել եք, այն պատրաստ է նոր նախագծերի, մարդկանց նոր շրջանակներ ընդունելու համար: Հայաստանում դժվար թե իմանան շենքի պատմությունը: Կներկայացնե՞ք:

-Ազգային բարեւար **Ալեք Մանուկյանը** մի օր եկել է Արգենտինա, հանդիպել **Նահապետ Նահապետյանին** ու հարցրել՝ տղաս, դուք՝ ռամկավարներով, որտե՞ղ եք հավաքվում: Սրճարանո՞ւմ:

Նահապետ Նահապետյանը, որ սկեսրայրս է, այդ պահից սկսած՝ պատվախնդրությամբ է լցվել ու, չնայած որ ինքը տուն, սեփականություն չուներ, 50 տարի առաջ Արգենտինայում Թեհեյան մշակութային միության, «Սարդարապատ» ամսաթերթի, Ռամկավար ազատական կուսակցության համար առաջին հողակտորն է գնել: Գնել եւ նվիրել է ՌԱԿ-ին, թեհեյանականներին:

Բուենոս Այրեսի կենտրոնում, Պալերմո թաղամաս, Արմենիա 13/29 հասցեում՝ Սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարի եւ ՀԲԸՄ դիմաց գտնվող հողակտորի վրայի հին տունը դարձավ Թեհեյան մշակութային միության, «Սարդարապատ» ամսաթերթի եւ ՌԱԿ-ի հանգրվանը: Այն 1991-ին վերակառուցվեց, իսկ բոլորովին վերջերս իմ նախաձեռնությամբ վերանորոգվել է, ժամանակակից տեսք ու շունչ ստացել:

-Փաստորեն, շենքը երկար տարիներ ծառայել է թեհեյանականներին ու «Սարդարապատին» եւ արդեն նորոգման կարիք ուներ:

-Այո: Վերջին 8-10 տարում, չնայած որ շենքը վերանորոգված չէր, բայց շատերին էր գրավում: Այն պատկերասրահի, մշակութային հաստատության դեր էր կատարում, որի դռները միշտ բաց էին հայ արվեստագետների համար: Համավարակի ընթացքում, սակայն, ստիպված էինք չաշխատել: Մեր դռները փակվեցին, ինչի պատճառով շենքը վնասվեց, տանիքից ջուր էր հոսում: Արվեստագետ Մանուել Ղերիդյանը Թեհեյան մշակութային միության պատին 6-7 մետրանոց որմնանկար էր արել՝ Վարդանանց թեմայով: Բարեբախտաբար, նկարը չէր տուժել: Որոշեցինք շենքը վերանորոգել, սրահները նոր տեսքի բերել, ժամանակակից ոճով դիզայներական լուծում տալ եւ անպայման վերելակ ունենալ: Հիմա ԹՄՄ-ի Բուենոս Այրեսի շենքը կատարյալ լուծումներով, հարմարավետ ու գրավիչ շինություն է:

-Շենքն արդեն վերջնական տեսքի՞ է բերվել, թե նորոգման աշխատանքները շարունակվում են:

-Ներսի աշխատանքները դեռ ընթացքի մեջ են: Եթե մեզ հայերն են դիմում՝ ցուցահանդեսի, ֆիլմ ներկայացնելու, առհասարակ՝ արվեստ կամ արհեստ ցույց տալու համար, սրահները տրամադրում ենք անվճար, իսկ ոչ հայերին՝ վճարովի: Քանի որ շենքը հարմարավետ է, գեղեցիկ, նորառած, շատերն են ուզում այդ տարածքում տարբեր գործունեություն ծավալել: Օտարազգիներից գանձած գումարով կարողանում ենք շենքը պահել, մեր ծախսերը հոգալ:

-Տիկին Սյուզաննա, տեսնում եմ՝ զրուցում եք ու միաժամանակ անընդհատ առցանց հետեւում «Սարդարապատ»-ին, հոդվածներ եք տեղադրում ու տարածում: Լիարժեք անցել եք վիրտուալ հարթակի, հե՞տ եղավ անցումը տպագիր մամուլից՝ առցանցի:

-«Սարդարապատը» 1975 թվականից ՌԱԿ պարբերականներից մեկն է հանդիսանում: Սկզբում հրատարակվում էր պորտուգալերեն, հայերեն եւ իսպաներեն: Տպագրվում էր, հետո փոստով այն ցրում էինք աշխարհի տարբեր անկյուններ: Փոստի ծախսը տպագրությունից ավելի թանկ էր նստում: 3000 օրինակով էր լույս տեսնում: 2008-ից սկսեցինք pdf ֆայլերով «Սարդարապատի» համարներն ուղարկել հայկական տարբեր գաղթօջախներ: Իսկ թերթի թղթային տարբերակն անվճար տարածել հայկական տարբեր կրթօջախներում, եկեղեցիներում, ամենուր: Եկավ համավարակի ժամանակաշրջանը, որն անգամ մարդկանց սովորույթներն ու ավանդույթները փոխեց: Շատերը վախից խուսափում էին անգամ թերթին դիպչել: Բայց մինչ համավարակը, մենք արդեն նկատել էինք, որ շաբաթաթերթի ձեւաչափը հնացել է: 2020 թվականի հունվարից սկսեցինք աշխատել առցանց տարբերակով՝ շուտով գործի դնելով նաեւ հեռախոսային հավելվածը: Տարատեսակ լուրեր են տեղադրվում, տարածվում՝ տարբեր լեզուներով, որը հիմնականում ես եմ անում: Նյութերը տարբեր լրատվականներից եմ վերցնում, նաեւ՝ «Ազգ»-ից: Կրտսեր որդիս շատ հետաքրքրված է հայկական անցուդարձով, աշխարհի տարբեր անկյուններում, որտեղ որ հայերին առնչվող իրադարձություն է լինում, նա ինձ է ուղարկում, ես թարգմանում եմ, տեղադրում, տարածում Տելեգրամյան ալիքներով, Ինստագրամով, Թվիթերով, Ֆեյսբուքով:

-2020 թվականը համաշխարհային ճգնաժամի տարի էր: Համավարակը խափանեց ամեն բան ու մարդկանց ստիպեց աշխատելու նոր ձեւաչափեր, նոր ելքեր գտնել: Դուք ինչպե՞ս հաղթահարեցիք 2020-ը:

-Մինչ պատերազմը, «Սարդարապատը» ժամանակակից տեխնոլոգիաներով արդեն ադապտացվել, ինտեգրվել էր ընթերցողների շրջանակում: «Սարդարապատի» թերթային տարբերակն այլեւս լույս չի տեսնում: Համավարակի պատճառով Արգենտինայում հրատարակիչների մեծ մասը սնանկացավ, հնարավոր չէր թուղթ գտնել: Հիմա էլ է Արգենտինայում թե՛ թուղթ ձեռք բերելը, թե՛ թղթի համար դոլարով վճարելը շատ դժվար է:

Լավ էր, որ 2020-ին մենք արդեն անցել էինք առցանց տարբերակի: Հայաստանում պատերազմն սկսվեց, եթե «Սարդարապատը» շաբաթաթերթ լիներ, ինչպե՞ս էինք տալու արցախյան լուրերը, երբ իրադարձություններն ամեն րոպե փոխվում էին: Առցանց տարբերակով դա լիովին հնարավոր էր, ու մեր աշխատանքը շատ արդյունավետ էր: Սեպտեմբերի 7-ին արդեն սկսեցինք աշխատել նաեւ անդրադարձի համար հավելվածով, իսկ 20 օր հետո Արցախում սկսվեց պատերազմն, ու մենք հայաստանյան իրադարձությունները լուրի վերածելու, տեղադրելու, տարածելու հնարավորություն արդեն ունեինք:

Հայաստան, Սփյուռք, եկեղեցի, հայկական հաստատություններ, տեղական, միջազգային, սոցիալական լուրեր, տարեդարձներ: Շատ կարեւոր է, որ այդ լուրերը լինեն թե՛ հայերեն, թե՛ անգլերեն: Մեծ ուշադրություն ենք դարձնում աշխարհահռչակ հայերի մասին տեղեկություններին: Մենք օգտագործում ենք նոր տեխնոլոգիաներն ու ներկայացնում համակողմանի լրատվություն: Նախկինում ներկայացնում էինք միայն Հարավային Ամերիկան ու Հայաստանը, իսկ հիմա՝ ամբողջ աշխարհը:

-Խոսենք այն ներկայանալի, կարեւոր աշխատանքի մասին, որ վերջերս եք ավարտին հասցրել: Ձեր կրտսեր որդին, չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ ազգանվեր գործ է արել՝ հավաքելով, կազմելով Հայաստանի, հայ մտքի հավաքական, խտացված ամբողջություն այս գիրքը: Ո՞րն էր այս նախաձեռնության շարժառիթը:

-Կրտսեր որդիս՝ Ալեքս Նահապետյանը, շատ է լինում տարբեր միջավայրերում, նոր մարդկանց հետ է ծանոթանում, նա հմուտ կազմակերպիչ է եւ զբաղվում է նաեւ տարբեր ծրագրերում ներդրումներ անելով: Մի անգամ որդուս գործընկերներից մեկը, որ դարձյալ ներդրումներով է զբաղվում, ասաց, որ Անդորրայի, Կասալոնիայի մասին գրքեր է հրատարակել: Ալեքսն էլ առաջարկեց այդպիսի մի ժողովածու հրատարակել Հայաստանի մասին: Համաձայնության եկան:

Գրքի երկարությունը 70 սմ է, լայնությունը՝ 50, հաստությունը՝ 20: Քրիստոսից առաջ 188 թվականից սկսած՝ հայ ժողովուրդն ինչ ճանապարհ է անցել, ինչ դժվարություններ է տեսել, ինչպիսի մշակույթ, ազգային հոգեւոր արժեքներ է ստեղծել, պատմական ինչ ճանապարհ է անցել, ինչպես է պայքարել, դեգերել, ինչպես է պահպանել ազգային ինքնությունը, քրիստոնեական հավատը, լեզուն, մշակույթը, այս ամենը 41 հիմնական փաստաթղթերով ներկայացված է «Հավերժական Հայաստան» ժողովածուում: Գիրքը տպագրվել է 991 օրինակով: Ուսումնասիրվել են Հայաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Մեծ Բրիտանիայի ու այլ երկրների ավելի քան 20 արխիվները, մանրամասնորեն հետազոտվել են Հայաստանին ու հայ ժողովրդին առնչվող փաստաթղթեր, որոնց ընտրությունն ու մեկնաբանությունը վստահվել են հայոց պատմության երկու մասնագետի: Նրանցից մեկը հին ու միջին դարերի մասնագետ, Սորբոնի համալսարանից **Զուսթ Թրաինան** է, մյուսը՝ **Ալդո Ֆերարին՝** հայ ժամանակակից պատմության մասնագետ՝ Վենետիկի համալսարանից: Նրանց օգնել են եւս երկու դոկտոր-պատմաբան՝ Իտալիայից: Նրանցից **Պաոլո Լուկան** 2019 թվականին եկել է Երեւան՝ մի քանի փաստաթղթերի հետ կապված որոշ հարցերով դիմել Մատենադարանին:

⇨12

ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ
պրոֆեսոր

Լայնախոհության, բռունցքվելու եւ գոյատևման ժամանակն է

«Ամեն սերունդ ունենալու է իր միամիտը, որը ճշմարտությունը կասի այնպես, ինչպես կտեսնի»:
ԲՈՐԻՍ ՊԱՍՏԵՌՆԱԿ

Այդպես էլ ինքներս մեզ հարց չենք տալիս, թե ումի՞ց ենք արդարադատություն պահանջում: Այն ասյանների՞ց, որոնցում ազդեցիկ ձայն ունեցող երկրները այրում, փոշիացնում, առանց ցավի նշույլի անգամ հանուն աշխարհաքաղաքական մութ նպատակների, օրական հազարավորների զրկում են ընդամենը մեկ անգամ տրված կյանքից: Իսկապես, ինչ արժեք կարող է ունենալ ՄԱԿ-ի, ՄԻԵԴ-ի կամ մեկ այլ կազմակերպության ինչ-որ որոշում, երբ ծաղիկ կյանքեր են խլվում: Վառել, մոխրացնել, ջնջել, ահա՛ ճանապարհը, իսկ եթե անկարող ենք, գոնե եկեք չաղերսենք, գոնե հոխորտանք՝թե սպասեք, դեռ կտեսնեք: Թե չէ՝ մուրալ Ցեղասպանության ճանաչում, մուրալ Արցախի կարգավիճակ, հիմա նաեւ Հայաստանի անձեռնմխելիություն, վե՞րջը: Չենք առաջարկում խելահեղ արարքների գնանք, բայց գոնե մեր արժանապատվությունը պիտի պահե՞նք, թե՝ ոչ: Չմոռանանք, որ դեռ երբ է մարդկային արդարության բաց ճակատին թքել Սիամանթոն: Ասված իմ, էս ինչքան մեղք ենք դարձել աշխարհի բութ հայացքի ներքո: Ու ամենացավալին էլ այն է, որ հսկայական գումարներ ենք ծախսում այդ փուչ կառույցների հավաքներին մասնակցելու համար, կամ քանի փողկապավոր պարոն ու անփողկապ տիկին են վարկաուներիս հաշվին վարձատրվում այդ եվրոբյուրոկրատիայի առջեւ ֆենատարած կեղծ ժպիտներով պար գալու համար:

Այս խորապատկերի վրա էլ հոկտեմբերի 2-ին, կիրակի երեկոյան, ՀՀ ԱԳ խոսնակը սոցիալական ցանցերով կարճ գրությամբ տեղեկացրեց, որ «Ժնեւում մեկնարկեց Հայաստանի ԱԳ նախարար **Արարատ Միրզոյանի** եւ Ադրբեջանի ԱԳ նախարար **Ջեյհուն Բայրամովի** հանդիպումը»: Բոլոր ՁԼՄ-ներն էլ իրար հերթ չտալով նույնությամբ շտապեցին ժողովրդին փոխանցել այդ լուրը: Իսկ հետո՝ ոչ մի տեղեկություն: Դե բոլորն են հասկանում, որ հերթական շոու է, ի՞նչ ասեն կամ գրեն: Ուզում եմ հավատալ, որ քիչ-քիչ հնարավոր է խելքի գանք, շոուներով շատ չոգեւորվենք, այլ սկսենք սթափվել վերջապես, աշխատել ու հզորանալ: Դա է միակ ելքն այս ամենից, քանի որ միշտ էլ «ուժն է ծնել իրավունքը»: **Խրիմյան Հայրիկին** ու իր Երկաթե շերեփի հայցնի քարոզը մտաբերեցի: Այսօր էլ է այն ավելի քան արդիական, այնպես չէ՞:

Հատկապես որ մեծ թվով փորձագետների կանխատեսումով Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության մեջ 2022-ի հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսները ծանրերից են լինելու, քանի որ միջազգային կազմակերպությունների եւ գերտերությունների ղեկավարների հետ հաճախակի դարձած բանակցությունները եւ իրար հաջորդող հանդիպումները ոչ մի լավ բան չեն խոստանում: Հոկտեմբերի 6-ին էլ Պրահայում հանդիպեցին **Նիկոլ Փաշինյանը** եւ **Ռեջեփ Էրդողանը**: Նպատակը ակնհայտ է. օգտվելով Ռուսաստանի շուրջ ձեւավորված իրավիճակից, Արեւմուտքը փորձում է այսպես կոչված կարգավորման նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը: Գինը՝ Արցախի ճակատագիրն է եւ Հայաստանի անվերապահ հնազանդեցումը համաթուրքական կամքին: Ու թեեւ իրավիճակն այս առումով կանխատեսելիության ցածր աստիճան ունի, սակայն ավելորդ իլյուզիաներ պետք չէ ունենալ, այլ անել ամեն ինչ եւ պատրաստ լինել պատերազմի: Ինչո՞ւ, որովհետեւ՝

1. Նախ «Եվրոպական քաղաքական համայնքը» այն հարթակը չէ, որտեղ հնարավոր կլիներ նման մակարդակի «գործարքները» կյանքի կոչել: Սա հասկանում են նաեւ մեր թշնամիները: Նախաձեռնությունը ֆրանսիական է, իսկ հենց Էրդողանը Պրահայում տեսախցիկների առաջ կոչ էր անում Ֆրանսիայի նախագահ **Մակրոնին** միանալ թուրքալեզու երկրների կազմակերպությանը: Հարթակը, որի նախաձեռնողն է նման ծաղրի ու հեգնանքի արժանանում, արդեն իսկ լավատեսություն չի ներշնչում: Հետո էլ, ներքին հակասությունների ծանրության տակ Եվրոպան ինքն է այսօր դժվար ժամանակներ ապրում, ինչը նվազեցնում է կարգավորման գործի նախաձեռնության համար անհրաժեշտ սկզբունքայնությունը:

2. Գագաթաժողովի շրջանակներում, եւ դրանից հետո էլ, Էրդողանի եւ Ալիեւի հեգնական, սպառնալից ու վերջնագրային հռետորաբանությունը, խոսում է հենց թշնամու մոտ խաղաղության ձգտելու կամքի բացակայության մասին: Էրդողանի հեգնական այն ակնարկը, թե Հայաստանի հետ ինչպես վարվել ենք, շարունակելու ենք այդպես էլ վարվել եւ Ալիեւի այն լրացումը, թե խաղաղության պայմանագիրը չի կարող շրջանցել ադրբեջանական հինգ նախապայմանները, հիմք են տալիս կարծելու, որ Ադրբեջանն ու Թուրքիան այս գործընթացով պարզապես խաղադրույքներն են բարձրացնում եւ փորձում անուղղակի կերպով ներգործել Ռուսաստանի՝ այս հարցում ունեցած տարբերվող տրամադրության վրա:

3. Ալիեւը Պրահայում հայտարարեց, որ Ադրբեջանը նախատեսում է զգալիորեն ավելացնել գազի արտահանումը Եվրոպա՝ դառնալով Մայրցամաքի էներգետիկ ռազմավարական կարեւոր գործընկերը: Նրա խոսքով՝ «աշխարհում ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը կտրուկ ավելացրել է Ադրբեջանի ռեսուրսների պահանջարկը: Ադրբեջանը սկսել է ինչպես նոր գազային հանքավայրերի շահագործումը, այնպես էլ ավելացնում է գործող հանքավայրերի արդյունահանումը, որը կօգնի մինչեւ 2027 թվականը դեպի Եվրոպա արտահանման ծավալները հասցնել նվազագույնը 18 միլիարդ խորանարդ մետրի»: Սա դեռ չհաշված Ադրբեջանից Եվրոպա արտահանվող նավթն ու էլեկտրաէներգիան:

4. Պրահայի գագաթաժողովից հետո Բաքվում Ռուսաստանի դեսպանատան դիմաց հավաքվեցին թուրք-ազերի ակտիվիստներ, որոնք պահանջում էին Ղարաբաղից դուրս բերել ռուս խաղաղապահներին՝ «Օկուպացիոն ռուսական բանակ, հեռացի՛ր Ղարաբաղից» գրությամբ: Ավելին, նրանք վանարկում էին՝ «Ռուսական բանակը կատարեց Խոջալուի ողբերգությունը՝ «Արյունոտ հունվար», «քանի դեռ ռուսական բանակը մնում է, օկուպացիան չի ավարտվի» եւ այլն: Միամտություն է կարծել, թե նման միջոցառումներն ու զուգադիպությունները Ադրբեջանում տեղի են ունենում առանց իշխանությունների հրահրման:

5. Մտահոգիչ է ու վիրավորական նաեւ հայկական իշխանական շրջանակներից ակնկալվող պաշտոնական գնահատականների բացակայությունը: Պաշտոնական Երեւանը սեփական ժողովրդի հետ անկեղծ լինելու խնդիր ունի եւ այս անորոշությունն ավելի մեծ

աղետ է կանխորոշում: Չկա համարձակություն (գուցե նաեւ ցանկություն)՝ կանգնելու եւ հայտարարելու, որ «խաղաղության օրակարգը» հանրությանը նետված հերթական կեղծիքն է եւ որ անհրաժեշտ է պատրաստվել ոչ թե ուղղակի պատերազմի, այլ գոյատևման:

Այսքանից հետո թե ո՞րն է մեր իշխող վարչակարգի կամքի ծավալման շրջանակը, ոչ ոք չգիտի, անգամ նա, ով Հայաստանի կողմից հանդես է գալիս «խաղաղության» թիվ մեկ պրոպագանդիստի դերում: Տպավորությունն այն է, որ վերջնական տեսքի է բերվում Հայաստանի անկման գործարքը: Մի բան, որը բացառված չէ, քանի որ արդեն պարզ երեւում է, որ Մեծ Բրիտանիային ու ԱՄՆ-ին պետք են մեր տարածքների հանքերը, որոնց շահագործման լավագույն ճանապարհը թուրքական դարպասն է:

Բոլոր դեպքերում կարծում եմ, որ Ռուսաստանն իհարկե չի պատրաստվում զիջել Հայաստանը: Սակայն պատմական փորձն էլ ցույց է տալիս, որ շատ անգամ է եղել, երբ աշխարհաքաղաքական առեւտուրը մեզ ու մեր շահերը հետին պլան է մղել: Հետո էլ ակնհայտ է, որ եթե մենք տեր չենք կանգնում մեր երկրին, ապա բոլորը պատրաստ են հոշոտել մեզ: Կասկածից էլ դուրս է, որ կկորցնենք ամեն ինչ, եթե շարունակենք հանրային լռության մեջ մնալ: Իրական ցավոտն ու ողբերգականը նոր է սկսվում, որովհետեւ Ուկրաինական չորս մարզերի միացումը Ռուսաստանին Արեւմուտքը չի մարսի եւ հակառուսական սանկցիաները նոր թափ կհավաքեն: Ռուսաստանն էլ սպառնում է դադարեցնել նավթի ու գազի մատակարարումը Եվրոպային, իսկ առջեւում ձմեռ է ու ցուրտ է լինելու: Ալտերնատիվ են ընտրվել ադրբեջանական նավթն ու գազը, որի դիմաց էլ, չնայած հայ գերիներին գնդակահարելու փաստից «խիստ զայրացած լինելուն»՝ Եվրոպան «սիրաշահված» սկսել է լողզված հայտարարություններ անել, իսկ իրականում՝ հայրական ներողամտությամբ շոյել ազերիների գլուխները:

Հայ մեծ մտածող **Հրանտ Մաթեւոսյանը** հանճարեղ է ասել. «Ասում են խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է գեղեցիկ- երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է»: Տեսնես նա կանխատեսո՞ւմ էր այս վիճակը, որից ուղղակի շնչահեղձ կարելի լինել: Իսկ այսպես խեղճացած, պարտվածի հոգոկերտվածքով երկրիս ղեկավարը Էրդողանի հետ հանդիպում էր, որ ի՞նչ աներ: Այն Էրդողանի, որի ղեկավարած Թուրքիան Ուկրաինայի ռազմածովային ուժերի համար կառուցել եւ օրերս շահագործման է հանձնել «Գետման Իվան Մազեպա» նավը, որի հանդիսավոր արարողությանը Թուրքիայում ներկա է գտնվե Զելենսկիի կինը: Այն Էրդողանի, որի մամուլի քարտուղար եւ խորհրդական **Իբրահիմ Կալինը** Թուրքիայում հանդիպել է ԱՄՆ-ի ազգային անվտանգության հարցերով խորհրդական **Ջեյք Սալիվանի** հետ, որի մասին Հունաստանի հետ կապված մի քանի ակնարկներից բացի, այլ մանրամասնություններ չեն էլ հաղորդվում: Այն Էրդողանի, որի փեսա **Սելջուկ Բայրաքթարի** հետ հանդիպելու համար օրերս Թուրքիա է մեկնել Ուկրաինայի նախագահի գրասենյակի ղեկավար **Սերգեյ Երմակը** եւ նրան հանձնել «Ուկրաինայի առաջ ունեցած ծառայությունների համար» Զելենսկու պատրաստած հատուկ շքանշանը, ինարկել երկկողմ համագործակցության խորացման, Ուկրաինայում կառուցվող անօդաչու թռչող սարքերի համատեղ գործարանի հետ կապված մանրամասնություններ եւ այլն: Իսկ մենք էլ այդ ընթացքում շարունակում ենք «ռուս-թուրքական եղբայրության» անգլոսաքսոնական քարոզչական հիմարությունը պտտել: Անկախ իմ կամքից, կրկին մտածում եմ՝ քանի որ հայերը հին ժողովուրդ են, բնական է նրա մեջի հիմարներն ու զոմբիներն էլ են հինավուրց: Դրա համար էլ Ահադի, Էլամի, Բաբելոնի զոմբիները վաղուց վերացել են, իսկ մեր զոմբիները առասպելական տոկունություն են ցուցաբերում, ամենաանելանելի թվացող վիճակներից էլ փյունիկի պես վեր են հառնում ու երկրիս հերն անխնա անիծում:

Իսկապես, ժամանակն է իրական լայնախոհություն դրսեւորենք, սեւ ու սպիտակ, հին ու նոր բաժանումներից ձերբազատվենք, բռունցքվենք ու ազգովին գոյատևման դուրս գանք, հակառակ դեպքում, արդեն ուրվագծվում է, որ ամեն ինչ կկորցնենք...

1-10.10.2022

Համահայկական գիտաժողով Վանաձորում

Վանաձորում կայացավ Համահայկական գիտաժողովը, որը կազմակերպվել էր ՀՀ գիտության կոմիտեի, Երեւանի պետական համալսարանի եւ Ա Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի համաֆինանսավորմամբ եւ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի աջակցությամբ: Գիտաժողովի կազմակերպչական աշխատանքներին մասնակցել են նաեւ այլ կազմակերպությունների գիտնականներ:Գիտաժողովի նպատակն էր խթանել գիտության զարգացումը, հանրապետությունում ստեղծել կարեր գիտահետազոտական ինստիտուտների ու համալսարանների գիտնականների միջեւ:Այն կնպաստի միջգիտակարգային հետազոտությունների եւ միջառարկայական կարերի հաստատմանն ու զարգացմանը:

Համահայկական գիտաժողովը Գիտական խմբերի մեկնարկի աջակցության եւ 2021թ. կազմակերպված Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության եւ Առաջատար հետազոտությունների աջակցությանն ուղղված մրցույթների հրապարակային հաշվետվությունն էր: Հնգօրյա գիտաժողովի ընթացքում տարբեր ոլորտներ ներկայացնող մոտ 90 մասնագետներ ներկայացրեցին իրենց հետազոտությունները:

Արդարեւ, գիտական յուրաքանչյուր միջոցառում կարեւոր է որպես գիտնականների փորձի փոխանակում եւ կարերի ընդլայնում:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ

Նոր արտագաղթ... Յավալի իրականություն...

ԱՆԺԵԼԱ ՍԱՀԱԿՅԱՆ
Փարիզ

Մեր երկրում արտագաղթը սկիզբ է առել 1991 թվականից, ահեղ երկրաշարժի, մութ ու ցուրտ օրերի, սովի ու պատերազմի հետեւանքով:(*) Երբ երկիրը մի փոքր կայունացավ, շատերը վերադարձան, նրանց դժկամությամբ ընդունեցին, ամենուր մերժված էին ու սիրված կրկին արտագաղթեցին:

Հիմա, երբ նոր ու պարսված պատերազմից հետո այսպիսի իրավիճակ է, իմ զրույցներում ընկերներիս ասել էի, որ շուտով 1991- ի արտագաղթը նույն կերպով թափ կառնի, ամեն ինչ կանեն, որ ծայրահեղ վաս վիճակում գտնվող ու դժգոհող մարդիկ հեռանան:

Այլեւս, դժբախտներն ու դժգույները մեր երկրում տեղ չունեն:

Շատերն են հիշում, թե ինչպիսի ահռելի թվերի էր հասնում 90- ականների արտագաղթը: Մոսկվայի չվերթներն ի՞նչ գին ունեին, ինչպե՞ս էին մարդկանց տեղափոխում, ինքնաթիռներում ոտ դնելու տեղ չկար: Մարդիկ իրար գիրկ նստած, մյուսներն էլ՝ կանգնած:

Այդպես դուրս նետեցին մարդկանց ու հայրենիքը երբեք չմտահոգվեց նրանց ճակատագրով:

ԱՐՏԱԳԱՂԹ... Այս ցավագին նյութի շուրջ, բոլոր ժամանակներում, իրենց մտորումները, խորհրդածությունները, մտահոգությունները, նաեւ վրդովմունքն են արտահայտել գրողներ, լրագրողներ, արվեստի ու հասարակական-քաղաքական գործիչներ:

1900 թվականին գրված Էդվարդ Ակնունու (Խաչատուր Մալումեան) «Դէպի երկիր» հուշագրությունը կարծես այս օրերի համար է գրված:

«Դէպի Երկիր» հուշագրության գլխագիրն է.

Ամէն տեղ է որոնում հայը ապաստան

Բացի այն երկրից, որ կոչւում է Հայաստան:

Լիրիկական այս խորունկ երկտողի տակ զգալով հայ շինականի ապրած տառապագին օրերը Ակնունին գրում է.

Գնում է հայը՝ կնճիռը ճակատին, յոյզը ուրսում:

- Ո՞ւր, հայ շինական:
- Ղարիբութիւն:

Գնաց:

...Գնում է հայը՝ վէրքը ճակատին, երկիւղը ուրսում:

- Ո՞ւր, հայ երիտասարդ:
- Օտար աշխարհ:

Եվ Եգիպտոսն ու Կիպրոսը, Կովկասն ու Բալկան հերիք չեղան հայ հալածական պանդխտին:

Ծովեր անցաւ, Ամերիկա հասաւ: Օտար աշխարհում նրա լեզուն բացվեց, ցույց տվեց իր մարմնի վերքերը, ուրսի խոցերը: Անպաճոյճ, բայց հուզիչ լեզուով պատմեց ծերուկ հոր սպանութիւնը, կաթւածահար մոր առաջ մասաղ քրոջ փախցնելը. նկարագրեց հարեւանի թալանը, ամբողջ գիւղի ավերումը եւ իր հուսահատ փախուստը»:

Կարդալով «Դէպի Երկիր» 32 էջից բաղկացած այս գրքույկը, բազմիցս հանդիպեցի **տարագիր, անտուն, վիրավոր, թափառական, օտար, ծվարած, խեղճ, կարոտ, արցունք, տառապանք, անօթեւան, աղերսագին, մուրացկան**, եւ նմանատիպ շատ-շատ հոգեցունց բառերի, որոնք, ցավոք, վերագրված են հայ մարդուն, այսինքն՝ մեզ, յուրաքանչյուրիս:

Այսօր էլ հայ մարդու ճակատագիրը նկարագրելիս, ցավոք, կրկին բնութագրում ենք այդպիսի բառերով...

Ինչ պատմություն ենք թողնում մեր ապագա սերունդներին: Դարեր շարունակ մեզ հալածել են, կոտորել են, տեղահան են արել, բնաջնջել են, թալանել են, բռնաբարել են: Կնշանակի, որ հայ ժողովուրդն առանց պաշտպանվելու դառնությամբ կուլ է տվել այդ ամենը՝ հետնորդներին փոխանցելով հայրենադավություն, փոքրամասնություն, մի բուռ հող եւ բազում չլուծված հիմնահարցեր...

Այստեղ տեղին է նշել **Մուշեղ Գալշոյանի** խոսքերը: «Սխալների համար, եղածի համար, մենք կարող ենք միմյանցից հաշիվ չպահանջել, բայց գալիք սերունդների հարցադրումներից խուսափել չենք կարող»:

Փորձենք բաց աչքերով երեւույթներին նայել իրական պատկերներով: Ոչ թե մտածենք հետեւանքների, այլեւ պատճառների մասին, ոչ թե հայրենիքը դատարկվելու, այլեւ հայրենիքում ծնված ու մեծացած մարդու իրավունքների ոտնահարման մասին :

Դարեր շարունակ վարժվել ենք ասելով՝ օտար ազգերը մեզ հալածել են, դրանից էլ դարձել ենք տարագիր... Իսկ ինչպե՞ս որակել հայրենիքում, սեփական հողի վրա հայի կողմից հայի հալածված լինելը, հայի կողմից հայի սպանվելը, այն էլ՝ դաժանաբար:

Ինչպե՞ս հասկանալ, երկրում՝ գիտնականի տիտղոսն արհամարհելը, պատմական արժեքները փոշիացնելը, ուսումնական համակարգը քանդելը, մտավորականին, աշխատավորին տարիներով աշխատավարձ չտալը, հողի մշակին սեփական հողից զրկելը:

Այսպես սկիզբ առավ 90- ականների արտագաղթը՝ ովքեր վստահ էին, որ օտար երկրներում կարող էին մի կերպ «գլուխ հանել»՝ գնացին: Մյուսները հույսով ու հավատով մնացին, ովքեր աշխատանք եւ արդուստի միջոց չունեին, տան իրերից մի բան վաճառեցին, գոյություն պահպանեցին: Ու երբ վաճառելու այլեւս ոչինչ չմնաց, արժանապատվորեն ապրած հայը, երկյուղով ու ամոթով, որ հանկարծ որեւէ մեկը չտեսնի, սկսեց փորփրել աղբարկղները, նրան ընդօրինակեցին մյուսները:

Ամենուր մանուկները ձեռքերը պարզեցին, հաց մուրացին: Աղջիկները դուրս ելան փողոց՝ մարմնավաճառության: Եվ այս ամենը տեսանելի աչքի համար դարձան սովորական երեւույթներ:

Տարիների վաստակ ունեցող թոշակառուն սովից մահանում էր իր տան չորս պատերի ներսում:

Ծանր հիվանդությամբ տառապող երիտասարդը մեռնում էր՝ գամված մահճակալին, որովհետեւ վիրահատության փող չուներ: Մայրն իր երեխային դպրոց չէր կարող ուղարկել, որովհետեւ ոչ միայն գրքի եւ տետրի փող չուներ, նաեւ՝ կոշիկի: Բնական գազից ու էլեկտրականությունից զրկված լինելու հանգամանքով, իրենց սառը պատերը տաքացնելու համար, բնակարաններում վառարաններ տեղադրեցին, ու երբ ցախ կամ փայտ չէր լինում, մարդիկ սիրված տան գրքերն էին վառում:

Ո՞ւմ համար պարզ չէր, թե այն ժամանակ (1991-1996թթ.) ովքեր էին մնացել Հայաստանում: Պաշտոնյաները՝ իրենց հարազատներով ու ազգականներով եւ նրանք, ովքեր այլեւս վաճառելու ոչինչ չունեին, հետեւաբար, ոչ մի հնարավորություն չունեին երկրից դուրս գալու: Ցավը կոկորդներում սեղմած, ցասումը համարելով անիմաստ, մի կերպ գոյություն պահպանեցին երանի՜ տալով նրանց, ովքեր փրկվել էին այդ կացությունից:

Վիքիպեդիա ազատ հանրագիտարանում կարդում ենք. «Արտագաղթ կամ էմիգրացիա (ծագել է լատ.՝ emigro - «վտարվում եմ» բառից), հայրենիքից հարկադիր կամ կամավոր հեռանալը մեկ ուրիշ երկրի մշտական կամ ժամանակավոր բնակության նպատակով՝ քաղաքական, տնտեսական կամ այլ շարժառիթներով»:

«Վտարվում եմ...», համոզված եմ, որ ոչ մեկը (անկախ ազգի պատկանելիության) կամովին իրեն չի վտարի իր ծննդավայրից, ընտանիքից, հայրենիքից՝ ուրիշ երկրում հաստատվելու, աշխատանք փնտրելու, լեզու սովորելու, մի կերպ գոյություն պահպանելու, հայրենիքի, հարազատների կարոտը ուրտը :

44-օրյա պատերազմից առաջ՝ գրել էի.

Մեր երկիրն աժմ կոչ է անում աշխարհասփյուռ հայերիս վերադառնալու հայրենիք, համոզված, որ այլեւս՝ Թավշյա հեղափոխությունից հետո, ամեն ինչ փոխվել է...

Եթե այս կոչը կրկին անգամ համընկներ 1946 - 1948թթ. Մեծ հայրենադարձության տարիներին, երբ խորհրդային երկաթե վարագույրը փակ էր պահում աշխարհում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական բախումներն ու իրադարձությունները, թերեւս նորից տեղի ունենար ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ :

Սակայն, ցավ ի սիրտ, համաշխարհային ԱՂԵՏ կոչված համացանցը, ԱՅՈ՛, ԱՂԵ՛Տ , օրվա իրադարձություններով, ապատեղեկատվությամբ, ահ ու սարսափ է առաջացնում, մարդու մոտ ջլատում վստահություն, վաղվա հանդեպ անորոշություն ու որ ավելի վտանգավոր՝ ՎԱԽ:

Բազմիցս անդրադարձել եմ, որ ավելի քան այսօր պետք է զանգվածային լրատվամիջոցները նախքան շտապելու որեւէ նյութ հրապարակել, լինեն տեղեկացված, խոսքը հիմնավորել փաստերով, առանց զգացական երանգների ու հետեւողական լինել իրադարձությունների հետագա զարգացումներին...

2002 թվականից, Փարիզի AYP FM ձայնասփյուռով «Հայ մամուլի տեսություն» հաղորդաշար ունեի, 2018 թ. դադարեցրել եմ, որովհետեւ չէի կարող լուսաբանել այն նյութերը, ուր մեր երկրում ներկայացվում էր, թե օրը քանի հանցագործություն է կատարվել Հայաստանում, ԱԱԾ-ն քանի բացահայտումներ է արել, քանի երիտասարդ տղաներ ու աղջիկներ փորձել են կամքից իրենց ցած գցել, ինչպես են մեր կանայք ամեն օր ենթարկվում բռնության, ինչպես են խարդախությամբ, դրամաշորթությամբ քայքայվում ընտանիքներ, ինչպես են խեղաթյուրվում ազգային արժեքները : Այս ամենն ինձ համար շատ ցավալի էր եւ նման երեւույթների համար ավելի մեծ ցավ են ապրում Սփյուռքի մեր հայրենակիցները:

Անշուշտ, մի հաղորդաշար կամովին փակելն ամենեւին էլ սպեղանի չէ:

Սփյուռքի բոլոր լրատվամիջոցները (հեռուստատեսություն, ռադիո, թերթ) անդրադառնում են Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, ցավոք՝ սեւեռվելով «ցնցող» նյութերին:

Օրվա լուրերը կարելի է անվանել քրեական տեղեկատվություն :

Համայն աշխարհով սփռվող Հայաստանի բոլոր հեռուստաընկերությունների լուրերով՝ բառիս բուն իմաստով բռնաբարվում են մեր երկրում տեղի ունեցող յուրաքանչյուր իրադարձություն, ավելին՝ բոլոր հեռուստաընկերություններից ամեն օր հեռարձակվող հեռուստանովելներով ներկայացվում են այնպիսի թեմաներ, որոնք իրենց անբարո, հանցագործ կերպարներով տարակարծություն ու հիասթափություն են առաջացնում:

Ես ամբողջովին համամիտ եմ ինձանից, եթե այն հիմնավորված է եւ ունի ուսուցողական, դեպի դրական ելքեր ուղղորդող հարցադրումներ ու լուծումներ:

Մենք բոլորս գիտենք, թե ինչպիսի հզոր ու ներգործող ուժ են հեռուստատեսությունը, ռադիոն ու տպագիր մամուլը:

Ամենօրյա լուրերը մեկը մյուսից անցնում են հիմնավորելով՝ «հեռուստատեսությամբ՝ իմ աչքով տեսա», «ռադիոյով՝ իմ ականջով լսեցի», «թերթում՝ կարդացի», հիմա էլ «ֆեյսբուքում՝ գրված էր»:

Մեր երկրում, որպեսզի, ինչպես ասում են՝ ամեն ինչ լինի պարզ ու թափանցիկ, առաջին հերթին պետք է զտել տեղեկատվական դաշտը : Ավելին՝ փակել ֆեյսբուքը, որտեղ մոլախոտի պես ծիլ են տվել ատելությունն ու դավադրությունը, լցվել կիսագրագետ տարրերով ու անդեմ հանցագործներով:

Ազատ խոսքը պետք է վեր լինի էժանագին բամբասանքից ու գռեհիկ պիտակներից :

Այո՛, պետք է պատժի ենթարկվի այն լրագրողը կամ անհատը, որը կփորձի անհիմն կերպով, այսպես ասած՝ բարոյազրկել որեւէ մեկին ու մնալ անպատիժ:

Մենք քանակով քիչ ենք, կարելի է ասել, միմյանց ճանաչում ենք, չի կարելի նախանձի հողի վրա հիմնահատակ վարկաբեկել միմյանց :

Նման մթնոլորտն էլ է նպաստում է արտագաղթին:

Այս օրերին տարբեր պատճառաբանություններով հազարավոր մարդիկ են ապաստան խնդրել եվրոպական երկրներից: Հիմնականում՝ երկրում տիրող անարդարությունն է եւ բռնությունը:

Դժվար չէ, որ յուրաքանչյուրն իր դժգոհությունն արտահայտի փաստերով եւ հիմնավորի իր փախուստը: Համացանցը հեղեղված է ոստիկանության բիրտ, անմարդկային արարքների նկարագրությամբ:

Ի ԴԵՊ...

Արտագաղթով չի կարելի հայրենադավության ու հայրենիքը չսիրելու որակումներով բնութագրել մարդուն:

Այնուամենայնիվ, մանավանդ հիմա՝ Ակնունու դեռեւս 1900թ. կոչը թող բոլորիս խորհելու տեղիք տա:

- ԴԷՊԻ ԵՐԿԻՐ...

) Արտագաղթը Հայաստանից սկսվել է ավելի վաղ, 1968-70-ական թթ.ից: Առաջին արտագաղթողները եղել են 1946-47 թթ.ին Ֆրանսիայից ներգաղթողները, Ֆրանսիայի այն ժամանակվա նախագահ Ժորժ Պոմպիդուի Մոսկվա կատարած այցից հետո, երբ նա Կրեմլի շեֆերին խնդրել կամ առաջարկել է նախկին ֆրանսահպատակներին ազատ թողնել իրենց բնակության երկիր վերադառնալու որոշման համար: Այդ արտագաղթին նպաստել է այն, որ Ֆրանսիան կենսաթոշակ էր վճարում իր նախկին քաղաքացիներին, առաջին հերթին՝ ֆրանսիական բանակում ծառայածներին: Այնուհետեւ, արտագաղթի ալիքը ուղղվել է դեպի Մ. Նահանգներ: Ըստ որոշ տվյալների, մինչեւ 1990 թ.ը 40-50 հազար մարդ Հայաստանից հեռացել է դեպի Ամերիկա: Արտագաղթի ալիքը, սակայն, ամենամեծն է եղել ու տեւական՝ դեպի Ռուսաստան ու խորհրդային այլ երկրներ: **Ծ.Խ.:*

Օրակարգում Սեւանի էկոհամակարգն է

2022թ. հոկտեմբերի 6-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Սեւանա լճի փորձագիտական հանձնաժողովի նիստում քննարկվեց Սեւանա լճի էկոհամակարգի վրա ոչ մեսաղական հանքերի ազդեցության հարցը:

Հանձնաժողովի անդամները ներկայացրեցին Սեւանա լճի ավազանում շահագործվող բոլոր հանքերի վերաբերյալ տվյալներ: Պարզվում է, որ ամեն գյուղ իր համար խարամի հանք է բացում: Ուսումնասիրության եւ շահագործման համար տրված է 8 լիցենզիա, բայց 2019թ. տիեզերական նկարով գոյություն ունի 38 մեծ ու փոքր փորվածք: Արդյունքում լանդշաֆտներն են փոխվում: Հնարավոր է էրոզիայի, սողանքների եւ փլուզումների առաջացում: Գետերի մեխանիկական աղտոտման պատճառով խախտվում է էկոհամակարգը: Չպետք է մոռանալ,որ գետերը Սեւանի ձկների ձվադրավայր են հանդիսանում:

Սեւանա լճի փորձագիտական հանձնաժողովի անդամները քննարկեցին նաեւ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ձիլի կոնգլոմերեկչային հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա թողած ազդեցության նախնական գնահատման հայտը: Քննարկվեց նաեւ Սեւանա լճի ափամերձ ջրածածկ եւ ջրածածկման ենթակա տարածքների մաքրման աշխատանքների կատարման ընթացքը:

2019թ. նախատեսվել էր Վարդենիսի մասնաճյուղի Ծովակ տեղամասում մաքրել 98 հա տարածք, սակայն մաքրվել է 78 հա: 2020թ. նախատեսվել էր 271 հա տարածքի մաքրում, սակայն մաքրվել է 66 հա: 2020 թ. սեպտեմբերի վերջին դադարեցվել են մաքրման աշխատանքները: 2021թ. մաքրման աշխատանքներ չեն իրականացվել ընդհանրապես:

2022թ. ընթացքում նախատեսված է Սեւանա լճի ափամերձ ջրածածկ եւ ջրածածկման ենթակա 64.8 հա տարածքների մաքրում: Սեպտեմբերի 12-ի դրությամբ մաքրվել է շուրջ 30 հա տարածք: «Սեւան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը հնարավոր է համարում մինչեւ տարեվերջ ավարտել նախատեսված աշխատանքները:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի դրոֆեսոր

Սա էլ կարդանք. «Հավերժական Հայաստանը»՝ վկա

⇨9 Ժողովածուի մի մասը ներկայացնում է հայ ժողովրդի քաղաքական զարգացման պատմությունը՝ սկսած Մեծ Հայքի անկախ թագավորության հիմնադրումից՝ Ք.ա. 188 թ., մինչեւ 1400 թվական՝ Լենկթեմուրի ներխուժումը՝ Կովկաս: Փաստաթղթերի կեսը գրաբարով է, մյուս մասը՝ հին հունարեն, լատիներեն, միջնադարյան ֆրանսերեն: 21 փաստաթուղթ, որ քարտեզներ են, գրքեր, գրված են գրաբար, ժամանակակից հայերեն, նաեւ՝ ռուսերեն, ֆրանսերեն, օսմաներեն: Դրանք թվագրված են 16-րդ դարից մինչեւ մեր ժամանակներ:

Բոլոր 41 փաստաթղթերը՝ բնօրինակի չափսերով, տեսքով ու գործածված նյութի բացառիկ նմանությամբ են պատրաստվել ու հավաքվել գրքում: Եթե բնօրինակը մեքսֆս է, ուրեմն պատրաստվել է ճիշտ նույն փաստաթուղթը՝ մեքսֆսից, մագաղաթ է՝ մագաղաթից: Աղոթագրքի էջը քայքայվել-ծակվել է, ուրեմն կրկնօրինակը պատրաստվել է նույնությամբ:

Ինչպես ասացի, փաստաթղթերի մի մասը հայերեն է, մյուսը՝ օտար լեզուներով, սակայն բոլորն առնչվում են հայոց պատմությանը, անցյալին, մշակույթին, այլ ժողովուրդների հետ հարաբերություններին: Առաջին «Ավետարան», Վենետիկում տպագրված առաջին բառարան, Հայոց պատմության աշխատություն, մի խոսքով՝ Ք.ա. 188 թվականից ի վեր՝ այն ամենն, ինչ գրվել է հայության մասին, գրքում կա: 5 տարի է պահանջվել, մինչեւ այս ամենը հավաքվի, ամբողջացվի, պատրաստվեն բնօրինակների նմանությամբ փաստաթղթեր, բացի այդ, գրքում զետեղված են նաեւ փաստաթղթերի ծանոթագրությունները:

Որոշել ենք գիրքը հրատարակել 6 լեզվով՝ հայերեն, իսպաներեն, անգլերեն, ռուսերեն, իտալերեն եւ ֆրանսերեն:

Այս պահին պատրաստ են «Հավերժական Հայաստանի» իսպաներեն եւ անգլերեն թարգմանությունները՝ նույն ժողովածուում: «Հավերժական Հայաստանը» ինձ հետ տանելու եմ հոկտեմբերի 19-23-ը Ֆրանկֆուրտում կայանալիք գրքի միջազգային տոնավաճառին:

-Հաջող ընթացք «Հավերժական Հայաստանին»: Տիկին Սյուզաննա, վերջին անգամ Հայաստանում 3 տարի առաջ եք եղել: 3 տարի հետո ինչպիսի՞ն գտաք Հայաստանը:

-Գիտեի, որ դժվար է լինելու, բայց մեջս քաջություն գտա ու եկա՝ նախապես մտածելով՝ ինչպիսին էլ տեսնեմ Հայաստանը, պետք է ամուր լինեմ ու դիմանամ: Ես ուզում էի մոտիկից տեսնել հայ ժողովրդին ու Հայրենիքը, որովհետեւ որքան էլ հեռվից հետաքրքրվես Հայաստանով, սեփական աչքով տեսածդ բոլորովին այլ է, զգացածդ այլ է:

Սփյուռքը շատ մտահոգ է Հայաստանի ու հայ ժողովրդի համար, որովհետեւ Սփյուռքը ձեւավորվել է Հայրենիք կորցրած ու արտագաղթած հայերից: Ինքնության հարցն է օդում կախված: Դուք Հայաստանում եք ծնվել, ուրեմն դուք հայ եք: Ես Արգենտինայում եմ ծնվել, բայց արգենտինացի չեմ, ինձ արգենտինացի չեմ զգում: Ես հայ եմ, մկրտված եմ՝ որպես հայ, հայի դրոշմ ունեմ վրաս: Եթե մենք՝ Սփյուռքում ապրողներս, Հայաստան չունենանք, ո՞վ ենք մենք այդ դեպքում: Սփյուռքում հայ եկեղեցին ի՞նչ է, եթե Հայաստան չլինի: Ինչի՞ համար ենք պահպանում հայոց լեզուն, եթե Հայաստան չլինի: Որդիս ահռելի աշխատանք է արել, միլիոններ է ներդրել, 991 օրինակով «Հավերժական Հայաստան» տպագրելը ի՞նչ արժեք ունի, ինչի՞ համար է, եթե մենք Հայաստան չունենանք:

Այս անգամ շատ եմ քայլել Երեւանով: Ես հայոց պատմության գիրք եմ ներկայացնելու գրքի համաշխարհային տոնավաճառին: Գիտե՞ս քանի անգամ ենք ապրել այսպիսի դաժան ժամանակներ, ու այդ գրքում մեր ապրած ծանր ժամանակները կան: Քանի՞ հազարամյակ ենք այս նույնը տեսել. մեր երկիրը միշտ կռվախնձոր է եղել ուրիշների համար:

-Տգնապներով եք եկել Հայաստան ու տգնապներով եք նաեւ հիմա՞:

-Հայաստանը, Երեւանը լեցուն է զբոսաշրջիկներով: Սրճարանները, հյուրանոցները, ռեստորանները մարդաշատ են ու բազմազգ: Բայց խորքում ուրիշ բան է կատարվում: Այն, ինչ տեսնում ենք փողոցներում, խանութներում, սրճարաններում, միայն մակերեսն է, խաբուսիկ: Ամենուր մարդաշատ է, աշխույժ է, լեփ-լեցուն է մարդկանցով, բայց... ձայն չկա, լռություն է: Մարած երկիր տեսա: Փողոցները լուռ են, այս աղմուկի մեջ ձայն չկա, խինդ ու ծիծաղ չկա: Առաջ, երբ գալիս է Հայաստան, տեսնում էի աղջիկ-տղա նստած՝ ծիծաղում են, զրուցում, այս անգամ տարբեր է:

Բայց գիտեմ՝ սա էլ կարդանք, կիաղթահարենք՝ Հավերժական Հայաստա՛նը՝ վկա:

Նորովի բացահայտելով Զաբել Փանոսյանին

«Արմինյն Միրոր-Սփեֆթեյթր» շաբաթաթերթի հոկտեմբերի 1-ի հերթական համարից տեղեկանում ենք, որ առաջիկա հոկտեմբերի 13-ին Ֆրեզնոյի պետհամալսարանի արդյունաբերական տեխնոլոգիաների մասնաշենքում տեղի է ունենալու հայազգի սոպրանո **Զաբել Փանոսյանին** նվիրված երաժշտագետներ **Այան Նագոսկիի** եւ **Հարութ Առաֆելյանի** դասախոսությունը, որին տվել են «Ես քո ձայնի ծառան եմ» խորագիրը, վերցված այդ երկու մասնագետների համահեղինակությամբ լույս տված հատորի վերնագրից՝ «Զաբել Փանոսյան: Ես քո ձայնի ծառան եմ»:



Զաբել Փանոսյանը ծնվել է 1891 թվին Պարսիզակում եւ վախճանվել 1986-ին Նյու Յորքում: Ըստ լրատվության եղել է Ցեղասպանությունից մազապուրծ Ա. սերնդի ամերիկահայ ամենանշանակալի ձայներից մեկը, որ 1917-ի մարտից մինչեւ 1918-ի հունիսը ձայնագրել է 11 երգ Նյու Յորքի Կոլումբիա ձայնագրությունների (Columbia Records) ընկերությունում եւ բարեգործական համերգների միջոցով մեծ գումարներ է հանգանակել ի նպաստ հայ գաղթականների: Սերտորեն համագործակցել է «Տարոնի Սոխակ» հռչակված մեծանուն տենոր **Արմենակ Շահմուրադյանի** հետ: Նրա ձայնագրությունները տարիներ շարունակ ուղեկցել են ունկնդիրներին: Մեծ հաջողությամբ շրջագայել է Եվրոպայում, Փարիզում հանդիպել Կոմիտաս վարդապետին: Դժբախտաբար տասնամյակներ անց նրա կենսագրության եւ ձայնագրությունների պատմությունը մոռացության է մատնվել: Այժմ, շնորհիվ նոր տեխնոլոգիաների կիրառմանը կարծես վերականգնվում է նրա համբավը: Դրա վառ վկայությունն է լույս ընծայումը վերնշված հատորի եւ ամենայն բծախնդրությամբ ամբողջական վերականգնումը նրա ձայնագրությունների:

Այան Նագոսկին երաժշտագետ-հետազոտող է: Վերջին տասնամյակում Բալտիմորում է աշխատում որպես ձայնագրությունների պրոդյուսեր: Առնիվնող դասախոսություններ է կարդացել Վաշինգտոնի կոնգրեսի գրադարանում, Աթենքի Օնասիսի անվան մշակույթի կենտրոնում, ինչպես նաեւ Չիկագոյի, Փենսիլվանիայի եւ Նյու Յորքի համալսարաններում: Վերոնշյալ դասախոսության ժամանակ նա ներկայացնելու է Զաբել Փանոսյանի կյանքն ու գործունեությունը, իսկ Հարութ Առաֆելյանը՝ նրա առնչությունները Ֆրեզնոյի հետ:

Առաֆելյանը տեսաժապավենների թողարկման խմբագիր է, հետազոտող երաժշտագետ: Ապրում է Լոս Անջելեսում եւ դասավանդում Կալիֆորնիա համալսարանում (UCLA): Հոդվածներ է գրում հայկական երաժշտական գոհարների իր կատարած հետազոտությունների մասին:

Հ.Ծ.

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԱ տարի
Հրատարակիչ
«ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ
Երեւան 0010, Եզնիկ Կողբացի 20/3
e-mail: azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հաշվապահութիւն (գովազդ)
հեռ. **010 582960**
Համակարգչային շարուածքը՝
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960
20/3 Yeznik Koghbatsi st.,
Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թեքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Եզնիկ Կողբացի 20/3: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 13.10.2022, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: